

ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2012/2013 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ – 2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	4
Կրթական գործունեություն.....	8
Գիտահետազոտական գործունեություն	36
Գիտական գրադարան.....	42
Հրատարակչական և տպագրական գործունեություն	48
Միջազգային համագործակցություն	54
Հանրային կապեր և տեղեկատվական համակարգեր.....	58
Աշխատանք ուսանողների և շրջանավարտների հետ	67
Սոցիալական քաղաքականություն.....	76
Տնտեսական գործունեություն	79
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ	81
Հավելված 1.....	87
Հավելված 2.....	95

ԵՊՀ խորհրդի մեծարգո՝ նախագահ:

Խորհրդի հարգարժան անդամներ:

2012/2013 ուսումնական տարին Երևանի պետական համալսարանի տարեգրության կարևոր էջերից է: Հաշվետու ժամանակաշրջանում կայացավ մայր բուհի ինստիտուցիոնալ փորձական հավատարմագրման գործընթացը, որին համալսարանը նախապատրաստվել էր բավականին երկար ժամանակ և հետևողականորեն: Գործընթացն սկսեցինք դեռևս 2011/2012 ուստարվա 2-րդ կիսամյակում՝ դրանում ընդգրկելով բուհի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչներին, նրանց թվում նաև ուսանողների: Իրականացվեցին բավականին ծավալուն, բարդ, բայց և նպատակասլաց ու հետևողական աշխատանքներ, որոնց արդյունքում հայերեն և անգլերեն տարբերակներով պատրաստվեցին ԵՊՀ ինստիտուցիոնալ ինքնագնահատման և ԵՊՀ ծրագրային ինքնագնահատման (բակալավրի և մագիստրոսի մեկական կրթական ծրագրի համար) զեկույցներ, որոնք ներկայացվեցին փորձագետներին: Արդեն հաշվետու ուստարվա ավարտին (2013 թ. հունիսին) տեղի ունեցավ փորձագիտական խմբի այցը ԵՊՀ, և իրականացվեց փորձական հավատարմագրման գործընթացը (ինչին ավելի մանրամասն կանդրադառնանք սույն հաշվետվությունում):

Հաշվետու ուստարում համալսարանում կրթական գործընթացի կազմակերպումն իրականացվել է ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված խնդիրներին ու նպատակներին համապատասխան:

Շարունակվել են աշխատանքները ԵՊՀ-ում որակի ապահովման ներքին մեխանիզմների ներդրման և որակի շարունակական բարելավման ուղղությամբ: Իրականացվել են կրթության կազմակերպման աշխատանքների բարելավման և մեթոդների նորացման, կրթության բովանդակության հարստացման և որակի բարձրացման, միջազգային չափանիշներին դրանց համապատասխանեցման ուղղությամբ մի շարք գործընթացներ: Ուսումնական գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով կատարվել են կառուցվածքային մի շարք փոփոխություններ, ներդրվել են նոր մասնագիտություններ ու կրթական ծրագրեր:

Անցած ուսումնական տարում նաև բացվել, վերակազմավորվել կամ լուծարվել են առանձին կառուցվածքային ստորաբաժանումներ: Այսպես, անալիտիկ քիմիայի և անօրգանական քիմիայի ամբիոնները միավորվել և կազմավորել են անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնը, ԵՊՀ ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնը և ՌԴ Միբիբի դաշնային համալսարանը ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում համատեղ հիմնադրել են ֆիզիկական էկոլոգիայի միջազգային լաբորատորիան, ԵՊՀ որակի ապահովման կենտրոնին կից ստեղծվել է համալսարանական կրթության ինստիտուցիոնալ հետազոտությունների լաբորատորիան, բուսաբանության ամբիոնը վերանվանվել է բուսաբանության և սնկաբանության ամբիոն, ակտուարական մաթեմատիկայի ամբիոնը՝ ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի ամբիոն, ստեղծվել են մասս-մեդիայի կրթական կենտրոնը (Հայաստանի հանրային հեռուստաընկերության հետ համատեղ), գենդերային և առաջնորդության ուսումնասիրությունների կենտրոնը (Արիզոնայի համալսարանի հետ համատեղ «Կանանց առաջնորդության ծրագրի» շրջանակներում): ԵՊՀ գիտխորհրդին կից ստեղծվել են Էթիկայի մշտական հանձնաժողով և Ձեռնարկությունների հետ համագործակցությունն ապահովող մշտական հանձնաժողով: Միաժամանակ, լուծարվել է պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգագրության ամբիոնին կից գործող հնագիտության լաբորատորիան, իսկ սփյուռքագիտության ամբիոնը հայ բանասիրության ֆակուլտետից տեղափոխվել է պատմության ֆակուլտետ:

Ծավալուն աշխատանքներ են իրականացվել նաև գիտական բնագավառում: Շարունակվել են նախկինում սկսված բազմաթիվ ծրագրեր, գործողության մեջ են դրվել նորերը, իրականացվել են տարբեր չափերի դրամաշնորհներ, որոնց մասնակցել են թե՛ բազմաթիվ դասախոսներ ու գիտաշխատողներ և թե՛ ուսանողներ ու ասպիրանտներ:

Համալսարանականների կատարած գիտահետազոտական բազմաթիվ աշխատանքների արդյունքներ գեկուցումների և հաղորդումների տեսքով ներկայացվել են ինչպես ֆակուլտետային ու համահամալսարանական, այնպես էլ հանրապետական և միջազգային գիտաժողովներում ու կոնֆերանսներում, արժանացել բարձր գնահատականների, տեղ գտել տեղական և արտասահմանյան հրատարակություններում: Արժեքավոր ուսումնասիրություններ են կատարվել ԵՊՀ հայագիտական

հետազոտությունների ինստիտուտում: Առանձնակի ուշադրություն է հատկացվել օրակարգային դարձած ազգային-պետական մի շարք կարևոր հիմնահարցերի (հայրությամբ հարաբերությունների հաստատման և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացներ, Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորում և այլն):

Արդյունավետ է եղել ԵՊՀ գործունեությունը հրատարակչական ոլորտում: Տպագրվել է 160 անուն գիրք՝ 41250 տպաքանակով: Կանոնավոր պարբերականությամբ լույս են տեսել գիտական հանդեսները:

ԵՊՀ-ն արդյունավետորեն շարունակել է համագործակցությունը արտերկրի բազմաթիվ գիտակրթական ու մշակութային կենտրոնների հետ, կնքել համագործակցության նոր պայմանագրեր: Իրականացվել են համատեղ կրթական, գիտական, մշակութային ծրագրեր ու միջոցառումներ, դասախոսների և ուսանողների փոխանակության, տարաբնույթ միջոցառումների անցկացման, թեմատիկ աշխատանքների կազմակերպման մի շարք ծրագրեր: Հաշվետու ժամանակաշրջանում Երևանի պետական համալսարանում հյուրընկալվել են պետական ու հասարակական բազմաթիվ գործիչներ, Հայաստան այցելած տարբեր երկրների ղեկավարներ, հանրապետությունում գործող արտասահմանյան դիվանագիտական կենտրոնների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Բուհի ղեկավարության ուշադրության կենտրոնում եղել ու մնում են համալսարանականների սոցիալական վիճակի բարելավման հարցերը: Միջոցառումներ են ձեռնարկվել մասնավորապես առավել կարիքավոր ուսանողներին և աշխատակիցներին նյութական աջակցություն ցույց տալու, ինչպես և համալսարանականների հանգստի կազմակերպման ուղղությամբ:

Հետևողական աշխատանքներ են իրականացվել նաև տնտեսական և ենթակառուցվածքների զարգացման ոլորտում: ԵՊՀ տարբեր մասնաշենքերում, ուսումնասիրատարական և հանգստի բազաներում կատարվել են բարեկարգման ու վերանորոգման ծավալուն աշխատանքներ, ձեռնարկվել են միջոցառումներ նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ, բարելավվել են ներքին տեղեկատվական ցանցի աշխատանքները, ձեռք են բերվել ժամանակակից սարքավորումներ և այլն:

Անընդհատ և հետևողական աշխատանքներ են տարվել հասարակության հետ կապերի արդյունավետ զարգացման, ԵՊՀ-ի վարկանիշի և հեղինակության բարձրացման ուղղությամբ:

Ակտիվ և արդյունավետ են գործել ուսանողական կազմակերպությունները՝ ընդգրկվելով համալսարանական բոլոր գործընթացներում:

Տարեցտարի ավելի նկատելի են դառնում և ուրախացնում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի առաջընթացը և ձեռքբերումները:

Ստորև հանգամանորեն ներկայացվում է 2013/2013 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանի գործունեությունը՝ ըստ ոլորտների:

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2012/2013 ուստարում Երևանի պետական համալսարանում շարունակվել են աշխատանքները ծրագրային բարեփոխումների, ուսումնական գործընթացի կազմակերպման ու պլանավորման կատարելագործման, եվրոպական չափորոշիչներին համահունչ որակի ներքին ապահովման համակարգի ստեղծման, դասավանդման և ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացների բարելավման և մի շարք այլ ուղղություններով:

2012/2013 ուստարում համալսարանի ուսումնակրթական գործունեությունը իրականացվել է հետևյալ հիմնական ուղղություններով:

1. Որակի ապահովում

ԵՊՀ ռազմավարական հիմնական նպատակներից մեկը կրթության որակի բարելավումն է: Հաշվետու ուստարում ԵՊՀ-ում շարունակվել են աշխատանքները որակի ապահովման չափանիշների, չափորոշիչների և ընթացակարգերի ներդրման, որակի շարունակական բարելավման ուղղությամբ: Այդ առումով համալսարանական այլ ստորաբաժանումների հետ համատեղ զգալի աշխատանք է կատարել ԵՊՀ որակի ապահովման կենտրոնը (ՈԱԿ), որի հիմնական առաքելությունը որակի ապահովման գործընթացներում ներգրավված կառույցների գործունեության համակարգումը և որակի ներքին ապահովման գործընթացների ու մեխանիզմների գործադրումն է: Որակի ապահովման գործընթացները համակարգվել են հետևյալ ուղղություններով.

- I. Որակի ներքին ապահովման կանոնակարգային բազայի ստեղծում:
- II. ԵՊՀ ինքնագնահատման համակարգի կազմակերպում և հավատարմագրման գործընթացի իրականացում:

I. Որակի ներքին ապահովման կանոնակարգային բազայի ստեղծում

Շարունակվել են աշխատանքները ԵՊՀ որակի ներքին ապահովման ինստիտուցիոնալ կառույցների ստեղծման և համապատասխան կանոնադրական/կանոնակար-

գային հենքի մշակման ուղղությամբ: Արդեն իսկ գործում էր ԵՊՀ որակի ապահովման կենտրոնը, ստեղծվել են նաև որակի ապահովման ինստիտուցիոնալ և ֆակուլտետային կառույցներ՝ ԵՊՀ ԳԻՍ որակի ապահովման մշտական հանձնաժողովը՝ բաղկացած 7 անդամից, և ֆակուլտետային ԳԻՍ որակի ապահովման մշտական հանձնաժողովները (19 հանձնաժողով, յուրաքանչյուրում՝ 4 անդամ պրոֆեսորադասախոսական կազմից և մեկ ուսանող), որոնց գործունեությունը միտված է համալսարանում որակի ապահովման գործընթացների արդյունավետ իրականացմանը:

ԵՊՀ որակի ապահովման կանոնադրական/կանոնակարգային, կազմակերպչական և մեթոդական հենքի ստեղծման նպատակով մշակվել և գիտխորհրդի կողմից հաստատվել են կանոնադրական և հայեցակարգային մի շարք փաստաթղթեր, կատարվել են համապատասխան աշխատանքներ: Մասնավորապես, մշակվել և հաստատվել են ԵՊՀ ՈԱ կենտրոնի կանոնադրությունը, ԵՊՀ ԳԻՍ ՈԱ մշտական հանձնաժողովի աշխատակարգը, «ԵՊՀ որակի ապահովման հայեցակարգը»: Ստեղծվել են «ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման ղեկավար ձեռնարկը», «ԵՊՀ ուսանողի գնահատման ուղեցույցը»: Մշակվել են «ԵՊՀ-ում ուսանողների գնահատման վերաբերյալ հարցման կանոնակարգ» և համապատասխան հարցաշար-ձևաթերթ, «ԵՊՀ դասընթացների գնահատման հարցման կանոնակարգ» և համապատասխան հարցաշար-ձևաթերթ, «ԵՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգ», «ԵՊՀ դասախոսական կազմի տարեկան գործունեության գնահատման ղեկավար ձեռնարկ» և այլն:

Պետբյուջեից գիտական գործունեության բազային ֆինանսավորման շրջանակներում 2012 թ. ԵՊՀ ՈԱ կենտրոնին կից ստեղծվել է «Համալսարանական կրթության ինստիտուցիոնալ հետազոտությունների լաբորատորիա», որը ղեկավարում է ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյանը: Լաբորատորիայի հետազոտությունների հիմնական ոլորտը ՀՀ բարձրագույն կրթության արդիականացման հիմնախնդիրներն են եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ինտեգրման համատեքստում: Լաբորատորիայի 2012/2013 ուստարվա գործունեությունը հիմնականում նպատակաուղղված է եղել ՀՀ բարձրագույն կրթության համակարգում և ԵՊՀ-ում իրականացվող բարեփոխումների և առկա գործընթացների ընթացքի գնահատմանը, խոչընդոտող գործոնների ու հիմնախնդիրների բացահայտ-

մանը, կարիքների վերհանմանը և բարելավող միջոցառումների ու երաշխավորությունների առաջադրմանը հետևյալ ոլորտներում.

- ԵՊՀ գործունեության արդյունավետության գնահատում,
- ԵՊՀ շրջանավարտների բավարարվածության ուսումնասիրություն,
- ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների շրջանակի վերանայման առաջարկությունների փաթեթի կազմում:

II. ԵՊՀ ինքնագնահատման համակարգի կազմակերպում և հավատարմագրման գործընթացի իրականացում

Հաշվետու ուստարում ԵՊՀ-ում շարունակվել և իրականացվել են մի շարք աշխատանքներ ինքնագնահատման համակարգի ստեղծման և գործադրման ուղղությամբ: Մասնավորապես, ստեղծվել է համալսարանի ինստիտուցիոնալ ինքնագնահատման հանձնաժողով՝ բաղկացած 7 անդամից: Ձևավորվել է ինքնագնահատման աշխատանքային 10 խումբ (յուրաքանչյուրը՝ 4-ական անդամով): Միաժամանակ ստեղծվել է ծրագրային ինքնագնահատման աշխատանքային խումբ՝ կազմված 10 անդամից: Ստեղծվել է անհրաժեշտ մեթոդաբանական հենք՝ արդյունավետ ինքնագնահատում իրականացնելու համար, կազմվել է «ԵՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնագնահատման ուղեցույց»: Կազմակերպվել և անցկացվել են ինքնագնահատման գործընթացների իրականացման պատասխանատու կազմերի վերապատրաստումներ, ապահովվել է ուսանողների ներգրավումը ինքնագնահատման գործընթացներում: Ի վերջո՝ իրականացվել է պիլոտային ինքնագնահատման գործընթաց համալսարանի և մեկ ֆակուլտետի մակարդակում: Հայերեն և անգլերեն տարբերակներով պատրաստվել են «ԵՊՀ ինստիտուցիոնալ ինքնագնահատման զեկույց-2013» և «ԵՊՀ ծրագրային ինքնագնահատման զեկույց-2013» («Կենսաբանություն»՝ բակալավրի և «Գենետիկա»՝ մագիստրոսի կրթական ծրագրեր): Զեկույցները ներկայացվել են փորձագետներին, որից հետո տեղի է ունեցել փորձագիտական խմբի այցը Երևանի պետական համալսարան:

Վերորոնշյալ աշխատանքները հիմնականում համակարգել է ՈԱ կենտրոնը, որի աշխատակիցները մասնակցել են ոլորտին վերաբերող թեմաներով անցկացված մի

շարք գիտաժողովների և սեմինարների, ինչպես նաև հանրապետությունում և արտերկրում կազմակերպված վերապատրաստումների:

ՀՀ ԿԳՆ «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի «Որակի ապահովման ներբուհական համակարգերի ներդրում կամ դրանց հետագա բարելավում» դրամաշնորհային ծրագրով 2012 թ.-ից ԵՊՀ-ում իրականացվում է «ԵՊՀ որակի ներքին ապահովման համակարգի զարգացում և ինքնագնահատման գործընթացի ներմուծում» նախագիծը, որի նպատակն է բարելավել և զարգացնել ԵՊՀ որակի ներքին ապահովման կառույցները և ընթացակարգերը, ներդնել բուհական ինքնագնահատման գործող համակարգ, որը կնպաստի որակի ներքին մշակույթի ձևավորմանը: Նախագծի շրջանակներում նախորդ ուստարում լուծվել են հետևյալ խնդիրները.

- ԵՊՀ որակի ներքին ապահովման հայեցակարգի (քաղաքականության) լրամշակում, համապատասխան կառույցների հիմնում և ԵՊՀ որակի ապահովման ուղեցույցի (ձեռնարկի) մշակում:
- Կրթական ծրագրերի որակի ապահովման և շարունակական բարելավման պաշտոնական ընթացակարգերի լրամշակում և գործադրում:
- Ուսանողների գնահատման թափանցիկ և արժանահավատ մեթոդաբանության մշակում:
- Դասախոսական կազմի որակի գնահատման չափանիշների և որակի ապահովման ընթացակարգերի ստեղծում:
- ԵՊՀ ինստիտուցիոնալ և ծրագրային ինքնագնահատման գործընթացների ներմուծում, գործադրում և ինքնագնահատման զեկույցների պատրաստում:

Ինչպես արդեն նշվեց, վերոնշյալ գործընթացների արդյունքում, անցած ուստարվա ավարտին (հունիսին) տեղի ունեցավ Երևանի պետական համալսարանի փորձնական հավատարմագրման գործընթացը: Համառոտ ներկայացնենք այն:

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄԸ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

ա) Ինստիտուցիոնալ հավատարմագրում

Երևանի պետական համալսարանում ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը մեկնարկեց 2012 թ. մարտին, որն իրականացվեց ՀՀ կառավարության կողմից 2011 թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ միջին և բարձրագույն մասնագիտական հիմնական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների պետական հավատարմագրման կարգի» համաձայն:

ԵՊՀ ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացներն իրականացվեցին հավատարմագրման և որակի ապահովման գործընթացներին աջակցելու նպատակով՝ Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող ՏՀա-յաստանում որակի ապահովման տեխնիկական աջակցություն¹ ծրագրի շրջանակներում, որն իրագործվում է ՈԱԱԿ-ի և NVAO (Nederlands Vlaamse Accreditatie organisatie) նիդերլանդական անկախ հավատարմագրող կազմակերպության համատեղ ջանքերով:

Գործընթացի առաջին փուլում՝ 2012 թ. մարտին, ստեղծվեց ինքնագնահատման գործընթացն իրականացնող հանձնաժողով, որում ընդգրկված էին ներկայացուցիչներ և՛ արտաքին շահեկիցներից, և՛ ուսանողներից: Հանձնաժողովի հիմնական առաքելությունը ինքնագնահատման գործընթացի կազմակերպումը և համակարգումն էր: Ինստիտուցիոնալ ինքնագնահատման գործընթացն իրականացնելու համար ստեղծվեցին տասը աշխատանքային խմբեր՝ ինքնագնահատումը ՀՀ Կառավարության կողմից սահմանված հավատարմագրման 10 չափանիշների համաձայն իրականացնելու համար: Աշխատանքային խմբերում ներգրավված էին ներկայացուցիչներ բոլոր շահագրգիռ շրջանակներից՝ վարչական և դասախոսական կազմերից, ինչպես նաև ուսանողներից: Հարկ է նշել, որ ինքնագնահատման գործընթացի իրականացման ու համապատասխան զեկույցի պատրաստման նպատակով NVAO նիդերլանդական կազմակերպության կողմից պարբերաբար իրականացվում էին վերապատրաստումներ և տրամադրվում խորհրդատվություն: Արդյունքում կազմվեց ԵՊՀ ինքնագնահատման զեկույցի նախնական տարբերակը, որը հրապարակվեց և տա-

րածվեց ԵՊՀ ներքին և արտաքին շահեկիցների շրջանում՝ ծանոթանալու և առաջարկություններ ու դիտողություններ ներկայացնելու համար: Այնուհետև, վերջնամշակված զեկույցը ներկայացվեց Որակի ապահովման ազգային կենտրոն (ՈԱԱԿ) և միջազգային փորձագիտական խմբին՝ ուսումնասիրության համար:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի վերջնական փուլում՝ ս. թ. հունիսի 16-19-ը, կայացավ փորձագիտական խմբի այցը ԵՊՀ: Փորձագիտական խմբում ներգրավված էին երկու միջազգային և երեք տեղական փորձագետներ: Խմբի ղեկավարն էր պրոֆեսոր Բեն Վան Կամպը (Բրյուսելի Ազատ համալսարանի նախկին ռեկտոր):

Փորձագիտական այցի շրջանակներում տեղի ունեցան փակ հանդիպումներ ԵՊՀ արտաքին և ներքին շահեկիցների տարբեր խմբերի հետ: Փորձագիտական խմբի ղեկավար պրոֆեսոր Բեն Վան Կամպը և խմբի բոլոր անդամները այցի ավարտին կայացած ամփոփիչ հանդիպման ժամանակ փաստեցին փորձագիտական այցի բացառիկ կազմակերպվածությունը, անմիջական և անկաշկանդ շփումները, ինչպես նաև ուսանողների պատրաստվածությունն ու իրազեկվածությունը:

2013 թ. սեպտեմբերին ԵՊՀ-ին ներկայացվեց փորձագիտական խմբի զեկույցը՝ ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման համար: Փորձագիտական խումբը, ընդհանուր առմամբ, դրական է գնահատել ԵՊՀ գործունեությունն ըստ պետական հավատարմագրման 10 չափանիշների, բացառությամբ՝ գիտական գործունեության, որի հիմնական պատճառներից մեկը, թերևս, գիտության ֆինանսավորման խիստ ցածր ծավալներն են:

Փորձագիտական զեկույցում փորձագետները բարձր են գնահատել Երևանի պետական համալսարանի ինքնավերլուծության զեկույցի կառուցվածքը, անաչառ տեղեկատվությունն ու ինքնաքննադատական մոտեցումը, ինչպես նաև ԵՊՀ ջանքերը՝ բուհում որակի ներքին ապահովման գործընթացների ներդրման ուղղությամբ: Զեկույցում կարևորվել է այն հանգամանքը, որ ԵՊՀ-ն ունի հստակ սահմանված նպատակներ, որոնք բխում են նրա առաքելությունից և տեսլականից: Բարձր է գնահատվել նաև ԵՊՀ գործունեության առանցքային ցուցանիշների համակարգի առկայությունը, որը համալսարանի բաց և թափանցիկ գործունեության երաշխիքներից է: Կարևորվել է նաև ԵՊՀ-ի կողմից հակակոռուպցիոն ծրագրերի իրականացումը:

Կրթական ոլորտում որպես ուժեղ կողմեր նշվել են պրոֆեսորադասախոսական կազմի բարձր պատրաստվածությունը, մոտիվացվածությունը և փոխադարձ սերտ համագործակցությունը, ինչպես նաև ուսանողների բավարարվածության բարձր մակարդակը դասավանդման որակից: Կարևորվել է նաև ուսանողների գիտելիքների գնահատման համակարգի թափանցիկությունը և անաչառությունը: ԵՊՀ-ն անցել է ուսանողակենտրոն ուսուցման, սահմանել է կրթական ծրագրերի և դասընթացների վերջնարդյունքներ, ինչն առաջընթաց քայլ է դեպի Եվրոպական բարձրագույն կրթական տարածք: Ձեկույցում նշվել է նաև, որ ԵՊՀ-ն այս ոլորտում դեռևս անելիքներ ունի. կրթական ծրագրերի կառուցվածքում ներառված չէ հետազոտական բաղադրամասը, ինչը խոչընդոտում է գիտության և կրթության փոխկապակցվածությունը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատել ուսանողների լայն ընդգրկվածությունը համալսարանի կառավարման մարմիններում և մասնակցությունը որոշումների կայացմանը: Փորձագետների դիտարկմամբ՝ ԵՊՀ-ն, չնայած իր սուղ ֆինանսական միջոցներին, կարողացել է ստեղծել արդի պահանջներին համապատասխան կրթական միջավայր՝ ուսումնառության ռեսուրսներով և օժանդակ ծառայություններով (հարուստ գրադարան, SS սարքավորումներ), որոնցից ուսանողների բավարարվածությունը բավականին բարձր է:

Փորձագիտական խումբը փաստել է, որ ԵՊՀ-ն եղել և մնում է գիտելիքի և բարոյական արժեքների հիմնական կրողը և փոխանցողը երկրում: Հատկապես արձանագրվել են ԵՊՀ ձեռքբերումները բնագիտության ոլորտում: Չնայած այս փաստին՝ ԵՊՀ-ն որոշակի անելիքներ ունի հետազոտության միջազգայնացման ուղղությամբ: Դեռևս ցածր է մնում միջազգային գրախոսվող հանդեսներում հրապարակումների թիվը, հատկապես՝ հումանիտար ուղղություններով:

Առանձնակի ուշադրության է արժանացել նաև ԵՊՀ հարուստ կայքէջը, որը համալսարանի գործունեությունը հասանելի է դարձնում լայն հանրությանը, նաև՝ միջազգային ասպարեզում:

Ձեկույցում փորձագիտական խումբը նշել է նաև մի շարք բացթողումներ. համալսարանական գործընթացներում արտաքին շահեկիցների ներգրավվածության ցածր մակարդակը, հատուկ կարիք ունեցող ուսանողների համար պայմանների բացակայությունը, պրոֆեսորադասախոսական կազմի՝ օտար լեզվի իմացության ոչ բավարար

մակարդակը, որակի ապահովման մշակույթի դեռևս ոչ լիարժեք ձևավորված լինելու հանգամանքը և այլն:

Փորձագիտական խումբը, ամփոփելով ԵՊՀ գործունեության ձեռքբերումները և բացթողումները, առաջարկել է մի շարք երաշխավորություններ, որոնք կնպաստեն համալսարանի հետագա արդյունավետ գործունեությանը և առաջընթացին: Փորձագետները մասնավորապես նշել են, որ պետք է ամրապնդել կապը աշխատաշուկայի հետ, մշակել նոր միջառարկայական ծրագրեր, որոնք կնպաստեն գիտության և կրթության կապի զարգացմանը, ինչպես նաև կարևոր խթան կհանդիսանան հետազոտության միջազգայնացման համար: Որակի ապահովման համակարգի հետագա բարելավման համար կարևորվել է արտաքին միջազգային անկախ փորձագետների ներգրավումը պարբերաբար իրականացվող արտաքին գնահատման գործընթացներում, ինչպես նաև տվյալների հավաքագրման ամբողջական համակարգի ներդրումը՝ նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ:

Երևանի պետական համալսարանը դրական է գնահատում փորձնական հավատարմագրման ողջ գործընթացը, քանի որ այն օգնեց մեկ անգամ ևս վերանայելու և վերազնահատելու համալսարանում ընթացող բոլոր գործընթացները և նախանշելու հետագա զարգացման և առաջընթացի համար անհրաժեշտ քայլերը և գործողությունները:

բ) Ծրագրային հավատարմագրում

ԵՊՀ-ում ծրագրային փորձնական հավատարմագրումն իրականացվել է կենսաբանության ֆակուլտետի «Կենսաբանություն»՝ բակալավրի և «Գենետիկա»՝ մագիստրոսի կրթական ծրագրերի համար: Գործընթացն իրականացվել է 2012 թ. նոյեմբերի 14-ից մինչև 2013 թ. ապրիլի 2-ն ընկած ժամանակահատվածում: Այդ ընթացքում, մինչև գործընթացի վերջնական փուլը (2013թ. մարտ) Նիդերլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման կազմակերպությունը (NVAO) տեխնիկական աջակցություն և ուղղորդում է ցուցաբերել համապատասխան ինքնավերլուծության զեկույց գրելու համար:

Որպես գործընթացի առաջին քայլ՝ ԵՊՀ ղեկավարության որոշմամբ կազմվեց ինքնավերլուծությունն իրականացնող թիմ՝ ֆակուլտետի ղեկանի ղեկավարությամբ, որտեղ ներգրավվեցին ամբիոնների վարիչները, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցիչներ: Ստեղծվեցին 5 աշխատանքային խմբեր, որոնք իրականացնում էին և՛ բակալավրի, և՛ մագիստրոսի կրթական ծրագրերի ինքնավերլուծությունը՝ համաձայն ՀՀ Կառավարության սահմանած ծրագրային հավատարմագրման 7 չափանիշների:

Նշված ծրագրերի հավատարմագրման գործընթացում ներգրավված անձինք մասնակցել են որակի ներքին ապահովման վերաբերյալ երկօրյա վերապատրաստմանը, որի ընթացքում պարզաբանվել են մի շարք հարցեր՝ որակի ապահովման շրջանակը, ինքնավերլուծության զեկույց գրելու գործընթացը, փորձաքննության կազմակերպումը և որակի արտաքին գնահատումը:

Աշխատանքային խմբերի համատեղ աշխատանքի արդյունքում կազմվեց ինքնագնահատման զեկույցի նախնական տարբերակը, որը հրապարակվեց և ներկայացվեց ֆակուլտետի, ինչպես նաև ԵՊՀ ներքին շահեկիցների շրջանում՝ ծանոթանալու և առաջարկություններ ու դիտողություններ անելու համար: Արդյունքում, վերջնամշակված զեկույցը ներկայացվեց Որակի ապահովման ազգային կենտրոն (ՈԱԱԿ) և միջազգային փորձագիտական խմբին՝ ուսումնասիրության համար:

Ծրագրային հավատարմագրման գործընթացի վերջնական փուլում՝ ս. թ. հունիսի 19-21-ը, կայացավ փորձագիտական խմբի այցը ԵՊՀ: Փորձագիտական խմբում ներգրավված էին մեկ միջազգային և երեք տեղական փորձագետ: Խմբի ղեկավարն էր պրոֆեսոր Յան Քայնեն (Նիդերլանդներ):

Փորձագիտական այցի շրջանակներում տեղի ունեցան փակ հանդիպումներ կենսաբանության ֆակուլտետի վերոնշյալ ծրագրերն իրականացնող վարչական աշխատողների, պրոֆեսորադասախոսական և ուսումնասօժանդակ կազմերի, ուսանողների և ուսանողներին սպասարկող աշխատակիցների հետ: Փորձագիտական խմբի ղեկավար պրոֆեսոր Յան Քայնեն և խմբի բոլոր անդամներն այցի ավարտին կայացած ամփոփիչ հանդիպման ժամանակ փաստեցին փորձագիտական այցի բացառիկ կազմակերպվածությունը, անմիջական և անկաշկանդ շփումները, ինչպես նաև ուսանողների պատրաստվածությունն ու իրազեկվածությունը:

2013 թ. սեպտեմբերին ներկայացվեց ծրագրային հավատարմագրման փորձագիտական խմբի զեկույցը: Փորձագիտական խումբը, ընդհանուր առմամբ, դրական է գնահատել կենսաբանության ֆակուլտետի գործունեությունն ըստ պետական հավատարմագրման 7 չափանիշների, բացառությամբ ներկայացված երկու ծրագրի որակի ապահովմանը և «Կենսաբանություն»՝ բակալավրի ծրագրի կառուցվածքին ու բովանդակությանը վերաբերող չափանիշների, որոնց տվել են բացասական գնահատական: Փորձագիտական խումբը նկատել է, որ «Կենսաբանություն» ծրագրի բարելավումը վերաբերում է ավելի շատ կրթական գործընթացին, քան ծրագրի բովանդակությանը: Ժամանակակից կենսաբանությունը վերաբերում է կենսական համակարգի միասնությանը և տարածված սկզբունքներին ու երևույթներին: Ներկայիս ծրագիրը չի արտացոլում այս միասնությունը: Ծրագիրը մասնատված է (ինչպես երևաց ինքնավերլուծությունից և հարցազրույցներից) և հաջորդական չէ:

Փորձագիտական խումբը խորհուրդ է տվել պրոֆեսորադասախոսական կազմին՝ կենսահամակարգի տարբեր ասպեկտներ մեծ քանակությամբ մոդուլներով դասավանդելու փոխարեն լրջորեն վերանայել կրթական ծրագրի մշակումը՝ հիմնվելով առանցքային այնպիսի թեմաների վրա, ինչպիսին է, օրինակ, «կյանքի ծառը»: Նման արդիականացված ծրագիրը կունենա լրացուցիչ առավելություններ: Այն կխթանի միջազգայնացումը և միջառարկայական համագործակցությունը: Իսկ ուսանողներին ներգրավելով ծրագրի մշակման գործընթացում՝ դասախոսական կազմը կարող է նրանց ապահովել արժեքավոր կրթական փորձով: Ինչ վերաբերում է որակի ապահովման համակարգին, ապա փորձագիտական խումբը գնահատել է որակի մշակույթի հետևյալ բաղադրիչը՝ համընդհանուր արժեքներ և ընդհանուր պատկերացում այն մասին, թե որն է կրթության դերը ակադեմիական կրթության և հետազոտության մեջ: Այնուամենայնիվ, այս մշակույթը չի համապատասխանում իրավունքների, պարտականությունների և պատասխանատվությունների հստակության արդի պահանջներին: Ներկայումս կենսաբանության ֆակուլտետի որակի ներքին ապահովման համակարգը հիմնված է ԵՊՀ որակի ապահովման ռազմավարության վրա: Համակարգի տարատեսակ բաղադրիչներ նշվել են ինքնավերլուծական զեկույցում: Դրանցից են ուսումնամեթոդական հանձնաժողովը, ղեկավարները/կուրատորները, ուսանողական և գիտական խորհուրդների համակարգի վերանայումը:

Այդուհանդերձ, ակնհայտ է, որ համակարգը գտնվում է զարգացման փուլում, և ներկայումս դրա արդյունավետությունը վերջնականորեն հնարավոր չէ գնահատել: Ֆակուլտետը քաջատեղյակ է այս մասին և կանխատեսել է դա ներկա իրավիճակի համար՝ կազմավորելով որակի ապահովման հանձնաժողով, որի գործառույթը որակի ապահովման տարբեր գործողություններ համակարգելն է: Համակարգման ազդեցությունը շուտով կարող է տեսանելի լինել: Փորձագիտական խումբը հույս է հայտնել, որ ֆակուլտետը հասկանում է, որ ինքնավերլուծական զեկույցը նախնառաջ արժեքավոր ներքին ռազմավարական փաստաթուղթ է և ոչ բյուրոկրատական նախադրյալ՝ հավատարմագրման համար:

Փորձագիտական զեկույցում փորձագետները բարձր են գնահատել ծրագրային ինքնավերլուծության զեկույցի կառուցվածքը, անաչառ տեղեկատվությունն ու ինքնաքննադատական մոտեցումը:

Որպես «Կենսաբանություն» բակալավրի և «Գենետիկա» մագիստրոսի կրթական ծրագրերի ուժեղ կողմեր՝ նշվել են կրթական ծրագրերի համապատասխանությունը կրթական չափորոշիչներին և դրանց իրականացման կոլեգիալ, խրախուսող և արդյունավետ մթնոլորտը, դասախոսական կազմի իրազեկվածությունը առկա թերությունների մասին և ֆակուլտետում առկա հիմքերի հետագա բարելավման համար: Փորձագիտական խումբը նաև նշել է, որ կրթական ծրագրերը նպաստում են արդյունավետ դասավանդմանը և ուսումնառությանը: Բացահայտվել է խթանող կրթական միջավայր, որն ապահովում է կայուն հիմք ակադեմիական կրթության համար: Կրթական դրույթների որակը աստիճանաբար բարելավվում է, և դասախոսական կազմը գիտի՝ ինչ անել հետագա զարգացման համար:

Փորձագիտական խմբի զեկույցում որպես թույլ կողմեր են նշվել նաև «Կենսաբանություն» ծրագրի կառուցվածքը, կենսաբժշկական գիտությունների մասնագիտացման բացակայությունը և ուսանողների համար հետազոտական հնարավորությունների սահմանափակ լինելը, միջազգային հետազոտություններում դասախոսների ընդգրկվածության ոչ բարձր մակարդակը, որակի ներքին ապահովման համակարգի ոչ կատարյալ լինելը և այլն:

Փորձագիտական խումբը, ամփոփելով կատարված աշխատանքները, առաջարկել է մի շարք երաշխավորություններ, որոնք կնպաստեն կրթական ծրագրերի հետա-

գա կատարելագործմանը և որակի ապահովման ներքին համակարգի զարգացմանը: Փորձագետները հատկապես նշել են, որ պետք է ընդլայնել ուսանողներին հետազոտական աշխատանքներում անմիջականորեն ներգրավելու հնարավորությունը: Նաև խորհուրդ է տվել բակալավրի ծրագրի առաջին տարվա սկզբին կենսաբանության ընդհանուր հասկացությունները ներկայացնել ուսանողներին, բարելավել և արդիականացնել ծրագրերը: Ուսանողների կողմից կառուցողական ներդրումը նույնպես անհրաժեշտ է, իսկ պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողները պետք է համագործակցեն կրթական ծրագրերի մշտադիտարկման և պարբերաբար վերանայման գործընթացներում:

Իր հերթին՝ Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետը դրական է գնահատել փորձնական հավատարմագրման ողջ գործընթացը, քանի որ այն օգնեց մեկ անգամ ևս վերլուծաբար ուսումնասիրելու և գնահատելու ֆակուլտետում տարվող կրթական ծրագրերի արդյունավետությունը, արդիականությունը և մատուցվող կրթության որակը, ինչպես նաև հիմք դնել կրթական ծրագրերի հետագա բարելավմանն ուղղված գործողությունների իրականացմանը:

* * *

Կրթության որակի շարունակական բարելավմանը նպաստող կարևոր գործոններից են դասավանդման արդյունավետության վերաբերյալ իրականացվող ուսանողական կիսամյակային հարցումները և ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության ամենամյա հարցումները: Դրանց միջոցով նաև փորձ է արվել բացահայտելու կոռուպցիոն երևույթների տարածվածության աստիճանը՝ դրանց վերացման ուղղությամբ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու համար:

2012/2013 ուստարում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական կիսամյակային հարցումներին մասնակցել է բակալավրիատի և մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի 8318 ուսանող, որը կազմում է այդ համակարգի ուսանողության մոտ 76,7 %-ը: Հարցումների արդյունքում թե՛ հումանիտար, թե՛ բնագիտական մասնագիտությունների գծով միջին թվաքանակական միա-

վորը կազմել է 4,52: Հաշվետու ուստարում ևս ուսանողական հարցման արդյունքներն օգտագործվել են դասախոսների պաշտոնավարման և առաջխաղացման համար անցկացվող մրցույթներում: ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցումներին 2012/2013 ուստարում մասնակցել է բակալավրիատի 1859 և մագիստրատուրայի 909 շրջանավարտ, որոնց արդյունքները որոշակի դեր են ունեցել ուսումնական ծրագրերի և ուսումնական միջավայրին ուղղված միջոցառումների մշակման համար:

Աշխատաշուկայի պահանջումներին համապատասխան մասնագետների պատրաստումը բարձրորակ կրթության ապահովման կարևոր պայմաններից է: Գործընթացն ավելի շահեկան է, երբ այն իրականացվում է գործընկերության շրջանակներում, քանի որ այս դեպքում գործատուն անմիջականորեն մասնակցում է իր ապագա կադրերի մասնագիտական և ընդհանրական գիտելիքների ու կարողությունների ձևավորմանը: Այս առումով մեզ համար լավագույն գործընկեր է «Սինոփսիս-Արմենիա» ՓԲԸ-ն: 2012/2013 ուստարում շարունակվել է արդյունավետ կրթական համագործակցությունն այդ ընկերության հետ, որում ընդգրկված են համալսարանի բակալավրիատի, մագիստրատուրայի, ինչպես նաև ասպիրանտուրայի 32 սովորողներ:

2013 թ. տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում ՀՀ Նախագահի ամենամյա կրթական պարզենների արժանացած 5 բուհերի 21 մրցանակակիրներից 10-ը ԵՊՀ ուսանողներ ու ասպիրանտներ են: Մրցանակակիրների ընտրությունը և առաջադրումը կատարվել է ըստ «Սինոփսիս Արմենիա» ընկերության և «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջև կնքված համաձայնագրի:

2. Ուսումնական գործընթացի ընթացիկ կազմակերպում և բարելավում

2012/2013 ուստարում ձեռնարկվել են ուսումնական գործընթացի բնականոն ընթացքի ապահովմանը և բարելավմանն ուղղված մի շարք միջոցառումներ: Որակի ապահովման կենտրոնի աջակցությամբ ֆակուլտետներում շարունակվել են աշխատանքները կրթական վերջնարդյունքների վրա հիմնված ուսումնական ծրագրերի մասնագրերի (սպեցիֆիկացիաների) մշակման ուղղությամբ: Այդ աշխատանքների

կատարման ընթացքը պարբերաբար քննարկվել է ինչպես ֆակուլտետների մեթոդախորհուրդներում, այնպես էլ ԵՊՀ մեթոդախորհրդի նիստերում: Արդյունքում 60 բակալավրի և 130 մագիստրոսի կրթական ծրագրերի համար ստեղծվել են ծրագրերի մասնագրեր:

Լրամշակվել են ԵՊՀ առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողների համար նախատեսված ֆակուլտետային «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք» տեղեկատվական փաթեթները, որոնք պարունակում են ուսումնական ծրագրերի և դասընթացների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը: Ուղեցույցները տեղադրվել են ԵՊՀ պաշտոնական կայքում՝ ներբեռնելու հնարավորությամբ:

ՈԱ կենտրոնի աջակցությամբ ֆակուլտետներում տպագրվել է համաեվրոպական ձևաչափի դիպլոմի հավելվածը առկա և հեռակա ուսուցման բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար:

Հաշվետու ուսումնական տարում ձեռնարկվել են ուսումնական գործընթացի բնականոն ընթացքի ապահովմանն ուղղված մի շարք միջոցառումներ: Իրականացվել է բակալավրիատի ու մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման առաջին կուրսի ուսանողների և ԵՊՀ-ի միջև ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ պայմանագրերի կնքման գործընթացը:

Շարունակվել են աշխատանքներ ուսանող-դասախոս թվաքանակի հարաբերակցության օպտիմալացման ուղղությամբ: Ավտոմատացված համակարգի գործադրմամբ կատարելագործվել են մասնագիտությունների ուսումնական, աշխատանքային ուսումնական պլանների կազմման գործընթացները: Կրթության որակի բարելավման, ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով միջոցներ են ձեռնարկվել պրոֆեսորադասախոսական կազմի աշխատածավալների օպտիմալացման ուղղությամբ:

Ուսումնական գործընթացը կազմակերպելու համար հաշվետու ուստարում ևս հաշվառվել է լսարանային ֆոնդը, իրականացվել են աշխատանքներ այն արդյունավետ օգտագործելու և դասերի կանոնավոր կայացման ուղղությամբ:

Դեկանատների գործավարությունը առավել հստակեցնելու և գործառնությունները օպտիմալացնելու նպատակով կատարվել են աշխատանքներ 2013/2014 ուստարվա-

նից ուսանողի ուսումնական քարտի էլեկտրոնային տարբերակի ներդրման ուղղությամբ:

Իրականացվել է ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման գործընթացը կրթության որակի ապահովման պահանջներով՝ առաջնորդվելով փոփոխված կանոնակարգով: Ուսանողական նպաստների հատկացումը կատարվել է ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցների և ԵՊՀ ֆինանսական միջոցների հաշվին: Ըստ առաջադիմության արդյունքների՝ նպաստ է տրվել բակալավրիատի և մագիստրատուրայի 1346 ուսանողի, որոնցից 351-ը բակալավրիատի 1-ին, 237-ը 2-րդ, 386-ը 3-րդ կուրսերից են, իսկ 372-ը մագիստրատուրայի 1-ին տարվա սովորողներ են: Համակարգի փոխատեղման են ենթարկվել (վճարովիից՝ անվճար և հակառակը) բակալավրիատի 1-ին կուրսի 132 (39,4 %), 2-րդ կուրսի 48 (27,7 %), 3-րդ կուրսի 51 (13,6 %) և մագիստրատուրայի 1-ին կուրսի 69 (19 %) ուսանողներ:

Ուսման բարձր առաջադիմություն և հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողներին հատկացվել է կրթաթոշակ: Պետական կրթաթոշակից բացի՝ հատկացվել է նաև ԵՊՀ-ի և այլ կազմակերպությունների կողմից սահմանված անվանական 56 կրթաթոշակ: ՏԿրթության մասին՝ ՀՀ օրենքի համաձայն՝ վճարովի համակարգի ուսանողներին հատկացվել են ուսման վարձի զեղչեր, որոնցից 1-ին կիսամյակում օգտվել է 1737 ուսանող, 2-րդ կիսամյակում՝ 2740-ը: 1-ին կիսամյակում նրանցից 1206 եղել են բակալավրիատի, 326-ը՝ մագիստրատուրայի ուսանողներ, իսկ 2-րդ կիսամյակում 1941-ը եղել են բակալավրիատի, 612-ը՝ մագիստրատուրայի ուսանողներ: Ուսման զեղչերից օգտվողներից 1-ին և 2-րդ կիսամյակներում համապատասխանաբար 205-ը և 187-ը եղել են համալսարանի աշխատակիցների երեխաներ: Երկու կիսամյակներում կիրառված զեղչերի ընդհանուր գումարը կազմել է ավելի քան 276 մլն դրամ: Կատարված գործընթացի արդյունքները ամփոփվել են առանձին գրքուկում, որը տրամադրվել է նաև ԿԳՆ-ին:

Ջեղչերի կիրառման և նպաստների հատկացման գործընթացն առավել հստակ և անթերի կազմակերպելու նպատակով ուսումնամեթոդական վարչությունը շարունակել է ուսանողների առաջադիմության վերահսկման աշխատանքները ՏՏԿՀ կենտրոնում մշակված «SuperVision YSU» ծրագրով: Կենտրոնում շարունակվել են

քննությունների արդյունքների մշակման ավտոմատացման խնդիրների վերաբերյալ ուսուցողական աշխատանքները ֆակուլտետների դեկանատների աշխատակիցների հետ՝ միտված համակարգչային այդ ծրագրից օգտվելու նրանց հմտությունների զարգացմանը: Տվյալների մշակումն ու վերահսկումը կազմակերպվում է ուսումնամեթոդական վարչության ուսումնական գործընթացի վերահսկման բաժնում գործող ներքին ցանցի միջոցով:

Ուսումնամեթոդական վարչության աշխատակիցների կողմից յուրաքանչյուր քննաշրջանից հետո ստուգվել են դասամատյանները, համեմատվել են գրավոր աշխատանքների տետրերում և տեղեկագրերում ուսանողների գնահատականների համապատասխանությունը:

Տարվել են աշխատանքներ գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ուղղությամբ՝ ամփոփիչ քննությունները առավել թափանցիկ դարձնելու և բողոքարկման գործընթացի օբյեկտիվությունը ապահովելու նպատակով լսարաններում տեղադրվել են տեսախցիկներ:

Կազմակերպվել և իրականացվել է ելքային արդյունքների վերահսկման գործընթացը: Ամփոփվել և ՀՀ ԿԳՆ են ներկայացվել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները:

2012/2013 ուստարում պատրաստվել և շրջանավարտներին է հանձնվել 5158 դիպլոմ, որից 2781-ը՝ առկա ուսուցման համակարգի բակալավրիատի, 1422-ը՝ մագիստրատուրայի, 663-ը՝ հեռակա ուսուցման համակարգի բակալավրիատի, 240-ը՝ մագիստրատուրայի, 5-ը՝ հնգամյա ուսուցման նախորդ տարվա շրջանավարտների: Վերականգնվել և տրվել է շրջանավարտների 45 դիպլոմի կրկնօրինակ:

Հաշվարկվել և վերահսկվել է ուսանողական շարժը: Ձևակերպվել են ՀՀ զինված ուժերում ծառայելու, ազատման, տեղափոխման, վերականգնման, արտերկիր գործուղման, հիվանդությունների պատճառով տարկետման, ինչպես նաև ուսումնական գործընթացին առնչվող այլ հրամաններ:

Հաշվետու տարում ևս ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն և ՀՀ ԿԳՆ են ներկայացվել 1-ԳՄ և 3-ԳՄ ձևաչափերով վիճակագրական հաշվետվությունները, որոնք ներառում են քննությունների արդյունքները և շրջանավարտների վերաբերյալ այլ տվյալներ, ինչպես նաև ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմին առնչվող տեղե-

կատվություն: Մշակվել են ամբիոնային բեռնվածությունների, զեղչերի, տեղափոխությունների և քննաշրջանի արդյունքների տվյալները, որոնք ամփոփվել են առանձին գրքույկի ձևով:

Հաշվետու ուստարում նախապատրաստական համապատասխան աշխատանքներից հետո ուսումնական պլաններով նախատեսված պրակտիկաները իրականացնելու համար համալսարանը տարբեր պետական և ոչ պետական հաստատությունների, հիմնարկների, կազմակերպությունների հետ կնքել է պայմանագրեր, որոնց համապատասխան կազմակերպվել են ուսումնական, արտադրական ու մանկավարժական պրակտիկաներ: Արտադրական (այդ թվում՝ մանկավարժական) պրակտիկա է անցել 7139 ուսանող (բակալավր և մագիստրոս), ուսումնական պրակտիկա՝ 1119 ուսանող, որոնցից 949-ը՝ դաշտային: Այնուհանդերձ, այս խնդրի առնչությամբ անելիք շատ կա:

3. Ընդունելության նախապատրաստում

Խորապես գիտակցելով այն հանգամանքը, որ հանրակրթության ոլորտի բարեփոխումների ներկա փուլի հիմնական խնդիրը կրթության որակի ապահովումն է, ինչպես նաև հաշվի առնելով դիմորդների հավաքագրման գործում առկա որոշակի դժվարությունները՝ կապված մի շարք օբյեկտիվ իրողությունների հետ (դեպի բուհեր դիմորդների թվի նվազում, պետական բուհերի միջև մրցակցության ուժեղացում, Ամերիկյան համալսարանում բակալավրիատի ընդունելություն, ԵՊՀ կազմում ավագ դպրոցի և քոլեջի բացակայություն և այլն) մինչհամալսարանական կրթության վարչության ջանքերով հաշվետու ուստարում ընդլայնվել և ակտիվացվել է համալսարանի գովազդարշավը ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում: Վարչությունը հաշվետու ժամանակաշրջանում սկիզբ է դրել մի շարք նոր նախաձեռնությունների՝ «դպրոց-բուհ» փոխադարձ կապի ամրապնդման, շարունակական կրթության ապահովման, ավագ դպրոցների աշակերտների, ինչպես նաև քոլեջների սովորողների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ, այդ գործընթացում առավելագույնս ներգրավելով ԵՊՀ բոլոր ուսումնական ստորաբաժանումները, ուսանողական կառույցները և շահագրգիռ այլ կազմակերպություններ:

Հաշվի առնելով մեր երկրի զարգացման հիմնական միտումները և միջազգայնորեն ընդունված կրթական չափանիշները՝ անցած ուստարում նույնպես մեծ ուշադրության է դարձվել ավագ դպրոցի ինստիտուցիոնալ համակարգի կատարելագործմանը, հանրակրթության արդյունավետության բարձրացմանը՝ դրանով իսկ նպատելով ավագ դպրոցի կայացման գործին՝ օգտագործելով ԵՊՀ և՛ պրոֆեսորադասախոսական, և՛ նյութատեխնիկական ներուժը: Հանրակրթության համակարգում առկա հիմնախնդիրների լուծման նպատակով մեր ռեսուրսներն ավելի նպատակային օգտագործելու համար 2012/2013 ուստարում ԵՊՀ-ն համագործակցության պայմանագրեր կնքեց Երևանի 4 և ՀՀ մարզերի 5 ավագ դպրոցների հետ՝ դրանց թիվը հասցնելով 19-ի:

Ուրախալի է, որ այսօր արդեն համագործակցության պայմանագիր կնքած ավագ դպրոցների կողմից առաջարկված 14 լրացուցիչ կրթական դասընթաց դասավանդում են մեր պրոֆեսորադասախոսական կազմի 32 ամենափորձառու ներկայացուցիչները, իսկ նրանց վարձատրությունը իրականացվում է ԵՊՀ միջոցների հաշվին: Այս ծրագիրը մեծ արձագանք է ստացել աշակերտության, դպրոցների տնօրենության, ինչպես նաև ծնողական խորհուրդների կողմից:

Համալսարանի հետ պայմանագիր կնքած ՀՀ մարզերի դպրոցների համար ԵՊՀ մինչհամալսարանական կրթության վարչության կողմից մշակվել և հաջողությամբ իրականացվում է առանձին ծրագիր:

Դրա հետ մեկտեղ, հաշվետու ժամանակաշրջանում, ծավալուն աշխատանք է կատարվել թվով 28 հիմնական և ավագ դպրոցներում ու վարժարաններում, որոնց հետ ԵՊՀ-ն ունի համագործակցության երկարաժամկետ համաձայնագրեր:

Ինչպես նախորդ տարիներին, հաշվետու ուսումնական տարում ևս վարչության աշխատակիցները ԵՊՀ բոլոր ֆակուլտետների դեկանների և պրոֆեսորադասախոսական կազմի աջակցությամբ կազմակերպել են ակնարկային և բովանդակային դասախոսություններ Երևանի և ՀՀ մարզերի 230 դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար: ԵՊՀ վարկանիշի բարձրացման, կրթօջախի մասին լիարժեք պատկերացում կազմելու համար և խիստ կարևորելով հանրակրթական դպրոցների բարձր դասարանների աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքները՝ 2012/2013 ուստարվա ընթացքում մայրաքաղաքի և մար-

գերի 110 դպրոցների շուրջ 2000 աշակերտների համար կազմակերպվել են «Բաց դռների օր» և նպատակային ճանաչողական այցեր ԵՊՀ՝ աշակերտներին հնարավորություն ընձեռելով հանդիպելու համալսարանի և ֆակուլտետների ղեկավարության և դասախոսական կազմի հետ, ծանոթանալու ուսումնական ծրագրերին և ուսումնառության առկա հնարավորություններին:

Արդեն բարի ավանդույթ է դարձել դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար հանրակրթական տարբեր առարկաների գծով օլիմպիադայի անցկացումը ԵՊՀ-ում և ՀՀ մարզերում: Ամեն տարի նախորդի համեմատ զգալի մեծացել է մասնակից դպրոցների աշխարհագրությունը և աշակերտ մասնակիցների թիվը: Բերենք միայն մեկ օրինակ. եթե 2009 թ. օլիմպիադային մասնակցել է 600 աշակերտ՝ միայն Երևանի դպրոցներից, և դիպլոմների ու գովասանագրերի արժանացել են 167-ը, ապա 2013 թ. մասնակիցների թիվը Երևանից և արդեն ՀՀ 6 մարզերից 2417 էր, իսկ պարգևատրվածների թիվը՝ 399:

Նշենք, որ ԵՊՀ մինչհամալսարանական կրթության վարչության աշխատանքային ծրագրերում ներառված է նաև դիմորդների հետ տարվող աշխատանքների գծով հենակետերի ստեղծումը հանրապետության բոլոր մարզերում: Հաշվետու ժամանակաշրջանում ևս 2 մարզում՝ Սյունիքում և Գեղարքունիքում, պաշտոնապես բացվեցին ԵՊՀ ներկայացուցչությունները, որոնք ակտիվ աշխատանքներ են տանում իրենց մարզերի դպրոցներում ԵՊՀ կրթական ծրագրերի և մասնագիտությունների մասին անհրաժեշտ տեղեկատվություն ապահովելու ուղղությամբ:

Կրթական համակարգի զարգացումների համատեքստում կարևորվում է նաև պետական մասնագիտական քոլեջների շրջանավարտների որակյալ կրթության շարունակականության լուրջ խնդիրների լուծմանն աջակցելը, որը կապահովի նաև նրանց կրթամակարդակի ակադեմիականությունն ու պրոֆեսիոնալիզմը: Ելնելով դրանից, ինչպես նաև դեպի համալսարան դիմորդների հոսքի պահպանման նպատակով հաշվետու տարում ծավալուն աշխատանք է կատարվել քոլեջների շրջանավարտների հետ. նրանց ներկայացվել են համալսարանական մասնագիտությունները, շարունակական կրթության և ընդհանուր հիմունքներով բակալավրի ծրագրով բուհ ընդունվելու կարգերը: Արդյունքում, ներկա ուստարում ԵՊՀ-ն ևս 3 պետական մասնագիտական քոլեջների հետ կնքեց շարունակական կրթության վերաբերյալ համա-

գործակցության պայմանագիր՝ դրանց թիվը հասցնելով 13-ի: Ըստ այդ պայմանագրի՝ ԵՊՀ-ն օգնություն կցուցաբերի քոլեջներին ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի բարելավման գործում, ինչպես նաև կիրականացնի կադրերի որակավորման բարձրացման գործառույթ: Այս ամենի արդյունքում, շարունակական կրթություն ստանալու նպատակով նշված քոլեջներից ԵՊՀ-ն 14 մասնագիտությունների գծով 100 հայտ է ստացել:

Վարչությունը ձգտել է տարբեր միջոցներով (հայտարարություններ թերթերում և հեռուստատեսությամբ, այցելություններ դպրոցներ և քոլեջներ և այլն) նախապատրաստական դասընթացների բաժինն ապահովել հնարավորինս շատ ունկնդիրներով, այնուհետ ձևավորել է դասընթացների լայն ընտրանի՝ ըստ կրթական ծրագրերի, և ապահովել դրանց իրականացման ճկուն ժամանակացույցները:

Նախապատրաստական դասընթացների կրթական ծրագրերի բովանդակությունն ու որակն ապահովելու, ինչպես նաև ունկնդիրների համար ավարտական քննությունների թեստեր պատրաստելու նպատակով ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի առավել հմուտ և փորձառու ներկայացուցիչներից ձևավորվել է փորձագիտական խորհուրդ՝ ըստ հանրակրթական առանձին առարկաների:

Ունկնդիրների ուսուցումը նույնպես կազմակերպվել է փորձագիտական խորհրդի կողմից նախապես քննարկված և հաստատված ուսումնական պլաններով: Արդյունքում, ունկնդիրներից 28-ը, հաջողությամբ հանձնելով 2013 թ. ընդունելության միասնական և կենտրոնացված քննությունները, ընդունվել են առկա ուսուցման համակարգ, իսկ 27-ը՝ ավարտական քննությունների արդյունքներով՝ հեռակա ուսուցման համակարգ:

4. Ընդունելություն

2013/2014 ուստարում ԵՊՀ դիմորդների թիվը առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում կազմել է համապատասխանաբար 4081 և 1819: Կենտրոնացված ընդունելության համակարգի դիմորդների ընդհանուր հոսքում համալսարանի բակալավրիատի դիմորդների բաժնեմասը կազմել է 37,3 %:

Նախորդ տարվա համեմատ 2013/2014 ուստարում ԵՊՀ բակալավրիատի առկա ուսուցման դիմորդների թիվը նվազել է 25 տոկոսով, ինչը պայմանավորված է հանրակրթական դպրոցների շրջանավարտների թվի նվազմամբ:

Բակալավրիատի առկա ուսուցմամբ ԵՊՀ ընդունվել է 3414 հոգի (անվճար՝ 408, վճարովի՝ 3006), որն անցած տարվա համեմատ պակասել է 5 տոկոսով: Ընդունելությունն իրականացվել է 59 մասնագիտությունների գծով, սակայն դիմորդների չհամալրվելու պատճառով բացվել է միայն 56-ը: Այդուհանդերձ, ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրի ընդունելության բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր ծավալում կազմել է 31,4 %:

Վերջին տարիներին զգալիորեն նվազել է բնագիտական ուղղությամբ դիմորդների հոսքը, ինչը լուրջ մտահոգություն է առաջացնում նաև գիտական դպրոցների պահպանման տեսակետից:

Բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգում ընդունելությունն իրականացվել է 24 մասնագիտությունների գծով (որից 5-ը՝ բնագիտական ուղղությամբ), սակայն դիմորդների թվի նվազման պատճառով (34 տոկոս) բացվել է 22-ը, որից 4-ը՝ բնագիտական ուղղությամբ: Ընդունվածների թիվը 650 է:

Մագիստրատուրայի ընդունելությունը կատարվել է 122 մագիստրոսական ծրագրերով, սակայն դրանցից 8-ը չի իրականացվել արձյալ դիմորդների նվազ թվի պատճառով: Առկա մագիստրատուրա ընդունվել է 1395 (անվճար՝ 402, վճարովի՝ 993), իսկ հեռակա՝ 510 ուսանող:

ԵՊՀ օտարերկրյա դիմորդների թիվը բակալավրիատում կազմել է 92, իսկ մագիստրատուրայում՝ 33: Ընդունված օտարերկրյա քաղաքացիների թիվը կազմել է՝ բակալավրիատում՝ 86, մագիստրատուրայում՝ 30:

Ընդհանուր առմամբ՝ այս տարի ԵՊՀ է ընդունվել 6085 հոգի:

5. Հիմնական ուսանողական համակազմ և շրջանավարտներ

2012/2013 ուստարում ԵՊՀ առկա ուսուցման համակարգի ուսանողների թվա-կազմը եղել է 12221, որից 9363-ը՝ բակալավրիատում (այդ թվում՝ 7497-ը վճարովի),

իսկ 2810-ը՝ մագիստրատուրայում (այդ թվում՝ 1837-ը վճարովի), իսկ 48-ը միջազգային կրթական կենտրոնի ուսանողներ են:

Հեռակա ուսուցման համակարգում սովորել է 4895 ուսանող, որից 4009-ը՝ բակալավրիատում, իսկ 886-ը՝ մագիստրատուրայում:

Օտարերկրյա ուսանողների ընդհանուր թիվը կազմել է 380, որից 317-ը՝ առկա ուսուցմամբ, իսկ 63-ը՝ հեռակա:

Համալսարանի հիմնական ուսանողական թվակազմում մագիստրոսական համակարգի հաշվեկշիռը 23 % է, իսկ օտարերկրյա և հեռակա ուսուցման ուսանողներինը՝ համապատասխանաբար 3,1 % և 28,6 %:

2012/2013 ուստարում համալսարանը տվել է առկա ուսուցմամբ 4168 շրջանավարտ, որից 2767-ը՝ բակալավրի կրթական ծրագրով, 1401-ը՝ մագիստրոսի, իսկ հեռակա ուսուցմամբ՝ 903 շրջանավարտ, որից 662-ը՝ բակալավրի կրթական ծրագրով, 241-ը՝ մագիստրոսի: Առկա ուսուցմամբ բակալավրիատը գերազանցության դիպլոմով ավարտել է 407 (14,7 %) շրջանավարտ, մագիստրատուրան՝ 469 (33,5 %): Հեռակա ուսուցմամբ բակալավրիատը գերազանցության դիպլոմով ավարտել է 27 (4,1 %) շրջանավարտ, իսկ մագիստրատուրան՝ 4 (1,7 %):

6. Դասախոսական կազմ և ուսումնական բեռնվածություն

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ հիմնական դասախոսական կազմում եղել է 1280 դասախոս, որից պրոֆեսոր՝ 167 (13,0 %), դոցենտ՝ 478 (37,3 %), ասիստենտ և դասախոս՝ 635 (262/373, 49,6 %): Այդ կազմի 66,3 %-ը ունի գիտական աստիճան: Իգական սեռի հիմնական դասախոսների հաշվեկշիռը կազմել է 55,6 %:

Շարունակվել է ԵՊՀ դասախոսական կազմի երիտասարդացման գործընթացը, մասնավորապես բարձր տարիքի դասախոսների ուսումնական բեռնվածության նվազեցման և դասավանդման գործընթացում երիտասարդ դասախոսների ներգրավման միջոցով: Հաշվետու ուստարում դասախոսական կազմը համալրվել է 31 նոր դասախոսներով, որոնցից 3-ը՝ ԵՊՀ ասպիրանտուրայից: Հիմնական դասախոսական կազմում մինչև 35 տարեկան դասախոսների թիվը կազմել է 239, 35-65 տարեկաններինը՝ 806, իսկ 65-ից բարձր՝ 235:

Լրիվ հաստիքային համարժեքով ուսանող/դասախոս հարաբերակցությունը 2012/2013 ուստարում կազմել է 12,8 (նախորդ ուստարում եղել է 11,2):

7. Դասախոսների որակավորման բարձրացում և մասնագետների վերապատրաստում

Երևանի պետական համալսարանում հետբուհական լրացուցիչ կրթության զարգացումը ներառված է նրա առաքելության մեջ և արտացոլված է ռազմավարական նպատակներում: Մեզանում հարատև ուսումնառության հայեցակարգը խարսխված է երկու հիմնադրույթների վրա՝ պրոֆեսորադասախոսական կազմի կատարելագործում և շրջանավարտների անընդհատ կրթության ապահովում: Ըստ այդմ՝ ԵՊՀ-ում իրականացվում է լրացուցիչ կրթության երկու հիմնական ծրագիր՝ դասախոսների որակավորման բարձրացում և մասնագիտական վերապատրաստում: Ընդ որում, առաջին ծրագիրը դիտարկվում է և՞ որպես նպատակ, և՞ որպես միջոց՝ ապահովելու համալսարանական կրթության շարունակականությունը:

Երկրորդ տարին է, ինչ ԵՊՀ-ում իրականացվում է պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման նոր՝ կրթագիտական ծրագիրը: Վերջինիս երկամյա արդյունքների վերլուծությունը վկայում է, որ ճիշտ է ընտրված ռազմավարությունը: Ծրագրի նպատակամետ կառուցավորումը, կրթական և հետազոտական բաղադրիչներին ներկայացնելով հստակ պահանջներ ու գնահատման չափանիշներ, հնարավորություն է ընձեռում ի մի բերելու դասախոսի աշխատանքի երկու հիմնական ուղղությունները և խթանելու նրա շարժունությունը:

Ծրագրի թե՛ կրթական, թե՛ հետազոտական կառուցամասերն ունեն պարտադիր և կամընտրական բաղադրիչներ: ԵՊՀ-ն՝ իբրև գործատու, պարտադիր է համարել այն բաղադրիչները, որոնք միտված են բարելավելու դասախոսական կազմը որակի հավաստման միջազգային չափանիշներին համապատասխան (անգլերենի իմացություն, համակարգչային գրագիտություն, դասավանդման, ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդների տիրապետում և այլն): Միաժամանակ դասախոսին հնարավորություն է տրվում ընտրելու այնպիսի դասընթացներ, որոնք համապատասխանում են իր նախասիրություններին և մասնագիտական ոլորտի նոր պահանջներին:

Հնգամյա ժամկետի համար սահմանված 30 կրեդիտից 17-ը նախատեսված է հենց այս կամընտրական բաղադրիչի համար, ինչը վկայում է, որ ծրագրում խիստ կարևորվում է դասախոսի դերը, և խթանվում է նրա նախաձեռնողականությունը: Յուրաքանչյուր տարի ծրագրին մասնակցում է դասախոսական հիմնական կազմի կեսից ավելին, ինչը բարձր ցուցանիշ է:

Կրեդիտային համակարգը, որով իրականացվում է ծրագիրը, չափելի է դարձրել նրա արդյունքները և՛ յուրաքանչյուր դասախոսի, և՛ ամբիոնի, և՛ ֆակուլտետի, և՛ ամբողջ համալսարանի մակարդակով:

Ծրագրի և, որ ամենակարևորն է, դասախոսների ձեռքբերումները գնահատելով հանդերձ՝ պետք է նշել մտահոգիչ մի շարք իրողություններ: Ֆակուլտետների և ամբիոնների անհամաչափ ընդգրկվածությունը համադրելի չի դարձնում նրանց ձեռքբերումները: Եթե ակտիվ են շուրջ 200 դասախոս և 40 ամբիոն, ապա պասիվներն ավելի շատ են, ուստի միջին կրեդիտը ԵՊՀ մակարդակով կազմում է ընդամենը 9,7 (12-ի փոխարեն): Ցածր են նաև հետազոտական բաղադրիչի ցուցանիշները. 7277 կրեդիտից նրան բաժին է ընկնում 1500-ը: Այս տվյալները խորհելու տեղիք պիտի տան: Համալսարանը զգալի միջոցներ է հատկացնում իր դասախոսական կազմի կատարելագործմանը, և հատուցումն էլ համարժեք պիտի լինի:

Լրացուցիչ կրթության երկրորդ ծրագիրը՝ մասնագիտական վերապատրաստումը, իրականացվում է երեք ուղղությամբ.

1. Աջակցել պետական կառավարման համակարգի զարգացմանը, ինչին ուղղված է հանրային ծառայողների վերապատրաստման ծրագիրը՝ իր ենթածրագրերով: ԵՊՀ-ում են վերապատրաստվում ՀՀ Ազգային ժողովի, Ազգային անվտանգության խորհրդի, ՀՀ պաշտպանության նախարարության և այլ կառույցների աշխատակազմեր: Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը ՀՀ-ում՝ ծրագրի շրջանակներում ԵՊՀ-ն համագործակցում է ՀՀ կառավարության, ՀՀ քաղծառայության խորհրդի, ԵԱՀԿ-ի և մի շարք ՀԿ-երի հետ՝ հնարավորություն տալով ի մի բերելու այս ոլորտում արտաքին գործերի, կրթության և գիտության, մշակույթի, սփյուռքի նախարարությունների և պետական կառավարման այլ մարմինների աշխատանքը:

2. Բավարարել հարատև կրթության պահանջարկը մի քանի մասնագիտություններով՝ ինգեբանությունՑ, ինժարժ գույքի գնահատումՑ և այլն:
3. Անհատապես բավարարել ԵՊՀ դիմող յուրաքանչյուր անձի կրթական պահանջումները՝ կիրառելով ուսուցման նոր ձևեր:

Պետք է նշել, որ եթե մասնագիտական վերապատրաստման առաջին ծրագրով ԵՊՀ-ն նախաձեռնող է, ապա մյուս ուղղություններով արդյունքները գոհացուցիչ չեն: Գործընկերային կայուն կապեր դեռևս չեն ձևավորվում, և պետք է ասել, որ կողմերի թերացումը երկուստեք է. հաճախ հնարավոր չէ բավարարել պահանջարկը, քանզի առաջարկ էլ գրեթե չկա: Բերենք մեկ օրինակ. ԵՊՀ-ում ստեղծվել է հեռավար ուսուցման կենտրոն, որի շնորհիվ հասանելի են դարձել Մոսկվայի Բաումանի անվան տեխնիկական համալսարանի էլեկտրոնային հարուստ պաշարները, բայց ... պահանջարկ չկա: Կարծում եմ՝ հարցը համակարգային լուծում է պահանջում: Բարձրագույն կրթության զարգացման հենքին լուրջ հիմնախնդիր է կրթության շարունակականության օրենսդրական ապահովումը և փաստաթղթերի ճանաչումը, ինչը կխթաներ աշխատաշուկայի և գիտելիքահենք տնտեսության զարգացումը:

8. Տեղեկատվական ռեսուրսների զարգացում

Երևանի պետական համալսարանի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով շարունակվել են աշխատանքները տեղեկատվական արդի տեխնոլոգիաների մշակման, ներդրման և գործարկման ուղղությամբ: Այս առումով ԵՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնը (SS ԿՀԿ) 2012/2013 ուստարում ևս աչքի է ընկել լայնածավալ գործունեությամբ:

Շարունակվել են թեստային լուծումների և դրանց վրա հիմնված տեղեկատվական տեխնոլոգիաների մշակման աշխատանքները նանոչափական բյուրեղի-վրահամակարգերի (ԲՎՀ-ների) համար: Հիմնական արդյունքները, որոնք ստացվել են ակադեմիկոս Ս. Շուքուրյանի ղեկավարած հետազոտողների խմբի կողմից 2012-2013 թվականների ընթացքում, ներկայացնում են հիերարխիկ թեստավորման, վերականգնման և ախտորոշման ամբողջական լուծում ինչպես ԲՎՀ-ների, այնպես էլ ԲՎՀ-

ների մեջ ընդգրկված ներդրված հիշողությունների և մտավոր սեփականություն պարունակող այլ բլոկների համար: Արդյունքներին ավելի քան 300 անգամ հղում են արել այլ հետազոտողները և լայնորեն կիրառել են դրանք հետազոտությունների մեջ: Պատահական չէ, որ հաշվետու շրջանում Բերքլիում (ԱՄՆ) կայացած գերբարձր ինտեգրացիայի սխեմաների թեստավորման հեղինակավոր գիտաժողովում (VLSI Test Symposium'2013), որին մասնակացում էին աշխարհի լավագույն հետազոտողները, «An effective solution for building memory BIST infrastructure based on fault periodicity» հոդվածը ներկայացվել է մրցանակի «Լավագույն հոդված» անվանակարգում:

2012/2013 ուստարում, ըստ էլեկտրոնային սարքերի և համակարգերի նախագծման ավտոմատացման ոլորտի զարգացվածության, Հայաստանն ընդգրկվել է աշխարհի 50 ամենազարգացած երկրների ցանկում, իսկ նվաճումները ներկայացնելու համար Ս. Շուքուրյանը և «Սինոփսիս» ընկերության կրթական բաժնի ղեկավար Վ. Մելիքյանը հրավիրվել են ԱՄՆ-ում անցկացվող և աշխարհի տարբեր երկրներից 9000-ից ավելի մասնակից ունեցող նախագծման ավտոմատացման կոնֆերանսին՝ Design Automation Conference DAC'2013: Ներկայացման վերնագիրն էր «Հայաստանը նոր ժառանգություն է կառուցում էլեկտրոնային նախագծման ասպարեզում»:

Շարունակվել են աշխատանքները նաև նոր կրթական տեխնոլոգիաների օգտագործման և մշակման, SS բնագավառում մագիստրոսական կրթական ծրագրերի և առանձին դասընթացների իրականացման, գիտահետազոտական աշխատանքների կատարման, համալսարանական կրթության կառավարման և որակի ապահովման, տեղեկատվական համակարգերի մշակման և ներդրման ուղղությամբ:

Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի համակարգային ծրագրավորման ինստիտուտի և ԵՊՀ-ի համատեղ համակարգային ծրագրավորման լաբորատորիայում կատարվել է նոր տեխնոլոգիաների մշակում՝ ուղղված զուգահեռ կոմպիլյացիայի ապահովմանը և ծրագրային ապահովման պաշտպանությանը կոմպիլյատորների միջոցով, ինչպես նաև մշակվել են նոր օպտիմիզացնող ձևափոխություններ կոմպիլյատորների համար:

Համաձայն Գերմանական ակադեմիական փոխանակության գործակալության (DAAD) կողմից 2009 թ. վերջին հաստատված՝ Երևանի պետական համալսարանի և Ռոստոկի համալսարանի (ՌՀ) համատեղ մագիստրոսական ծրագրերի նախագծի՝

ԵՊՀ-ում 2011 թ. հոկտեմբերից գործում է ՌՀ-ի «Վիզուալ հաշվարկ» մագիստրոսական ծրագիրը:

Հաշվետու ուստարում ևս, համաձայն նշված նախագծի, երկրորդ տարվա ուսանողները չորրորդ կիսամյակը սովորել են ՌՀ-ում, որտեղ նաև կազմակերպվել է նրանց մագիստրոսական թեզերի պաշտպանությունը՝ ԵՊՀ հանձնաժողովի հեռահար մասնակցությամբ: Ուսումնառության ավարտից հետո ուսանողներն ստացել են ինչպես ԵՊՀ-ի, այնպես էլ ՌՀ-ի մագիստրոսի որակավորում: Շրջանավարտներից մեկին առաջարկվել է ուսումը շարունակել ՌՀ-ի ասպիրանտուրայում:

«Բաց հասարակության հիմնադրամ» ԲՀԻ N-17508 դրամաշնորհի շրջանակում մշակվել և իրականացվել են «Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ» և «Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ» էլեկտրոնային դասընթացները: Ներկայումս կատարվում է այդ դասընթացների ընդլայնումը Հայաստանի պետական ճարտարագիտական և Երևանի պետական բժշկական համալսարանների համար:

Մշակվում են ծրագրային գործիքներ հեռախոսների, թաբլետների և այլ շարժական սարքերի միջոցով դասընթացների հասանելիության համար:

Շարունակվում է «Համացանցային համալսարանի» ներկառուցվածքի միջազգային չափորոշիչներին հարմարեցման գործընթացի իրականացումը:

Ավարտվել են «Հայերեն սկսնակների համար», «Տարրական հայերեն», «Հայերենի նախամիջին մակարդակ», «Հայերենի միջին մակարդակ», «Հայերենի բարձր-միջին մակարդակ», «Բարձր մակարդակի նախապատրաստական հայերեն» և «Մասնագիտացված մակարդակի հայերեն» դասընթացների թուրքերեն լեզվով իրականացումները Հայկական վիրտուալ համալսարանի (ՀՎՀ) համար:

Մշակվել է սկսնակ մակարդակի «Շախմատի ռազմավարություն» 16 բաժիններից կազմված դասընթացը: Այն իրականացվել է SCORM ստանդարտի հիման վրա, մուլտիմեդիայի կիրառմամբ: Դասընթացը մշակվել է հայերեն և անգլերեն: Մշակվել են դասընթացի ընթացքի ներկայացման բազմաշերտ գրաֆիկական ժամանակային շարժումներ՝ մուլտիմեդիայի կիրառմամբ:

Նախագծվել և իրականացվել է ՀՎՀ-ի պորտալի էջերի տարբեր սարքերին դինամիկ հարմարվող կառուցվածքային մոդելը:

9. Պլանավորում և կառավարում

Հաշվետու ուստարում հետևողական աշխատանքներ են տարվել ԵՊՀ ռազմավարական պլանի իրականացման մոնիթորինգի (մշտադիտարկման) ուղղությամբ: Մասնավորապես՝ կատարվել է ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանում հաշվետու ուսումնական տարվա համար նախատեսված գործողությունների կատարողականի մոնիթորինգ, որի արդյունքում նախատեսված գործողությունները և միջոցառումները հիմնականում գնահատվել են որպես կատարված:

Լրամշակվել և տպագրության է պատրաստվել «ԵՊՀ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշներ (ԳԱՑ)»-ի 3-րդ հրատարակությունը՝ 2007-2012 թթ. համար, որը ներառում է ԵՊՀ գործունեության հիմնական բնագավառների ԳԱՑ-երը: ԳԱՑ-երի վերլուծությունը նպաստել է ԵՊՀ որակի ինքնագնահատման կարողությունների զարգացմանը, ինչպես նաև համալսարանի ուժեղ և թույլ կողմերի վերհանմանը՝ ԵՊՀ հետագա գործունեությունը և ռազմավարությունը առավել արդյունավետ կերպով ուղղորդելու համար: Վերլուծության արդյունքները մեծապես նպաստել են ԵՊՀ ինստիտուցիոնալ ինքնագնահատման գործընթացը առավել հավաստի հիմքերի վրա կառուցելուն և համապատասխան զեկույցը ինֆորմատիվ դարձնելուն:

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2013 թ. հունիսին կայացած ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական այցի արդյունքներով ԵՊՀ հետազոտական աշխատանքների մասը գնահատվեց ոչ բավարար: Ըստ փորձագետների՝ այդպիսի գնահատականը պայմանավորված է՝

Ա) Կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի փոքրությամբ կամ հետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության կամավորությամբ,

Բ) Համալսարանի ծախսերում գիտության մասնաբաժնի փոքր չափով,

Գ) Հետազոտական աշխատանքների միջազգայնացման ցածր մակարդակով:

Առանձին անդրադառնանք այս երեք կետերին:

Ա) Մեր դիտարկմանը, որ հետազոտական բաղադրիչի մաս են նաև կուրսային և ավարտական աշխատանքները, ինքնուրույն աշխատանքները և գիտական սեմինարներին մասնակցությունները, փորձագետները չհամաձայնեցին: Միաժամանակ, փորձագետները չկարողացան այդ տեսակետից որպես օրինակ վկայակոչել որևէ համալսարան: Մյուս կողմից՝ ԵՊՀ գիտական հաստիքների ավելի քան մեկ երրորդը երիտասարդներ են:

Այնուհանդերձ, հաշվի առնելով փորձագետների դիտողությունը, նպատակահարմար է վերականգնել նախկինում գործող ուսանողական կոնստրուկտորական բյուրոները մի շարք ուղղություններով, օրինակ՝ հեռակառավարվող թռչող օբյեկտների, նյութագիտության, ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ոլորտներում:

Բ) Անդրադառնանք ԵՊՀ ծախսերում գիտության մասնաբաժնին: Իհարկե, հետազոտական համալսարաններում այդ մասնաբաժինն անհամեմատ բարձր է, և այսպիսի ցուցանիշով մենք չենք կարող դառնալ հետազոտական համալսարան: Բայց եթե համեմատենք մեր ցուցանիշները հանրապետության այլ բուհերի նմանատիպ ցուցանիշների հետ, ապա կտեսնենք, որ Երևանի պետական համալսարանը մնում է անվիճելի առաջատարը: Այսպես՝ ԵՊՀ-ն ունի 36 (44 %) բազային լաբորատորիա, 39 (55 %) թեմատիկ դրամաշնորհ, երիտասարդ գիտնականների 9 (69 %) դրամաշնորհ, արդյունավետ գիտաշխատող՝ 28 (67 %), հայ-ռուսական դրամաշնորհ՝ 5 (71%), հայ-գերմանական դրամաշնորհ՝ 3 (75 %):

Ստորև բերված ցուցանիշներով ԵՊՀ մասնաբաժինն ավելի բարձր է, քան ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողների կամ ծախսերի մասնաբաժինը բուհերի մեջ, որն ավելին չէ, քան 20 %-ը:

	Առաջատար բուհերի անվանումներ	բազային	թեմատիկ	Երիտասարդ գիտ.	Արդյունավետ գիտաշխատող	Հայ-ռուս.	Հայ-գերմ.
1	Երևանի պետական համալսարան	36	39	9	28	5	3
2	Հայ. պետ. ճարտարագ. համալսարան	17	13	1	5	-	-
3	Խ.Աբովյանի անվ. մանկավարժ. համալս.	4	1	-	1	-	-
4	Մ.Հերացու անվ. պետ. բժշկական համալսարան	3	9	2	3	-	-
5	Երևանի պետ. Տնտես. համալսարան	2	1	-	-	-	-
6	Երևանի պետական ագրար. համալսարան	9	3	-	2	-	-
7	Երևանի ճարտարագիտ. և շինարարութ. Պետ համալսարան	4	-	1	-	-	-
8	Երևանի Վ.Բրյուսովի անվ. պետ. լեզվաբ. համալսարան	1	-	-	-	-	-
9	Ռուս-հայկական (Սլավոնական) պետ. համալսարան	5	4	-	3	2	1
10	Այլ բուհեր		1				
	Մասնաբաժինը բուհերի մեջ	44%	55%	69%	67%	71%	75%

Հետազոտական աշխատանքների միջազգայնացման մակարդակով գիտության տարբեր ճյուղեր ԵՊՀ-ում գտնվում են տարբեր մակարդակներում: Այսպես, բնագիտական և ֆիզմաթ բնագավառներում վերջին տարիներին համալսարանականները հրապարակել են միջին թվով՝ Հայաստանում՝ 627, ԱՊՀ երկրներում՝ 188, արտասահմանյան այլ երկրներում՝ 293 հոդված, զեկուցման թեզիս և այլն, իսկ հումանիտար

և սոցիալ-տնտեսագիտական բնագավառներում՝ համապատասխանաբար 348, 29 և 30: Ի մի բերելով արտասահմանյան հեղինակավոր հանդեսներում տպագրված հոդվածները՝ նկատում ենք, որ ինչպես նախկինում, անցած ուստարում ևս հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական ուղղություններով հրատարակումները քիչ են: Մասնավորապես, արտերկրում տպագրվել է բնագիտական և ֆիզմաթ ուղղություններով հրատարակությունների 44 %-ը, իսկ հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական ուղղություններով՝ 14 %-ը: Նշված բացը վերացնելու ուղղությամբ կատարվող աշխատանքների արդյունքը կզգացվի միայն տարիներ հետո:

Այդ նպատակով կազմակերպվում են գիտաժողովներ, կատարվում են համատեղ գիտական աշխատանքներ առաջատար բուհերի և գիտական կենտրոնների հետ: Երևանի պետական համալսարանի գիտական հրատարակությունների մի մասը տպագրվում է անգլերեն:

Անցած ուստարում ԵՊՀ բազային ծրագրերի ոլորտում կատարվել է համալրում՝ ԵՊՀ ՈԱ կենտրոնին կից ստեղծվել է համալսարանական կրթության ինստիտուցիոնալ հետազոտությունների լաբորատորիա:

Հաշվետու ժամանակահատվածում ոչ միայն գիտական, այլ նաև կրթական ակտիվ գործունեություն է ծավալել հայագիտական հետազոտությունների ինստիտուտը: Ինստիտուտի ջանքերով համալսարանում մեկնարկեց «Ցեղասպանագիտություն» մագիստրոսական ծրագիրը, որի դասավանդողների շարքերում են ոչ միայն համալսարանական, այլ նաև ՀՀ ԳԱԱ անվանի մասնագետներ: Համագործակցության շրջանակներում ծրագրին գիտամանկավարժական աջակցություն է ցուցաբերում ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը:

Հրատարակվել են 11 մենագրություն, 1 դասագիրք, 6 մեծ ֆորմատի քարտեզ, ինչպես նաև ավելի քան 43 գիտական հոդված, 6 զեկուցումների թեզիս: Ինստիտուտի գիտաշխատողները մասնակցել են թե՛ հանրապետական, թե՛ միջազգային բազմաթիվ հայագիտական բնույթի գիտաժողովների, կլոր սեղանների: Դրանցից հարկ է առանձնացնել Լիբանանում կազմակերպված «Հայկական անդրասահմանային տարածականությունը և արդի հաղորդակցական միջոցները» գիտաժողովը, ինչպես նաև «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» խորագրով հայագիտական միջազգային երկրորդ համաժողովը: Իսկ ահա վերջինիս մաս կազմող

«Հայ ինքնության հիմնախնդիրները» խորագրով բաժանմունքի գիտաժողովն էլ կազմակերպվեց ինստիտուտի ջանքերով:

Հաշվետու ուստարում շարունակվել են հետազոտություններ իրականացվել Հայոց ցեղասպանության՝ մասնավորապես օտարազգի ականատեսների քիչ ծանոթ հուշագրությունների, օտարալեզու թեմատիկ քարտեզների պատրաստման, համացանցում հայագիտության ներկայացվածության հիմնախնդիրների, հայ-վրացական հարաբերությունների որոշ պատմագիտական հարցերի, Արցախյան հիմնահարցի առանձին պատմական ժամանակաշրջանների, հայ-օսմանական առնչությունների, հնագիտական առանձին պեղումների արդյունքում ստացված նյութերի ու նոր համալրված աղբյուրների հայկական կենտրոնի և հայ-քրդական առնչությունների բաժնի ուղղությամբ:

Շարունակվել են համալրվել ինստիտուտի հայագիտական ութ թեմատիկ կայքերը թե՛ հայերեն, թե՛ անգլերեն և թե՛ ռուսերեն նոր նյութերով: Ընդհանուր առմամբ դրանց թիվը կազմել է 500 գիրք, 170 գիտահետազոտական հոդված, ավելի քան 700 գիտահանրամատչելի հանրագիտարանային հոդված, 515 քարտեզ, ինչպես նաև կից տեղադրվել են հայագիտական տպագիր նյութերի համար որպես օժանդակ միջոց ծառայող բազմաթիվ պատմական լուսանկարներ և տեսանյութեր:

Ինստիտուտի գործունեության հիմնական ուղղություններից նախանշվում է արտերկրի առավել հոծ հայկական համայնքներում հայագիտական հետազոտական, կրթական ծրագրերի իրականացումը: Ինստիտուտի ջանքերով սկսել են հրատարակվել առանձին օտարերկրյա հայագետների ուսումնասիրություններ: Փորձ է կատարվում նրանց կապել տեղի հայագիտական ուժերի հետ: Նմանօրինակ աշխատանք է տարվում Ռուսաստանի Դաշնության «Նոր Նախիջևան» հայկական համայնքի, ինչպես նաև Լիբանանի հայկական կրթամշակութային մեկ տասնյակից ավելի կառույցների հետ:

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ գիտական ստորաբաժանումներում կատարված աշխատանքների գիտական արդյունքներն ու ձեռքբերումները ներկայացված են 1698 հոդվածներում, 72 մենագրություններում: Ավելի քան 400 թեզիսներ ներկայացվել են միջազգային և տեղական տարբեր գիտաժողովներում:

2012/2013 ուստարում դրամաշնորհային (թեմատիկ, Հայ-Բելառուսական, Հայ-Ֆրանսիական և երիտասարդ գիտնականների) ծրագրերի հաշվետվությունները տրվել են գիտական փորձաքննության, որի շրջանակներում գնահատվել են եզրափակիչ հաշվետվության գիտական և գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը, գիտության տվյալ բնագավառում հետազոտական խմբի ձեռքբերումները և նրանց մասնագիտական որակավորման համապատասխանությունը: Դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում հրատարակվել է 501 գիտական հոդված, 3 գիրք և 59 զեկուցման թեզիս:

2012/2013 ուստարում ձևակերպվել և պետական գրանցում է ստացել 2 արտոնագիր, որոնցից մեկը՝ քիմիայի բնագավառում, մյուսը՝ ռադիոֆիզիկայի: Գիտակազմակերպական բաժնի աշխատակիցների կողմից պարբերաբար ուսումնասիրվում է արտոնագրային գրականությունը՝ «Մտավոր սեփականության գործակալության» տրամադրած գյուտերի մեթոդական նկարագրությունները և օրենսդրական ակտերը: Այժմ աշխատանքներ են տարվում «Եվրասիական արտոնագրային տեղեկատվական բազայից» ԵՊՀ-ի գիտահետազոտական ստորաբաժանումների ազատ օգտվելու ուղղությամբ:

Հաշվետու շրջանում ԵՊՀ գիտակազմակերպական բաժնի աշխատակիցները ՀՀ գիտության պետական կոմիտեի պատվերով կազմել են ԵՊՀ անձնագիրը, որտեղ ամփոփված է տեղեկատվություն ԵՊՀ գիտաշխատողների 2010-2013 թթ. գիտական աշխատանքների, գիտաշխատողների կադրային տվյալների, ԵՊՀ գիտական հատվածի պետական ֆինանսավորման ծավալների վերաբերյալ: Անձնագրում մանրամասն ներկայացված է վերջին երեք տարիներին ԵՊՀ աշխատակիցների կողմից հրատարակված գիտական աշխատանքների ցանկը: Անձնագրի լրացման և շարունակական թարմացման աշխատանքները կրելու են պարբերական բնույթ:

Հաշվետու ուստարում կազմակերպվել, անցկացվել են գիտական բազմաթիվ միջոցառումներ, որոնց թվում՝ տարբեր բնագավառների վերաբերող միջազգային, հանրապետական և համալսարանական մի շարք գիտաժողովներ, սեմինարներ, քննարկումներ: Դրանցից նշենք մի քանիսը՝ միջազգային գիտաժողով՝ նվիրված Հովսեփ Օրբելու ծննդյան 125-ամյակին (24.09.-27.09.2012 թ., Երևան), հոբելյանական գիտաժողով՝ նվիրված Սայաթ-Նովայի ծննդյան 300-ամյակին (10.10.-18.10.2012 թ.,

Երևան, Թբիլիսի), գիտաժողով՝ նվիրված Անանիա Շիրակացու 1400-ամյակին (12.10.-14.10.2012 թ., Երևան), «Արցախյան շարժման 25-ամյա ուղին» (2012 թ. փետրվարի 19-21-ը, Երևան), «Ստոխաստիկ և մասնակի ածանցյալներով հավասարումների տեսության մեթոդները ֆինանսական մաթեմատիկայում» գիտաժողով (07.09.-12.09.2012 թ., Երևան), «Նուկլեինաթթուները՝ որպես ամբողջության բաղադրիչ» (ՀՀ ԿԳՆ ԵՊՀ, մարտի 25-28, 2013 թ., Երևան), «Ինտեգրվող համակարգերը և սիմետրիաները» երրորդ միջազգային դպրոց, (հուլիս, 2013 թ., Երևան) և այլն:

2012/2013 ուստարում ԵՊՀ գիտակազմակերպական բաժնի կողմից շարունակական աշխատանքներ են տարվել նաև ԵՊՀ ողջ գիտական և համապատասխան օժանդակ աշխատակազմի կադրային գործերի վարման թվայնացման ուղղությամբ:

Երիտասարդ գիտական կադրային ներուժի կայացման խնդիրը միշտ եղել է ԵՊՀ ուշադրության առանցքում: Ներկայումս ԵՊՀ առկա և հեռակա ուսուցման համակարգի ասպիրանտների ընդհանուր թիվը 370 է (104-ը՝ առկա, 266-ը՝ հեռակա ուսուցմամբ), հայցորդներինը՝ 334: ԵՊՀ-ում գործում է 13 մասնագիտական խորհուրդ՝ 45 մասնագիտությունների գծով: 2012/2013 ուստարվա ընթացքում պաշտպանվել է 13 դոկտորական և 170 թեկնածուական ատենախոսություն (նախորդ ուստարում եղել է համապատասխանաբար՝ 12 և 130):

ՄԱՐԳԻՍ ԵՎ ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Հաշվետու ուսումնական տարում զգալի աշխատանք է կատարվել նաև գրադարանում, որի՝ որպես համալսարանական կառուցվածքային ստորաբաժանման հիմնական գործառույթը մասնակցությունն է ուսումնական և գիտահետազոտական գործընթացներին՝ բուհական կրթական հասարակության գրական-տեղեկատվական ժամանակակից պահանջները բավարարող գործունեությամբ: Գրադարանի աշխատանքային գործընթացներն ուղղված են եղել ինչպես գրադարանային նոր ծառայությունների ներդրմանը, այնպես էլ հավաքածուների ձևավորմանն ու տեղեկույթի մատչելիության ապահովմանը, որոնք իրականացվել են շարունակական այնպիսի աշխատափուլերով, ինչպիսիք են՝ տպագիր նյութի համալրումը, մշակումը, հաշվառումն ու պահպանումը, էլեկտրոնային համահավաք քարտարանում գրականության մուտքագրումն ու թվայնացումը, գրադարանային-տեղեկատվական ու մատենագիտական սպասարկման որակի բարելավումն ու ավտոմատացումը, գրափոխանակման, տեղեկատվական պաշարների միասնական օգտագործման և փորձի փոխանակման նպատակով տարբեր գրադարանային կառույցների հետ համագործակցության ամրապնդումը և այլն:

Բուհական գրադարանային հավաքածուի հարստացման կարևոր գործոններից է դրա նպատակային համալրումը, որն առաջին հերթին պետք է ուղղված լինի կրթական և գիտական պահանջների բավարարմանը: Ուստի գրականության ընտրության ժամանակ հաշվի են առվել ընթերցողի պահանջները (ըստ մերժումների քարտարանի) և ֆակուլտետների մասնագետների կարծիքները, որոնց արդյունքում կատարվել է նկատելի դրական տեղաշարժ: Հաշվետու ուստարում համալրման և մշակման բաժնի միջոցով գրքային ֆոնդ են մուտք գործել 3.686 անուն 20.592 միավոր գրականություն և տեղեկատվական կրիչներ, այդ թվում՝ 15.586 գիրք, 4.529 ամսագիր, 215 ատենախոսություն, թերթերի 232 հավաքածու, 1 բնապատկեր, 29 պնակիտ: Նշվածներից գիտական է 13.937 միավորը, ուսումնական՝ 424 անուն 5.959 միավորը, գեղարվեստական՝ 696 միավորը: Պետք է նկատել, որ հաշվետու ուստարում գրանցվել է գրականության համալրման աճ՝ շուրջ 5.000 միավորով, այդ թվում՝ գիտականը՝

4.000-ով, ուսումնականը՝ 1.000-ով: Անցած ուստարվա համեմատ նվազել է հատկապես ոչ մասնագիտական ամսագրերի քանակը:

Համալրման հիմնական աղբյուրներ են եղել դրամական փոխանցումները, միջազգային գրքափոխանակությունը, ԵՊՀ տպագրատունը: Գրքային ֆոնդը համալրվել է նաև արտերկրի մի շարք կազմակերպությունների, ինչպես նաև անհատ ձեռներեցների ու հեղինակների նվիրատվությունների և դրամական օժանդակության շնորհիվ: Դրանց շարքում կարելի է թվել Բոննի, Ռոստոկի, Կալիֆոռնիայի, ԱՄՆ Կոնգրեսի գրադարանների, ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, Գերմանական գիտահետազոտական կենտրոնի, Միջազգային դրամական ֆոնդի օժանդակությունը: Արժեքավոր գրականություն է ստացվել Ամերիկյան գրադարանային միությունից և ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատնից: Գրադարանի համալրմանը մշտապես օժանդակել է նաև Մայր Աթոռ սուրբ Էջմիածինը:

Գրադարանն իր հերթին նվիրատվությամբ աջակցել է հանրապետության մի շարք բուհական, դպրոցական, մարզային գրադարանների ու կազմակերպությունների, որոնց թվում կարելի է նշել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը, ԵՊՀ ուսանողական գիտական ընկերությունը, ԵՊՀ ուսանողական խորհուրդը, Վանաձորի, Գավառի, Արցախի համալսարանները, Սպիտակի, Սիսիանի, Գորիսի, Եղեգնաձորի Թաթուլ Կրպեյանի անվ. դպրոցներն ու մարզային գրադարանները, «Միտք» հասարակական կազմակերպությունը, «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնը», Արցախի գորամիավորումները և այլն: Համալսարանի գրադարանը նվիրատվություններով աջակցել է նաև արտերկրի կազմակերպություններին՝ Գևորգյան հոգևոր ճեմարանին կից Հատիճի հոգևոր ընծայարանի գրադարանին, Սփյուռքի հայագիտական կենտրոններին, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան միջոցով՝ Կոնգրեսի գրադարանին:

Համալրմանը զուգահեռ գրադարանը գրքափոխանակություն է իրականացրել Մատենադարանի, Ազգային գրադարանի, «Նորավանք» հիմնադրամի, «Անկյունաքար» հրատարակչության, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիային կից ինստիտուտների հետ:

Բաժնում իրականացվել են նաև նոր ստացված գրականության մշակման, քարտագրման, մուտքագրման, ինչպես նաև տեղեկատու ապարատի՝ այբբենական և

կարգային գրացուցակների, վերնագրային, թեմատիկ և այլ քարտարանների պահպանման և շարունակական ձևավորման աշխատանքներ:

Հաշվետու շրջանում համալիր աշխատանք է կատարվել նաև գրապահոցում՝ ֆոնդերի համակարգման ու պահպանման, գրականության վերականգնման ու սպասարկման ուղղությամբ: Գրապահոց և առձեռն ֆոնդ մուտք է գործել 13.200 միավոր գրականություն՝ շուրջ 2.000-ով ավելի, քան նախորդ տարում: Աբոնեմենտից ստացված 2.300 պահանջագրերով սպասարկվել է 980 միավոր գրականություն. այս ցուցանիշը ևս գրանցում է դրական տեղաշարժ՝ կազմելով անցած տարվա գրքատացքի կրկնապատիկը: Դասագրքային առձեռն ֆոնդից սպասարկումն իրականացվել է էլեկտրոնային տարբերակով. ավելի քան 80.000 միավոր կազմող ֆոնդից սպասարկվել է 50.278 դասագիրք: Այստեղ տեղին է նշել, որ լիարժեքորեն հնարավոր չէ վերացնել դուրս տրվող գրականության պակասուրդը, քանի որ սովորողների քանակին համապատասխանող ուսումնական գրականության քանակի ապահովումը գործնականորեն անհնարին է, և այդ խնդրի առավել արդյունավետ լուծումը կրթական գրադարանների պրակտիկայում ընդունված եղանակն է՝ ընթերցասրահներում սպասարկումը:

Գրապահոցի աշխատանքը չի սահմանափակվում միայն վերը նշված գործառույթներով: Աշխատատար գործընթացներ են նաև բազմաճյուղ հավաքածուների տեղաշարժումը, գիտական համակարգումը, հաշվառումն ու վերականգնումը: Հաշվետու շրջանում գրականության վերադարձը հիմնական ֆոնդեր կազմել է 2.100 միավոր, առձեռն ֆոնդեր՝ 47.453: Մուտքագրման նպատակով համակարգչային բաժին է ուղարկվել 2.653 գիրք, որից 2.118-ը հատկացվել է գեղարվեստական գրականության առձեռն ֆոնդին, մնացածը՝ մուտք գործել հիմնական ֆոնդեր: Ընթերցասրահների պահանջագրերով սպասարկվել է 475 գիրք և 78 ատենախոսություն: Ստուգվել և հաշվառման է ենթարկվել հնատիպ գրականության հավաքածուն: Մատյաններում գրանցվել և առանձին տեղադրվել են 1.880 հայերեն և 4.108 ռուսերեն հնատիպներ: Անցած տարվա համեմատ 700-ով աճել է նաև գրքերի վերականգնման աշխատանքի ցուցանիշը՝ կազմելով 7200 միավոր:

Գրադարանից օգտվելու առաջին պայմանը գրադարանի բաժանորդ դառնալն է, որն իրականացվում է աբոնեմենտի բաժնում: Հաշվետու ուստարում բաժինը գրանցել է

համալսարանի բակալավրիատի և մագիստրատուրայի 1-ին կուրսեցիներին, առկա և հեռակա ուսանողներին: Բաժնի գրականության առձեռն ֆոնդը համալրվել է հայերեն և ռուսերեն շուրջ 2.118 միավոր գրականությամբ: Համալրման աշխատանքները շարունակելի են՝ մինչև վերջնական ֆոնդերի ստեղծումը: Իրականացվել է նաև առցանց էլեկտրոնային ավելի քան 700 պատվեր: Ընթացիկ ուսումնական տարում սպասարկված գրականության գրքատացքը կազմում է շուրջ 8.000 միավոր՝ առձեռն ֆոնդերից, 980 միավոր՝ գրապահոցից՝ ըստ պատվիրաթերթիկի:

Ինչպես նշվեց, բուհական գրադարանում ուսումնական գրականության պաշարները ընթերցողի է՛լ ավելի մեծ շրջանակի ծառայեցնելու ամենաարդյունավետ եղանակը տեղում սպասարկումն է: Ուստի անհրաժեշտ է հնարավորինս ակտիվացնել ընթերցասրահների գործունեությունը՝ դրանց մասնագիտական հավաքածուները հարստացնելով ուսումնական ծրագրերին համապատասխան գրականությամբ, ինչպես նաև ապահովելով սպասարկման բարձր որակ:

Սպասարկման բաժնի 5 ընթերցասրահների առձեռն գրականության պաշարները ձևավորված են ըստ առանձին գիտական բնագավառների: Սպասարկումն իրականացվում է բաց դարակային համակարգով: Առկա գրականության ֆոնդը կազմում է 73.355 միավոր, որից գիրք՝ 41.686, ամսագիր՝ 24.004, ատենախոսություն՝ 1.592, թերթերի տարեկան կազմեր՝ 465, թերթեր՝ 5608, որից 2.008-ը՝ սփյուռքից: Ընթացիկ ուստարում ստացվել է 5.232 միավոր գրականություն, որից գիրք՝ 701, ամսագիր՝ 300, ատենախոսություն՝ 211, թերթեր՝ 4.020, որից 420-ը՝ սփյուռքից: Սպասարկված գրականության տացքը 609.680 է, հաճախումները՝ 657.400: Ուստարվա ընթացքում բաժինը համալրվել է նոր հրատարակություններով: Կազմատան և աշխատակիցների միջոցով պատճենահանվել և վերանորոգվել է շուրջ 400 գիրք: Վերանայվել և կարգի են բերվել քարտարանները: Ընթերցողների պատվերներով գրապահոցի պաշարներից ժամանակավոր օգտագործման համար ընթերցասրահներ է բերվել 483 միավոր գրականություն՝ ատենախոսություններ, ամսագրեր և հազվագյուտ գրքեր: Հաշվետու տարում կատարվել է նաև գրքային ունեցվածքի գրքամատյանային վերագրանցում:

Համալսարանական գրադարանում պահպանվում են նաև ազգային և պատմամշակութային նշանակության արժեքավոր գրքեր, որոնց հավաքածուների՝ ընթերցողական պահանջարկ ունեցող մի մասը (շուրջ 20.000 միավոր) տեղակայված է

հնատիպ, հազվագյուտ և արվեստի գրականության բաժնում: Այստեղ են պահպանվում նաև Գյուլբենկյանի, Թաքեյանի հավաքածուները: Արդեն մուտքագրված են 1.498 և էլեկտրոնային քարտագրման ենթարկված՝ 2.128 գրքեր: Հաշվետու շրջանում բաժինը շարունակել է գրականության՝ նախորդ տարում սկսած հաշվառումը: Գրքամատյաններում վերագրանցվել են 1.282 միավոր ռուսերեն, 2.987՝ այլ լեզուներով և 3.377՝ Գալուստ Գյուլբենկյանի անվան գրականության տվյալներ: Ընթացիկ տարում բաժինը սպասարկել է 410 ընթերցողի:

Այս բաժնում են իրականացվում նաև մատենագիտական և հրատարակչական աշխատանքները: Հաշվետու շրջանում լույս է տեսել «Վլադիմիր Սարգսյանի կենսամատենագիտությունը», հրատարկության է հանձնվել «Երևանի պետական համալսարանում պաշտպանված աստենախոսությունների մատենագիտության» 10-րդ պրակը: Մատենագիտական և խմբագրական աշխատանքներ են կատարվել նաև հայաստանյան համահավաք գրացուցակի գրառումներում. ստեղծվել է 220 հեղինակավոր գրառում, խմբագրվել և համակարգվել 2300-ից ավելի գրառում:

Համալսարանական գրադարանի արդիականության կարևոր պայմաններից մեկը գրադարանային գործընթացների ավտոմատացումն է, որի հիմնական մասն իրականացվում է համակարգչային ծառայությունների և ավտոմատացման բաժնում: Հաշվետու տարում շարունակվել են հայաստանյան համահավաք գրացուցակի համալրման և պահպանման աշխատանքները: Գրապահոցից ընդունվել, մուտքագրվել և արձանագրվել ու առձեռն ֆոնդեր է ուղարկվել մոտ 3.350, հնատիպ բաժնից մուտքագրվել և քարտագրվել է 250 գիրք: Շարունակվել է նաև ԵՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ասպիրանտների համար էլեկտրոնային հոդվածների պատվերների սպասարկումը՝ Ֆրեզնոյի համալսարանի և “SUBITO” էլեկտրոնային հոդվածների գերմանական ծառայության միջոցով: Պատվիրվել է ավելի քան 3.200 էլեկտրոնային հոդված: Պատրաստվել և բազա է մուտքագրվել առկա ու հեռակա ուսանողների 8.565 ընթերցողական տոմս: Կայքէջում տեղադրվել են 564 թվայնացված գիրք և 734 էլեկտրոնային հոդված: Լուսապատճենահանվել, մշակվել և առցանց օգտագործման է տեղադրվել 204 գիրք, որից 23-ը՝ հնատիպ: Բաժնում կատարվել են նաև գրադարանի կայքէջի, էլեկտրոնային ռեսուրսների բաժանորդագրության, գրադարանային նոր ծրագրի ներդրման և թվայնացման աշխատանքներ:

Հաշվետու ժամանակահատվածում գրադարանն ակտիվորեն համագործակցել է հայաստանյան և օտարերկրյա համալսարանական գրադարանների, գրադարանային կազմակերպությունների և էլեկտրոնային ռեսուրսներով զբաղվող կազմակերպությունների հետ: Աշխատանք է տարվել նաև գրադարանը հաշմանդամներին (սայլակավոր անձանց) մատչելի դարձնելու ուղղությամբ, որի արդյունքում գրադարանի՝ Չարենցի փողոցի կողմից մուտքի ուղղությամբ կառուցվել են թեքահարթակներ:

2013 թ. գրադարանի ներկայացուցիչը մասնակցել է ՌԴ գիտական էլեկտրոնային գրադարանի կողմից կազմակերպված միջազգային գիտաժողովին:

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԵՎ ՏՊԱԳՐԱԿԱՆ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ուստարվա ընթացքում շարունակվել է ԵՊՀ հրատարակչության բե-
րուն գործունեությունը: Տպագրվել է 160 անուն գիրք՝ 41250 տպաքանակով:

ՀՀ-ում գործող ամենահին՝ ԵՊՀ հրատարակչությունը արժանավայել դիմավորեց
հայ տպագրության 500-ամյա հոբելյանը և ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից Երևանը գրքի հա-
մաշխարհային մայրաքաղաք հռչակումը:

2012 թ. դեկտեմբերի 27-ին ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում կայա-
ցավ գրքի տոն, որպես նվիրատվություն հանձնվեցին հարյուրավոր գրքեր:

Հաշվետու ժամանակաշրջանում ավարտվեց Նիկողայոս Ադոնցի երկերի վեց-
հատորյակի հրատարակչությունը, որը կարևոր ներդրում է ոչ միայն հայ պատմագի-
տության, այլև համաշխարհային գիտական ասպարեզում: Ադոնցի երկերի հրատա-
րակչությանը բազմիցս են ձեռնամուխ եղել, բայց այն ամբողջապես իրականացնել չի
հաջողվել, որովհետև Ադոնցը գրել է հայերեն, ֆրանսերեն, ռուսերեն, հունարեն,
տպագրվել է Սանկտ Պետերբուրգում, Բրյուսելում, Փարիզում, Լիսաբոնում, Բոստո-
նում և այլուր: Բազմազան է նաև Ադոնցի ուսումնասիրությունների ոլորտը՝ պատմա-
գիտություն, բանասիրություն, լեզվագիտություն, բնագրագիտություն, կրոն, բյուզան-
դագիտություն, արվեստի տարբեր ճյուղեր: Հրատարակչության 6-րդ հատորը պարու-
նակում է հրապարակախոսական նյութեր՝ հիմնականում նվիրված ցեղասպանու-
թյան հարցերին:

Հիշատակված փաստերը բավական են պատկերացում կազմելու համար, թե ինչ
տքնաջան աշխատանք է կատարել ԵՊՀ դասախոս, պրոֆեսոր Պետրոս Հովհան-
նիսյանը, ով հրատարակչության է պատրաստել վեցհատորյակը, կատարել խմբա-
գրական աշխատանքը, կազմել ծանոթագրությունները:

Ադոնցի երկերի վեցհատորյակի շնորհանդեսը արժանավայել անցկացվեց
2012թ. դեկտեմբերին:

«Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության հայկական մատենաշարով լույս են
տեսել մի քանի սովորածավալ գրքեր, որոնք խոշոր ներդրում են հայագիտության
ասպարեզում:

Հայ ճարտարապետության հմուտ գիտակ, հայկական ճարտարապետության գիտական ուսումնասիրության հիմնադիր Թորոս Թորամանյանի «Նյութեր հայ ճարտարապետության պատմության» գրքի վերահրատարակությունը իրականացվել է սքանավորման եղանակով, բայց նոր տառատեսակով: Այսպիսի տպագրությամբ Հայաստանում առաջին անգամ է գիրք հրատարակվում: Կատարվել է զգալի խմբագրական-սրբագրական աշխատանք: Գրքի լուսանկարները և գծագրերը ուղղակիորեն բովանդակության բաղկացուցիչ մասն են: Քանի որ հատորները լույս էին տեսել անցյալ դարի քառասնական թվականներին, շատ կարևոր էր լուսանկարները փոխարինել ավելի որակյալ օրինակներով: Լուսանկարների մշակման հարցում մեծ է ՀՀ պատմության թանգարանի տնօրեն Անելկա Գրիգորյանի և թանգարանի աշխատակից Վռամ Հակոբյանի աջակցությունը:

Գրքի վերահրատարակությունն իրականացել է տքնաջան աշխատանքի շնորհիվ: Ամեն ինչ արվել է արժանին մատուցելու Թորոս Թորամանյանի հիշատակին: Հրատարակությունը նվիրվում է նրա ծննդյան 150-ամյակին:

Սա «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության հայկական մատենաշարով հրատարակված 148-րդ հատորն է:

Լույս է տեսել «Մատենագիրք Հայոց» մատենաշարի 16-րդ հատորը, ուր ընդգրկված են 11-րդ դարի պատմիչների քննական բնագրերը՝ Գրիգոր Մագիստրոսի, Արիստակես Լաստիվերցու, Հակոբ Սանահնեցու և այլոց գործերը: Հատորը կազմել է Պետրոս Հովհաննիսյանը:

Հաշվետու տարում հրատարակվել է ականավոր պատմաբան, ակադեմիկոս Հրաչիկ Միմոնյանի «Ազատագրական պայքարի ուղիներում» ուսումնասիրության 5-րդ՝ ամփոփիչ հատորը, որն ընդգրկում է 1912-14 թթ. դեպքերը: Այս աշխատությունը (յուրաքանչյուր հատորը 1100-1300 էջ) խոշոր ներդրում է հայ պատմագիտության ասպարեզում: Նրանում ներկայացված է 20-րդ դարասկզբի բարդ ու խառը ժամանակների համակողմանի ուսումնասիրությունը: Հինգհատորյակը 2013 թ. ներկայացվել է Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի:

Ավարտվեց ԵՊՀ վաստակաշատ դասախոս, ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի երկերի քառահատորյակի հրատարակությունը: Ամփոփիչ՝ 4-րդ սովորածավալ (1008 էջ) հատորում տեղ են գտել Շիրվանզադեին, Նահապետ Քուչակին նվիրված

ծավալուն ուսումնասիրությունները, ինչպես նաև ժամանակակից հայ գրողներին նվիրված մեկ տասնյակից ավելի հոդվածներ:

Հայ տպագրության 500-ամյակի առթիվ լույս տեսավ ականավոր պատմագետ, լեզվագետ Արսեն Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կյանքի» գրքի վերահրատարակությունը: Գիրքը լույս էր տեսել Վենետիկում 1912 թ.՝ հայ տպագրության 400-ամյակի առթիվ:

Մոտենում է Հայոց մեծ եղեռնի 100-ամյակը: ԵՊՀ հրատարակչությունը շարունակում է Եղեռնի թեմայով գրքերի հրատարակությունը:

Պետական պատվերով լույս տեսան Գրիգոր Զոհրապի «Սեբաստիայի նահանգը տնտեսական և ազգային տեսակետից և հայերի դրությունը» և «Հայկական հարցը փաստաթղթերու լույսին տակ» հոդվածները, որոնք հրատարակվել էին ֆրանսերենով՝ Փարիզում 1913 թ. (ծածկանունով), և Սուլթան Համիդի առաջին քարտուղար Մուստաֆա Նետիմի վկայությունները, ուր կան անկեղծ խոստովանություններ ու փաստեր:

Եղեռնի թեմային մեծ ուշադրություն է դարձնում ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը: Հաշվետու տարում լույս տեսան Ա. Բայանի «Սիմոն Վրացյանի հասարակական-քաղաքական և պետական գործունեությունը», «Համիդյան կոտորածները ֆրանսիացի ժամանակակիցների հրապարակային ելույթներում, Հ. Գևորգյանի «Նիկոլ Դուման», Կապիտան Սենյոբուսի «Թուրքերը և Թուրքիան» (ֆրանսերեն), Ա. Հայրունու «Հայկական հարցը Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ 1918 թ.», Էդ. Զոհրաբյանի «Շարուր Նախիջևանը 1918-1919 թթ. (ռուսերեն), Ալ. Ղարիբյանի «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը 1918-1920 թթ. և Մեծ Բրիտանիան» աշխատությունները, «Հայոց ցեղասպանության արձարծումները տեքստաբանության լույսի ներքո» ժողովածուն և այլն:

Ստեղծվեց նոր մատենաշար: Լույս տեսավ Լևոն Մելիքսեթ-Բեկի «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» ուսումնասիրության երեք հատորները մեկ գրքով:

Վաղուց զգացվում էր Հր. Աճառյանի «Հայոց լեզվի պատմության» երկ-հատորյակի և Մ. Աբեղյանի երկերի վերահրատարակությունների պահանջը, որոնք իրականացան հաշվետու ժամանակաշրջանում:

Անցած ուստարում ԵՊՀ ֆինանսավորմամբ լույս են տեսել թե՛ հումանիտար, թե՛ բնական գիտությունների գծով մոտ հարյուր ուսումնական գրականություն, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ և այլն: Տարվա ընթացքում նվիրատվություններ են եղել հանրապետության տարբեր գրադարաններին:

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՄՆԵՐ

«Բանբեր Երևանի համալսարանի»

«Բանբեր Երևանի համալսարանի» (հասարակական գիտություններ) քառամսյա հանդեսը 2013-ին բոլորեց իր գոյության 47-ամյակը: Այդ ամբողջ ժամանակա-ընթացքում հրատարակվել են մի քանի հազար գիտական հոդվածներ հումանիտար և հասարակական բոլոր գիտությունների գծով: Հանդեսն ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի սահմանած՝ դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական հրատարակությունների ցանկում: Անցած տարիներին լույս է ընծայվել հանդեսի 129 համար՝ յուրաքանչյուրը 15 մամուլ ծավալով, հայերեն և ռուսերեն՝ համապատասխանաբար ռուսերեն և հայերեն ամփոփումներով:

ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ 2010 թ. հունվարի 1-ից «Բանբերը» լույս է տեսնում նոր ձևաչափով՝ նույն պարբերականությամբ (տարեկան երեք համար), բայց մասնագիտական վեց շարքով (1. «Հայագիտություն», 2. «Բանասիրություն», 3. «Իրավագիտություն», 4. «Փիլիսոփայություն, հոգեբանություն», 5. «Սոցիոլոգիա, տնտեսագիտություն», 6. «Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն»), որոնցից ամեն մեկն ունի կայուն համարանիշ, 5 մամուլ ծավալ և տպագրվում է 100-ական օրինակ, բացի «Բանասիրություն» շարքից, որի տպաքանակը 120 է:

Շարքերից յուրաքանչյուրն ունի խմբագրական խորհուրդ և պատասխանատու խմբագիր: Նյութերը տպագրվում են հայերեն, ռուսերեն և անգլերեն: Տպագրված հոդվածներն ունեն մյուս երկու լեզվով ամփոփում: Հեղինակների մասին երեք լեզվով տրվում է համառոտ տեղեկատվություն:

Ընդհանուր աշխատանքները համակարգում է «Բանբերի» հիմնական խմբագրական խորհուրդը՝ հանդեսի գլխավոր խմբագրի ղեկավարությամբ: Յուրաքանչյուր

շարքի բոլոր նյութերը վերջնականորեն խմբագրվում, սրբագրվում, համակարգչով ձևավորվում և ուղարկվում են տպարան:

Վերջին երկու տարիներին «Հայագիտություն», «Բանասիրություն» շարքերի տպագրությանն աջակցել է «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկությունը:

Սկսած 2012 թվականից՝ «Բանբերի» նյութերը տեղադրվում են ԵՊՀ կայքէջում: Հանդեսը բաշխվում է ԵՊՀ ամբիոններին և ԵՊՀ գիտական գրադարանի միջոցով՝ հանրապետական և արտերկրյա գիտական ու կրթական հաստատություններին:

2012 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2013 թ. սեպտեմբերի 1-ը լույս են տեսել «Բանբերի» մասնագիտական 6 շարքերի բոլոր համարները (N 138, 139, 140): Ընդհանուր առմամբ տպագրվել է 122 հոդված: Հոդվածներից 24-ը ռուսերեն է, 25-ը՝ անգլերեն:

Ուշագրավ հանգամանք է, որ հայաստանյան հեղինակներից բացի՝ հանդեսում տպագրվել են այլ երկրներից՝ ՌԴ-ից, Գերմանիայից, Շոտլանդիայից, Ֆրանսիայից, Իրանից, Ուկրաինայից հոդվածագիրների աշխատանքներ: Ընդ որում, «Սոցիոլոգիա, սոստեսագիտություն» շարքի 139-րդ համարը լույս է տեսել ամբողջովին անգլերեն:

«Գիտական տեղեկագիր»

1967 թվականից հրատարակվող «Գիտական տեղեկագիր» հանդեսի (բնական գիտություններ) խմբագրական քաղաքականությունը 2009-ից լուրջ փոփոխություններ կրեց, ինչի արդյունքում հանդեսը ներկայումս լույս է տեսնում երեք սերիայով՝ «Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ», «Քիմիա և կենսաբանություն», «Երկրաբանություն և աշխարհագրություն»: Բոլոր սերիաներն ընդգրկված են ՀՀ ԲՈՀ-ի սահմանած գիտական հրատարակությունների ցանկում: Յուրաքանչյուրը հրատարակվում է տարեկան երեք համար պարբերականությամբ: 2009 թվականից «Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ», իսկ այս տարվանից նաև «Քիմիա և կենսաբանություն» սերիաները հրատարակվում են անգլերեն, համարի վերջում զետեղվում են նաև հապարակված հոդվածների հայերեն և ռուսերեն ամփոփագրերը:

2009 թվականից առ այսօր լույս է տեսել հանդեսի 42 համար, որոնցում հրատարակվել է 419 գիտական հոդված (այդ թվում՝ ֆիզմաթ գիտություններ՝ 157 հոդ-

ված, քիմիա և կենսաբանություն՝ 168, երկրաբանություն և աշխարհագրություն՝ 94):
Տպագրված յուրաքանչյուր հոդված անցել է լուրջ գրախոսություն, եղել են բազմաթիվ
խորհրդակցություններ հեղինակի և խմբագրության աշխատակիցների միջև:

2012/2013 ուսումնական տարվա ընթացքում լույս են տեսել հանդեսի երեքական
համար, որոնցում տպագրվել է 92 հոդված:

Սկսած 2007 թվականից՝ հանդեսի յուրաքանչյուր համար զետեղվում է ԵՊՀ
կայքէջում և հասանելի է յուրաքանչյուր հետաքրքրվողի:

2013 թ. սեպտեմբերին ԵՊՀ նոր կայքէջի գործարկումից հետո հանդեսն ունի իր
առանձին էջը, որում հասանելի կլինեն, աստիճանաբար թվայնացվելով, 1967 թվակա-
նից ի վեր հանդեսում հրատարակված բոլոր աշխատանքները:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Միջազգային համագործակցության ասպարեզում Երևանի պետական համալսարանը պայմանագրեր և համաձայնագրեր ունի աշխարհի շուրջ 50 երկրների 215 համալսարանների, հաստատությունների և միջազգային կազմակերպությունների հետ, որոնց թվում են՝ Սանկտ Պետերբուրգի պետական և Կազանի դաշնային համալսարանները (Ռուսաստան), Բոլոնիայի և Տուշայի համալսարանները (Իտալիա), Կադիսի համալսարանը (Իսպանիա), Բեռլինի ազատ համալսարանը և Զիգենի համալսարանը (Գերմանիա), Լիլ 1, Պրովանսի, Լե Մենի համալսարանները (Ֆրանսիա), Ժնևի համալսարանը (Շվեյցարիա), Կրետեի տեխնիկական համալսարանը և Սալոնիկի Արիստոտելի անվան համալսարանը (Հունաստան), Կալիֆոռնիայի համալսարանը (Բերկլի, ԱՄՆ), Անն-Արբոր Միչիգանի համալսարանը (ԱՄՆ), Վարշավայի համալսարանը (Լեհաստան), Ուկրաինայի կաթոլիկ համալսարանը (Ուկրաինա), Թբիլիսիի Ի. Ջավախիշվիլու անվան պետական համալսարանը (Վրաստան), Մադրագուլիի անվան թուրքմենական պետական համալսարանը (Թուրքմենստան), Հալեպի համալսարանը (ՍԱՀ), Կահիրեի համալսարանը (Եգիպտոս), Քուվեյթի համալսարանը (Քուվեյթ):

Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում ստորագրվել է 11 պայմանագիր արտասահմանյան բուհերի հետ, որոնք են՝ Սոկա Գակկայ համալսարանը (Ճապոնիա), Կրետեի տեխնիկական համալսարանը (Հունաստան), Լե Մենի համալսարանը (Ֆրանսիա), Վիլնյուսի համալսարանը (Լիտվա), Նեապոլի Լ' Օրիենտալե համալսարանը (Իտալիա), Դոնեցկի ազգային տեխնիկական համալսարանը (Ուկրաինա), Կազանի դաշնային համալսարանը (Ռուսաստան), Մոսկվայի Ն. Բաումանի անվան պետական տեխնիկական համալսարանը (Ռուսաստան), Միլանի պոլիտեխնիկ համալսարանը, Միլանի համալսարանը (Իտալիա), Կիրառական գիտությունների Լյուդվիգշվազեն համալսարանը (Գերմանիա): Վերակնքվել են Մոսկվայի պետական լեզվաբանական համալսարանի (Ռուսաստան) և Դոնեցկի ազգային համալսարանի (Ուկրաինա) հետ ստորագրված պայմանագրերը:

Ինչպես և նախորդ տարիներին, 2012/2013 ուստարում Երևանի պետական համալսարանն ակտիվորեն մասնակցել է տարբեր միջազգային գիտաժողովների, սեմի-

նարների և քննարկումների կազմակերպմանը: Միևնույն ժամանակ, ԵՊՀ միջազգային համագործակցության վարչությունը աջակցել է ՀՀ-ում գործող միջազգային կազմակերպությունների և ՀՀ-ում հավատարմագրված դեսպանությունների կողմից տարբեր գիտակրթական միջոցառումների, սեմինարների, կրթական ծրագրերի և տեղեկատվական ցուցահանդեսների կազմակերպմանը:

ԵՊՀ-ի և արտասահմանյան համալսարանների ու հաստատությունների միջև կնքված պայմանագրերի շրջանակներում հաշվետու տարում խորացվել է համագործակցությունը՝ ընդգրկելով երկկողմ հետաքրքրության տարբեր ոլորտներ: Այսպես՝ ԵՊՀ-ի և Ռուսաստանի Ազգերի բարեկամության համալսարանի միջև ԱՊՀ երկրների ցանցային համալսարանի համագործակցության շրջանակում 2012/2013 ուսումնական տարում Ռուսաստան են գործուղվել 15 ուսանողներ՝ միջազգային հարաբերությունների, տնտեսագիտության, ռուս բանասիրության, ինֆորմատիկայի և կիրառական մեթեմատիկայի ֆակուլտետներից:

Արդյունավետ է եղել համագործակցությունը ԵՊՀ և գերմանական բուհերի միջև: ԵՊՀ-ի և Ռոստոկի համալսարանի միջև համագործակցության շրջանակում 2012/2013 ուստարում ևս Ռոստոկի համալսարանի օրգանական քիմիայի ամբիոն են մեկնել ԵՊՀ ուսանողներ՝ փորձարարական աշխատանքների, մագիստրոսական, ասպիրանտական և դոկտորանտուրայի դասընթացներին մասնակցելու նպատակով:

2012/2013 ուստարում շարունակվել է համագործակցությունը Արիզոնայի նահանգային համալսարանի (ԱՄՆ), Մոնպելիե 1, Մոնպելիե 3 համալսարանների հետ (Ֆրանսիա): Սկսվել է համագործակցությունը Ֆրանսիայի Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի հետ: Ակտիվորեն շարունակվել և զարգացել են բանակցությունները Հարավային դաշնային համալսարանի (Ռուսաստան) հետ:

Վերջին 5 տարիների ընթացքում Երևանի պետական համալսարանը ակտիվ մասնակցել է TEMPUS -ի շրջանակներում իրականացվող նախագծերի մշակմանն ու իրականացմանը:

2012/2013 ուստարում հաջողությամբ շարունակվել են TEMPUS, ERASMUS MUNDUS դրամաշնորհային ծրագրերը: Իրականացվել են ERASMUS MUNDUS ծրագրի BACKIS, WEBB, ELECTRA, IANUS նախագծերը, որոնց նպատակն է ընդլայնել

ուսանողների, դասախոսների և հետազոտողների փոխանակումները և աջակցել շարժունակությանը ոչ ԵՄ անդամ պետություններից դեպի ԵՄ անդամ երկրներ: 2011 թ.-ից ԵՊՀ-ում TEMPUS ծրագրի շրջանակներում իրականացվում է «Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում համալսարան-ձեռնարկություն գործընկերությանն ուղղված վերապատրաստման հնարավորություններ» դրամաշնորհը, որի հիմնական նպատակն է ընդլայնել համալսարանների հնարավորությունները նշված երեք երկրներում՝ համաձայն հասարակության և շուկայական տնտեսության պահանջների՝ հիմնված համապատասխան կրթության վրա: Իրականացվել են նաև TEMPUS ծրագրի այլ դրամաշնորհներ, մասնավորապես՝ La MANCHE՝ Փոփոխությունների ուղղորդումն ու կառավարումը բարձրագույն կրթության ոլորտում» ծրագիրը, SuToMa «Կայուն զբոսաշրջության կառավարման նոր բակալավրական և մագիստրոսական ծրագրերի մշակում» ծրագիրը, ATHENA՝ «Կայուն և ինքնավար բարձրագույն կրթության համակարգերի խթանումը արևելյան հարևանության տարածաշրջանում» ծրագիրը:

Հաշվետու ուստարում ԵՊՀ մասնագետները, ինչպես նաև բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողները մասնակցել են տարբեր գիտական միջոցառումների, սեմինարների, արտասահմանյան գիտակրթական ծրագրերի: Իրականացվել են նաև միջբուհական փոխանակման ծրագրեր: ԵՊՀ միջազգային համագործակցության վարչությունն ապահովել է համալսարանականների՝ արտասահման գործուղվելն ու գիտաուսումնական փոխանակումները: Այսպես՝ հաշվետու շրջանում համալսարանականներն առավել հաճախ գործուղվել են Ռուսաստան, Գերմանիա, Վրաստան, Ֆրանսիա, ԱՄՆ:

Հաշվետու ուստարում ընդհանուր առմամբ իրականացվել է 588 անձ/գործուղում: Արտասահման են գործուղվել 329 մասնագետ, 203 ուսանող և ասպիրանտ, իսկ վարչական կազմից՝ 56 հոգի:

2012/2013 ուստարում ԵՊՀ ֆակուլտետներում սովորել են 488 օտարերկրացի ուսանող և ասպիրանտ, այդ թվում՝ 56 ուսանող ԵՊՀ միջազգային կրթական կենտրոնում, բակալավրիատում՝ 226 (204-ը՝ վճարովի, 20-ը՝ անվճար հիմունքներով), մագիստրատուրայում՝ 80 (56-ը՝ վճարովի, 24-ը՝ անվճար հիմունքներով), ասպիրանտուրայում՝ 63 (60-ը՝ վճարովի, 3-ը՝ անվճար հիմունքներով) և հեռակա՝ 49

ուսանող: Վճարովի հիմունքներով սովորող օտարերկրացիներից գանձված ուսման վարձը կազմել 187.628.750 դրամ:

2012 թ. ընթացքում «Գալուստ Կյուլպենկյան» հաստատության կողմից հատուցվել են համալսարանի 41 երիտասարդ գիտնականների կարճաժամկետ և երկարաժամկետ արտասահմանյան գործուղումների ծախսերը՝ ընդամենը 71.413,00 ԱՄՆ դոլարի չափով: 2012/2013 ուստարում ավարտվել է ԵՊՀ (կենսաբանության ֆակուլտետ), CIBIO (Պորտոյի համալսարան), «Գալուստ Կյուլպենկյան» եռակողմ պայմանագրի շրջանակներում ուսումնական և գիտական փոխանակումների ֆինանսավորումը, որի ընդհանուր գումարը կազմել է մոտ 80.000,00 ԱՄՆ դոլար:

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

1. Հասարակայնության հետ տարվող աշխատանքներ

ԵՊՀ հասարակայնության հետ տարվող աշխատանքները համակարգվում են հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության կողմից: Աշխատանքներ են իրականացվել ԵՊՀ հանրային կապերի, ներքին և արտաքին հաղորդակցության ոլորտներում քաղաքականության վերաբերյալ առաջարկությունների ներկայացման և համապատասխան ծրագրերի մշակման և իրականացման, համալսարանին վերաբերող հրապարակումների վերլուծության, ԵՊՀ-ի վարկանիշի և հեղինակության բարձրացման, կրթօջախի խորհրդանշանների ու քարոզչական այլ նյութերի տարածման, համալսարանական տպագիր և էլեկտրոնային միջոցների, համալսարանին առնչվող տեսանյութերի մշակման ու մի շարք այլ աշխատանքային ուղղություններով, մասնավորապես՝

- համագործակցություն հայաստանյան տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների հետ, միջոցառումների լուսաբանում,
- «Երևանի համալսարան» պաշտոնաթերթի հրատարակում,
- հանրային կապերի ոլորտին վերաբերող նյութերի տպագրություն,
- մեթոդական աշխատանքների իրականացում,
- ինտերնետային ռեսուրսների զարգացում, համացանցային տիրույթում ԵՊՀ-ի վերաբերյալ տեղեկատվության և տեսանյութերի տարածում,
- ֆոտո և տեսանյութերի արխիվացում,
- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների և տարբեր կառույցների հետ աշխատանքներ:

Համագործակցություն հայաստանյան տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների հետ, միջոցառումների լուսաբանում

Հետևողական աշխատանք է կատարվել «ԵՊՀ-ում հանրային նշանակություն ունեցող միջոցառումների կազմակերպման, իրազեկման և հասարակայնության հետ

տարվող աշխատանքների ուղեցույց»-ի դրույթների կիրառման և ԵՊՀ-ում կայանալիք հանրային նշանակության միջոցառումների կազմակերպման ուղղությամբ: Մասնավորապես, ԵՊՀ բոլոր ֆակուլտետներում և այլ ստորաբաժանումներում համապատասխան աշխատակցները հասարակական հիմունքներով նշանակել են տվյալ ստորաբաժանման հանրային կապերի պատասխանատու: Պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ ֆակուլտետների հանրային կապերի պատասխանատուների մասնակցությամբ, քննարկվել են ստորաբաժանումներում տարվող աշխատանքների առանձնահատկությունները:

Հաշվետու ուստարվա ընթացքում վարչությունը ստացել է հանրային նշանակության միջոցառման շուրջ 230 հայտ: Շուրջ 80 մամուլի հաղորդագրություններ են ուղարկվել ՋԼՄ-ներին:

Իրականացվել է տպագիր ՋԼՄ-ներում և ինտերնետային կայքերում համալսարանի, կրթության և գիտության ոլորտի կարևոր խնդիրների մասին հրապարակված նյութերի մոնիթորինգ: Տպագիր լրատվամիջոցներում հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ-ի մասին հրապարակվել է 617 նյութ, իսկ ինտերնետային կայքերում ԵՊՀ-ին անդրադարձած նյութերի թիվը 901 է: Համապատասխան նյութերը յուրաքանչյուր օր՝ առավոտյան, ներկայացվել են ԵՊՀ ղեկավարությանը, իրականացվել է նյութերի վերլուծություն:

ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահի հեռուստակրաններին յուրաքանչյուր աշխատանքային օր տեղեկատվություն և հայտարարություններ են տեղադրվել համալսարանում կայանալիք միջոցառումների վերաբերյալ: Դրանց ընդհանուր թիվն ավելի քան 230 է: Հետևողական աշխատանք է կատարվել ԵՊՀ խորհրդանշանների (գերբ, լոգո, դրոշ, օրհներգ) մասսայականացման ուղղությամբ:

«ԵՊՀ ձևաթղթերի օգտագործման ուղեցույց»-ում ամրագրված դրույթները չխախտելու և դրանք ճիշտ օգտագործելու նպատակով պարբերաբար հանդիպումներ են կազմակերպվել ԵՊՀ ստորաբաժանումների ղեկավարների և ֆակուլտետների հանրային կապերի պատասխանատուների հետ: ԵՊՀ-ում նոր բացված ստորաբաժանումների համար, հիմք ընդունելով ԵՊՀ ռեկտորի համապատասխան հրամանը, պատրաստվել են ձևաթղթեր:

«Երևանի համալսարան» պաշտոնաթերթի և այլ նյութերի հրատարակում

«Երևանի համալսարան» պաշտոնաթերթի հրատարակմանը զուգընթաց տպագրվել են նաև ուղեցույցներ, բուկլետ (անգլերեն) ու տեղեկատվական գրքույկներ:

Խմբագրվել, սրբագրվել և տպագրության է պատրաստվել ԵՊՀ 2011/2012 ուստարվա գործունեության հաշվետվությունը: Պատրաստվել և հրատարակվել է ԵՊՀ ֆակուլտետները և կենտրոնները ներկայացնող անգլերեն բուկլետ:

2012/2013 ուստարվա ընթացքում լույս է տեսել «Երևանի համալսարան» թերթի 10 համար՝ միջինը 32 էջ ծավալով, յուրաքանչյուր համարում՝ 45-50 նյութ (ուստարվա կտրվածքով՝ 450-500 նյութ, այդ թվում՝ վերլուծություններ, հարցազրույցներ, կայացած միջոցառումների լուսաբանումներ և այլն): «Երևանի համալսարան» պաշտոնաթերթը հանդես է եկել հստակ խորագրերով՝ «Քաղաքականություն», «Գիտություն», «Կրթություն», «Հասարակություն», «Մարզական», «Մշակույթ», «Միջազգային», «Ուսումնագիտական խճանկար»:

Մեթոդական աշխատանքների իրականացում

Անցկացվել են ԵՊՀ արտաքին իմիջի վերաբերյալ Երևանի բնակչության պատկերացումների բացահայտմանն ուղղված և հեռախոսային հարցման մեթոդով իրականացված հետազոտության յոթերորդ և ութերորդ փուլերը: Հետազոտությունը շարունակական բնույթ ունի և անցկացվում է վեց ամիսը մեկ:

ԵՊՀ կարիերայի կենտրոնի հետ համատեղ անցկացվել է կենտրոնի գործառույթների և ուսանողների զբաղվածության վերաբերյալ հետազոտություն:

Ինտերնետային ռեսուրսների զարգացում, համացանցային տիրույթում ԵՊՀ-ի վերաբերյալ տեղեկատվության և տեսանյութերի տարածում

Մշակվել է ԵՊՀ ինտերնետային ռեսուրսների զարգացման նոր գործողությունների պլան, համաձայն որի՝ հիմնովին նորացվել է ԵՊՀ պաշտոնական ինտերնետային կայքը՝ www.yasu.am հասցեով, որը վերափոխվել է պորտալի՝ նոր դիզայնով, կառուցվածքային և ծրագրային լուծումներով: Նորաստեղծ պորտալում ընդգրկված են 47 կայք ու ենթակայք: Այսքանով հանդերձ, պահպանվել է ԵՊՀ նախկին՝ 2006 թվականին գործարկված կայքում առկա տեղեկատվությունը՝ ներառյալ լուրերի ողջ

արխիվը: Կայքի «Նորություններ» բաժնում հրապարակվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն 1152 նյութ:

Շահառուների հետ ապահովվել է առցանց հետադարձ կապ, ինչպես նաև մշակվել և վերլուծվել են էլեկտրոնային փոստով ստացված նամակները: ԵՊՀ պորտալում գործում է «Հարց-պատասխան» բաժինը, որի միջոցով ստացված բազմաբնույթ (1192` հայերեն, անգլերեն, ռուսերեն) նամակներին ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների օգնությամբ հնարավորինս սեղմ ժամկետներում տրվել են սպառիչ պատասխաններ:

Ամենօրյա օպերատիվ աշխատանքի շնորհիվ և կայքի այցելուների հետ ինտերակտիվ կապ ապահովելու արդյունքում, նախորդ ուստարվա համեմատ, կայքի այցելուների թիվը աճել է` հասնելով օրական միջինը 4500-ի:

Ամբողջությամբ գործարկվել են ԵՊՀ ֆակուլտետների համար նախատեսված առանձին կայքերը, որոնք տեղադրվել են www.yasu.am/faculties հասցեում: Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետների կայքերում տեղադրվել և թարմացվել են 1631 դասախոսների տվյալներ, 1074 դասախոսների լուսանկարներ, 1238 հայերեն և 1187 անգլերեն կենսագրական տվյալներ, 13000 գիտական հրապարակումների մասին տեղեկություններ:

Վարչական փաստաթղթերի (<http://doc.yasu.am>) կայքը թարմացվել է ավելի քան 200 նոր փաստաթղթերով, ԵՊՀ մասնագիտական աստիճանաշնորհման խորհուրդների (<http://yasu.am/council>) կայքը թարմացվել է 361 անգամ: Գործարկվել են համալսարանական քիմիական բլոգը, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնի, «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբի կայքերը: Նախագծվել են «Կրթություն», «Միջազգային համագործակցություն», «Դիմորդ» խորագրերով կայքերը, ինչպես նաև մի շարք կենտրոնների, ուսանողական կառույցների համապատասխան ինտերնետային ռեսուրսները:

Գործարկվել է «Գիտություն» կայքէջը, որը ներառում է ԵՊՀ գիտական հանդեսները, գիտական ենթակառուցվածքները, կայանալիք գիտական միջոցառումները և այլ տեղեկատվություն:

Նոր հնարավորություններ է ստեղծվել կրթական, գիտական, մշակութային և այլ իրադարձություններին տեղեկանալու համար՝ <http://www.yasu.am/calendar> կայքի միջոցով, որտեղ ներկայացվում են համալսարանում կայանալիք միջոցառումները և տարբեր հայտարարություններ:

Սոցիալական ցանցերում (Facebook, Google+, Twitter) վարվել են ԵՊՀ էջերը, մասնավորապես facebook-ի (<http://www.facebook.com/ysu.am>) տիրույթում բազմաթիվ այցելուներ բուռն քննարկումներ են ծավալել (ԵՊՀ Facebook-ի էջի հետևորդների թիվը հասել է 9300-ի):

Առկա և հեռակա ուսուցման համակարգերում դիմորդների համար ԵՊՀ ինտերնետային կայքում տեղադրվել է համապատասխան տեղեկատվություն, իսկ հեռակա ուսուցման ընդունելության քննությունների պատասխանների 30 ձևաթղթեր օրական երկու անգամ օպերատիվ կերպով տեղադրվել են կայքում, ինչպես նաև 2013 թ-ին առկա ուսուցման համակարգով ԵՊՀ ընդունված բոլոր ուսանողների տվյալները:

Առանձին էջով ներկայացվում են տեսասրահը և պատկերասրահը, որոնցից առաջինը համալրված է շուրջ 70 տեսանյութով, իսկ երկրորդը՝ 112 այբուբանով (այս պարագայում նույնպես պահպանվել է նախորդ կայքի արխիվը): Զգալիորեն փոխվել է կայքի այցելուների հետ ինտերակտիվ հետադարձ կապի ապահովման գործիք հանդիսացող բաժինը՝ <http://www.yasu.am/faq> (հարց-պատասխան):

Իրականացված աշխատանքների արդյունքում էապես ավելացել է այցելուների թիվը:

2013 թվականի օգոստոսին Վեբոմետրիքսը (Webometrics Ranking of World Universities) հրապարակել է բուհական համաշխարհային վարկանիշային աղյուսակը: ԵՊՀ-ի վարկանիշը կազմում է 3152, և ԵՊՀ-ն գլխավորում է ՀՀ բուհերի ցանկը:

Լուսանկարների և տեսանյութերի արխիվացում

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են 582 լուսանկարահանումներ (միջոցառումներ, թերթի համար ֆոտոսեսիաներ և այլն), ընդհանուր թվով՝ 24134 լուսանկար: Տեսանկարահանված միջոցառումների տևողությունը կազմել է ավելի քան 6400 րոպե: Տեսաշարն ամբողջությամբ թվանշանայնացվել և արխիվացվել է DVD սկավառակների վրա:

Թվանշայնացվել և արխիվացվել են VHS և SVHS ձևաչափով նկարահանված արխիվային նյութերը (շուրջ 340 ժամ): Միաժամանակ, թվանշայնացվել և արխիվացվել են անցյալ դարի 70-ական թվականներից մինչև 2006 թ. գունավոր ֆոտոժապավենով լուսանկարահանված նյութերը՝ ընդհանուր թվով 12000 հատ: Վարչության համապատասխան բաժնի աշխատակիցները ԵՊՀ-ում կայացած միջոցառումների լուսանկարներով ապահովել են ինչպես համալսարանական, այնպես էլ հանրապետական մամուլը:

Միջոցներ է ձեռնարկվել վարչության և «Օրդֆիլմ» կինոարտադրող ընկերության համագործակցության արդյունքում համատեղ նկարահանված՝ մայր բուհի անցած ավելի քան 90-ամյա ուղին ներկայացնող «Իմ տունն այստեղ է» եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) փաստավավերագրական ֆիլմի հայերեն տարբերակը Հայաստանի հանրային հեռուստաընկերությամբ եթեր հեռարձակելու ուղղությամբ: Ֆիլմը համալսարանականների համար ցուցադրվել է նաև «Մոսկվա» կինոթատրոնում:

2. Տեղեկատվական համակարգերի սպասարկում և զարգացում

Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում շարունակվել են աշխատանքները ԵՊՀ տեղեկատվական համակարգերի զարգացման և սպասարկման ուղղությամբ: Այդ աշխատանքները պայմանականորեն կարելի է բաժանել երեք հիմնական խմբի.

- տեղեկատվական համակարգերի զարգացման ուղղությամբ տարվող քաղաքականության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, համապատասխան ծրագրերի և միջոցառումների մշակում և իրականացում,
- ներհամալսարանական համակարգչային ցանցի և համալսարանական տեղեկատվական համակարգերի սպասարկում և զարգացում,
- համալսարանում առկա համակարգչային տեխնիկայի սպասարկում և արդիականացում:

Տեղեկատվական համակարգերի զարգացման ուղղությամբ տարվող քաղաքականության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, համապատասխան ծրագրերի և միջոցառումների մշակում և իրականացում

Ակտիվ աշխատանքներ են կատարվել տեղեկատվական համակարգերի զարգացման ոլորտում ԵՊՀ-ում իրականացվող ծրագրերի մշակման ուղղությամբ: Մասնավորապես, աշխատանքներ են իրականացվել գործող տեղեկատվական համակարգերի ինտեգրման և համապատասխան ենթակառուցվածքների զարգացման, հեռախոսային և ներքին կապի համակարգի արդիականացման ուղղությամբ:

Նշված և մի շարք այլ տեխնիկական և տեխնոլոգիական խնդիրների լուծման համար ԵՊՀ ռեկտորի հրամանով ստեղծվել է ԵՊՀ ռեկտորին առընթեր տեխնիկական խորհուրդ:

Մի շարք միջազգային ծրագրերի շրջանակներում աշխատանքներ են տարվել զբաղվածության և այլ խնդիրների լուծման նպատակով շրջանավարտների տվյալների բազաների և «Դասընթացների և կրթական ծրագրերի որակի առցանց կառավարման համակարգի և ռեսուրս շտեմարանի» ստեղծման ուղղությամբ: Համալսարանը ներգրավված է նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության նախաձեռնությամբ իրականացվող մասնագիտական կրթության տեղեկատվական համակարգի ներդրման գործընթացում: Միջոցառումներ են իրականացվել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության և վարչական գործընթացների ավտոմատացման համակարգի զարգացման ուղղությամբ:

Ներհամալսարանական համակարգչային ցանցի և համալսարանական տեղեկատվական համակարգերի սպասարկում և զարգացում

Իր չափերով և տեխնիկական հագեցվածությամբ ու համապատասխան որակական բնութագրիչներով ԵՊՀ համակարգչային ցանցն առանձնանում է Հայաստանի բուհական համակարգում և զբաղեցնում առաջատար դիրք:

Հաշվետու ուստարում շարունակվել են աշխատանքները ներհամալսարանական ցանցի ընդլայնման ուղղությամբ. ԵՊՀ ցանցին են միացվել ինչպես նոր ձեռքբերված, այնպես էլ նախկինում ձեռքբերված համակարգիչները (շուրջ 200 համակարգիչ), վերանորոգված մասնաշենքերում և այլ լսարաններում ու աշխատասենյակներում

ԵՊՀ համակարգչային ցանցին միանալու նպատակով անցկացվել է նոր համակարգչային ցանց: ԵՊՀ ներքին ցանցին լարանցամաբ միացված ընդհանուր կետերի (սարքերի) թիվը հասել է 2300-ի, իսկ անլար ինտերնետ կապինը (WiFi)՝ 60-ի:

ԵՊՀ հյուրերի տունը, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը, ԵՊՀ միջազգային կրթական կենտրոնը և Կիևյան փողոցում գտնվող ուսումնական մասնաշենքը օպտիկամանրաթելային կապուղիով միացվել են ԵՊՀ ներքին ցանցին:

Հիմնովին վերանորոգվել է ԵՊՀ կենտրոնական սերվերային սենյակը, տեղադրվել են նոր անխափան սնուցման սարքեր: Սերվերների սենյակի ամբողջությամբ վերանորոգումից հետո լիովին վերականգնվել է սերվերների անխափան աշխատանքը: Ապահովվել են սերվերների սպասարկման աշխատանքները:

ԵՊՀ աշխատակիցների ինտերնետային կապից օգտվելու հնարավորությունը դարձել է անսահմանափակ՝ ամբողջովին վերացվել է ինտերնետը լիմիտացված քարտերով տրամադրելու համակարգը: Համալսարանի ինտերնետ կապի թողունակությունը ավելացել է 50% և միջինը կազմել է 28 Mb/s (օգտվողների թիվը հասնում է 710-ի):

Ապահովվել է առանձին սերվերով ԵՊՀ-ի www.yasu.am պորտալի շուրջ 50 կայքերի հոստինգը (տեղադրում ինտերնետում), և բոլոր կայքերի անխափան աշխատանքն ու անվտանգության բարձր մակարդակը: ԵՊՀ աշխատակիցներին տրամադրվել են շուրջ 380 նոր էլեկտրոնային փոստի հասցեներ ysu.am դոմեյնում: Ապահովվել են ԵՊՀ էլեկտրոնային փոստի սերվերի աշխատանքները (աշխատակիցների էլեկտրոնային փոստի հասցեների ընդհանուր թիվը կազմում է շուրջ 1850): Գործարկվել է ուսանողների էլեկտրոնային փոստի սերվերը (ysu@mail.am), որոշ ֆակուլտետների ուսանողներին տրամադրվել են էլեկտրոնային փոստի հասցեներ՝ համակարգը փորձարկելու նպատակով:

Շարունակվել են նախորդ ուստարում ներդրված պետական քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության ողջ ընթացքը ձայնագրող և առցանց վերահսկողությունն ապահովող համակարգի շահագործման և զարգացման աշխատանքները: Այդ համակարգի շնորհիվ ուսանողները կարող էին բողոքարկել նշված քննությունների արդյունքները: ԵՊՀ-ն հանրապետության միակ բուհն էր, որ այս խնդրի լուծման նպատակով և նման ծավալով կիրառեց տեխնիկայի վերջին

ձեռքբերումները: Հաշվետու ժամանակահատվածում համակարգում տեղադրված է եղել 45 IP տեսախցիկ: Կատարվել են քննությունների ընթացքի փորձական ինտերնետային հեռարձակումներ:

Համալսարանում առկա համակարգչային տեխնիկայի սպասարկում և արդիականացում

Համակարգչային պահեստամասերից հավաքվել և շահագործման է հանձնվել շուրջ 75 նոր համակարգիչ: Կատարվել են ընթացիկ համակարգչային տեխնիկայի վերանորոգման և ցանցի սպասարկման աշխատանքներ (վերանորոգվել են շուրջ 215 համակարգիչ և համակարգչային տեխնիկա (անխափան սնուցման սարքեր, մոնիտորներ, տպիչ սարքեր, սկաներներ), այդ թվում նաև՝ տեղադրվել է ծրագրային ապահովում): Ապահովվել է տեխնիկայի սպասարկումը համալսարանում կայանալիք տարբեր միջոցառումների ժամանակ:

Ուսումնական կենտրոններում և ֆակուլտետներում շարունակվել են անվտանգության տեսախցիկների համակարգի շահագործման և ընդլայնման աշխատանքները: Համապատասխան մասնագետները մշտապես աջակցել են ԵՊՀ աշխատակիցներին համակարգչային տեխնիկայի շահագործման հետ կապված խնդիրներում: Տրամադրվել է համակարգչային ծրագրերին և տեխնիկային վերաբերող խորհրդատվություն (շուրջ 870 այցելություն և խորհրդատվություն), տարվել են բացատրական աշխատանքներ համակարգչային անվտանգության ուղղությամբ:

ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԵՏ

1. Ուսանողական կազմակերպություններ և ուսանողների հետ տարվող աշխատանքներ

2012/2013 ուստարում ԵՊՀ ուսանողական խորհուրդը շարունակել է գործունեությունն իր կանոնադրական կարևորագույն խնդիրների ուղղությամբ՝ ապահովել ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը, պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները, մասնակցել ուսումնական գործընթացի և այլ աշխատանքների կազմակերպմանը և աջակցել ուսանողության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը:

ԵՊՀ ուսանողական խորհուրդն իր հանձնաժողովների համակարգված և կանոնավոր աշխատանքի արդյունքում խթանել է ուսանողների գիտակրթական, հոգևոր, մշակութային, ստեղծագործական և ֆիզիկական զարգացումը, աջակցել է ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, կազմակերպել է ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը, ինչպես նաև զբաղվել է ուսանողներին հուզող բազմաթիվ այլ խնդիրներով: 2012/2013 ուստարվա ընթացքում ԵՊՀ ՈՒԽ-ն կազմակերպել է շուրջ 250 միջոցառում:

Ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարման գործընթացին ապահովվում է տարբեր մակարդակի կոլեգիալ կառավարման մարմիններում (ԵՊՀ խորհուրդ, գիտական խորհուրդ, ֆակուլտետների խորհուրդներ և գիտական խորհուրդներ) ուսանողների ներգրավմամբ և ակտիվ մասնակցությամբ:

ՈՒԽ աշխատանքներում էական կարևորություն ունի ուսանողներին գործող կրթական համակարգի, նրանց իրավունքների և պարտականությունների և ներհամալսարանական կյանքի մասին իրազեկելու խնդիրը: Կազմակերպվել են քննարկումներ, կլոր սեղաններ, սեմինարներ՝ ԵՊՀ ուսանողներին, հատկապես 1-ին կուրսեցիներին իրենց իրավունքներին և պարտականություններին ծանոթացնելու նպատակով, ինչպես նաև ուսուցման կրեդիտային համակարգի մասին նրանց իրազեկելու և այն ավելի ընկալելի դարձնելու համար: Անցկացվել են ավանդական դարձած «Բոլոնիայի գործընթացը Հայաստանում» դասընթացները, որոնց ընթացքում ուսանողները

իրագրվել են գործընթացի մանրամասների և իրավական նորմերի մասին: Աշխատանքներ են տարվել ՈԻԽ կայքի և ուսանողական պորտալի մշակման ուղղությամբ:

Ուսանողական ծրագրերի իրականացման համատեքստում կարևոր նշանակություն ունեն ռազմահայրենասիրական դաստիարակության միջոցառումները: Դրանք բազմազան են՝ հանդիպումներ, քննարկումներ, հուշ-երեկոներ, գիտաժողովներ համալսարանում, ինչպես նաև այցելություններ գորամասեր, պատմամշակութային վայրեր և այլն: Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ ուսանողներն ու պրոֆեսորադասախոսական կազմը չորս տարբեր մեծ ծրագրերով այցելել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Բացի ավանդաբար աշնանը և գարնանը ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Համալսարանական պուրակում կազմակերպվող երկու ծառատունկ-ծրագրերից՝ կազմակերպվել է ամառային դպրոց 30 ուսանողների մասնակցությամբ, ինչպես նաև այցեր ԼՂՀ պատմաճարտարապետական հուշարձաններ, գորամասեր, դպրոցներ և այլն:

Հետևողական աշխատանքներ են իրականացրել ուսանողների սոցիալական վիճակը բարելավելու ուղղությամբ, մասնավորապես՝ իրականացվել են ամառային հանգստի, ազատ ժամանցի ծրագրեր, ուսանողների ուսման վարձերի զեղչեր, կրթաթոշակներ, ցուցաբերվել է այլ աջակցություն (վերոհիշյալ ՈԻԽ ծրագրերում ներգրավված է եղել շուրջ 1000 ուսանող): Իսկ ընդհանուր հաշվարկով՝ շուրջ 4050 ուսանող հաշվետու ուստարում օգտվել է ուսման վարձերի զեղչերից:

Աշխատանքներ են տարվել ուսանողների ազատ ժամանցը կազմակերպելու ուղղությամբ: Անցկացվել են բանավեճի, «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ»-ի և այլ ինտելեկտուալ խաղերի առաջնություններ: Ուսանողության միջազգային օրվա առիթով կազմակերպվել է «Ուսանող-2012» մրցանակաբաշխությունը և հասարակական ակտիվություն դրսևորած և ԵՊՀ պատիվը բարձր պահած ուսանողները պարգևատրվել են ԵՊՀ ՈԻԽ մեդալով: Նույն օրը կայացել է նաև ամենամյա «Ուսանողական ռեկտորատ» միջոցառումը, երբ մեկ օրով ուսանողական շարադրությունների մրցույթի հաղթողները ստանձնում են «համալսարանը ղեկավարելու» պարտականությունները:

Կազմակերպվել է ԵՊՀ ուսանողական սպարտակիադան, որի շրջանակում տեղի են ունեցել ֆուտբոլի, սեղանի թենիսի, շախմատի, վոլեյբոլի, բասկետբոլի մրցումներ: Շարունակվել է համագործակցությունը նաև Հայ Առաքելական եկեղեցու հետ,

որի շրջանակում կազմակերպվել են բազմաթիվ հանդիպումներ հոգևորականների հետ, այցելություններ Հայաստանի պատմամշակութային վայրեր:

Աշխատանքներ են ծավալվել նաև ՀՀ տարբեր կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում: ԵՊՀ ՈԻԽ-ն անդամակցում է Հայաստանի ազգային ուսանողական ասոցիացիային և Հայաստանի երիտասարդական ազգային խորհրդին և մասնակցում է այդ կազմակերպությունների աշխատանքներին: Հաշվետու ուստարում ակտիվ է եղել նաև համագործակցությունը Հայաստանի երիտասարդական հիմնադրամի և հասարակական բազմաթիվ այլ կազմակերպությունների հետ, որի շրջանակներում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ՝ այցելություններ Արցախ, սեմինար-դասընթացներ, ՀՀ բարձրագույն կրթության որակի վերաբերյալ քննարկումներ և այլն:

2012/2013 ուստարում Ուսանողական գիտական ընկերությունն իրականացրել է իր կանոնադրային պահանջներից բխող միջոցառումներ, նպաստել է ուսանողության գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը, ինչի նպատակով կազմակերպվել է 541 միջոցառում, այդ թվում՝ հանրապետական, միջբուհական և ֆակուլտետային գիտաժողովներ, սեմինար-քննարկումներ, հանդիպում-դասախոսություններ, ֆիլմերի դիտումներ, օլիմպիադաներ, ինտելեկտուալ խաղեր, դասախաղեր, բանավեճեր, գիտաճանաչողական էքսկուրսիաներ, դասախոսություններ դպրոցներում և այլն:

Հանրապետական և միջբուհական գիտաժողովներից կարելի է առանձնացնել Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ՈԻԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովը, սոցիոլոգիայի ֆակուլտետի հիմնադրման 8-ամյակին, Իջևանի մասնաճյուղի ՈԻԳԸ հիմնադրման 10-ամյակին, արևելագիտության ֆակուլտետի հիմնադրման 45-ամյակին, Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 95-րդ տարեդարձին, Արցախյան շարժման սկզբնավորման 25-ամյակին նվիրված գիտաժողովները:

ԵՊՀ ՈԻԳԸ-ի կողմից կազմակերպված գիտաժողովների ընթացքում հնչել է շուրջ 1000 գիտական զեկուցում: Ձեկուցումների թիվը, նախորդ ուստարվա համեմատությամբ, ավելացել է շուրջ 43 %-ով, ինչը պայմանավորված է Հայ գրատպության

500-ամյակին և ԵՊՀ ՈԻԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում ներկայացված 350 գեկուցումների առկայությամբ:

ՈԻԳԸ միջոցառումներից կարևոր նշանակություն ունեն ուսանողների գիտական աշխատանքներ կատարելու հմտությունների ուսուցմանը վերաբերող տարբեր միջոցառումները, ներֆակուլտետային սեմինարները, որոնց շրջանակներում ուսանողները սովորում են ինչպես կատարել գիտական աշխատանք: Կազմակերպվել են նաև CUDA համակարգով զուգահեռ ծրագրավորման օնլայն դասընթացներ:

2012/2013 ուստարվա ընթացքում ՈԻԳԸ անդամներից շատերն արժանացել են տարաբնույթ մրցանակների: 2013 թ. փետրվարի 20-ին ՀՀ ԿԳՆ կողմից կազմակերպվող «ՀՀ լավագույն ուսանող» մրցանակաբաշխությանը ԵՊՀ 7 ուսանողներ արժանացել են մրցանակների: 2013 թ. մարտի 5-ին ՀՀ սփյուռքի նախարարի կողմից շնորհվել են «Հայապահպանության գործում նշանակալի ներդրում ունենալու համար» ամենամյա մրցանակաբաշխության և Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ գիտական աշխատանքների և շարադրությունների միջազգային մրցույթի հաղթողների մրցանակները: Մրցանակաբաշխության շրջանակում ՀՀ-ից մրցանակի են արժանացել միայն ԵՊՀ-ից ներկայացված հայտերը, որոնցից հարկ է առանձնացնել ԵՊՀ ՈԻԳԸ գիտական հոդվածների 2012 թ. ժողովածուի 2-րդ (ցեղասպանագիտական) հատորը (1-ին կարգ):

Անցած ուստարվա ընթացքում ՈԻԳԸ մեծ թվով անդամներ մասնակցել են միջազգային գիտաժողովների ու համաժողովների Մոսկվայում (ՌԴ), Լվովում (Ուկրաինա), Մադրիդում (Իսպանիա), Ուդինեում (Իտալիա), Մինսկում (Բելառուս), Դոնեցկում (Ուկրաինա), Վորոնեժում (ՌԴ) և այլուր: Մասնավորապես 2013 թ. ապրիլի 8-12-ը ԵՊՀ 9 ուսանողներ և ասպիրանտներ մասնակցել են Մոսկվայի պետական համալսարանի կողմից կազմակերպված «Լոմոնոսով-2013» միջազգային երիտասարդական գիտական համաժողովին, ամրապնդվել է համագործակցությունը Մոսկվայի պետական համալսարանի ուսանողական միության հետ:

ՈԻԳԸ գործուն աջակցությամբ ապահովվել է ԵՊՀ ուսանողների մասնակցությունը Գյումրիի և Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտների, Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի, Գևորգյան հոգևոր ճեմարանի, Սևանի Վազգենյան դպրանոցի, Ա. Խանփերյանցի անվան ռազմաավիացիոն

ինստիտուտի, Սարդարապատի թանգարան-ինստիտուտի կողմից կազմակերպված գիտաժողովներին և տարաբնույթ միջոցառումներին: Միննույն ժամանակ ապահովվել է վերը նշված բուհերի ուսանողների մասնակցությունը ԵՊՀ ՌԻԳԸ կողմից կազմակերպված գիտաժողովներին:

ՌԻԳԸ-ն հաշվետու ուստարում հրատարակել է գիտական հոդվածների 9 և թեզիսների 2 ժողովածու, 372 գիտական հոդված, 80 թեզիս: Հրատարակումների թիվը, նախորդ ուստարվա համեմատ, ավելի քան 3 անգամ ավելի է, ինչը պայմանավորված է Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ՌԻԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի լավագույն 244 աշխատանքների հրատարակմամբ:

ՌԻԳԸ աշխատանքներին մասնակցում է մոտ 1200 սովորող, որից ՌԻԳԸ կառուցվածքային ստորաբաժանումների անդամ է շուրջ 390-ը: Խնդիր է հանդիսանում հետազոտական որակներ ունեցող կադրերի հոսունությունը, ինչը հիմնականում պայմանավորված է զինապարտությունից տարկետմամբ մագիստրոսական և ասպիրանտական տեղերի սղությամբ, որի պատճառով պոտենցիալ գիտական կադրերի վերարտադրությունը որոշակի արգելակում է ստանում:

Համալսարանի ուսանողական կազմակերպությունների աշխատանքներին մշտապես կազմակերպչական և մեթոդական աջակցություն է ցուցաբերել ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժինը: Իրականացվել են բազմաբովանդակ միջոցառումներ, որոնք միտված են եղել զարգացնելու ուսանողական կազմակերպությունների կարողությունները, տարածելու տեղեկատվություն նրանց կողմից իրականացվող ծրագրերի մասին և այլն: Բաժնի և համապատասխան կառույցների համատեղ իրականացված աշխատանքներից հարկ է առանձնացնել ուսանողների ամառային հանգստի կազմակերպումը Բյուրականի ուսումնաարտադրական բազայում, Արցախյան շարժման 25-ամյակին նվիրված հանրապետական երիտասարդական գիտաժողովի և Քարվաճառի ազատագրման 20-ամյակին նվիրված համերգի կազմակերպումը Քարվաճառի գորամասերում, ԼՂՀ-ում իրականացված այլ ծրագրեր, ինչպես նաև ռազմահայրենասիրական ուղղվածություն ունեցող տարբեր միջոցառումներ: Ուսանողների հետ տարվող աշխատանքներում ներառված են նաև ուսանողների տարբեր խնդիրների քննարկումներն ու ներկայացումը ռեկտորատին: Ապահովվել է ԵՊՀ ջոկատի մասնակցությունը «Բազե-2013» ամենամյա երիտասարդական հավաքին:

2. Մշակույթի կենտրոն

2012/2013 ուստարում ԵՊՀ մշակույթի կենտրոնը շարունակել է իր բազմամյա մշակութային գործունեությունը՝ կազմակերպելով 36 միջոցառում և 11 կինոդիտում-քննարկում: «Համալսարանական» թատրոն-ստուդիան բեմադրել է 1 նոր ներկայացում: Գրական ստուդիայի ջանքերով տպագրվել է «Գրական համալսարան. ստեղծագործում են ուսանողները» շարքի առաջին համարը: «Մշակութային դաստիարակություն» ծրագրի շրջանակում կազմակերպվել է 1 ներկայացման դիտում-քննարկում: Վերը նշված միջոցառումներին մասնակցել է շուրջ 5000 ուսանող: Կազմակերպչական աշխատանքներին մասնակցում է շուրջ 270 ուսանող:

Ավանդական միջոցառումների շարքում պետք է առանձնացնել ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի բակում անցկացված «ԵՊՀ մեծարման և առաջին կուրսեցիների երդման արարողությունը»: Մինչ այդ կազմակերպվել է գիրք կարդալը խրախուսող 9 ֆլեշ մոբ: ՀՀ-ում անցկացվող Ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակում կենտրոնը կազմակերպել է ֆրանսիական երգի ամենամյա փառատոն: Հայոց բանակի կազմավորման 21-ամյակի առթիվ կազմակերպվել է «Երազի իմ երկիր...» խորագրով համերգ:

Հաշվետու տարում մշակույթի կենտրոնի սաները մասնակցել են հանրապետական ու միջազգային մի շարք մրցույթների և փառատոների: Կենտրոնի մեներգիչները մասնակցել են «Մենք երգում ենք Առնո Բաբաջանյանի երգերը» երրորդ հանրապետական ուսանողական երգի փառատոնին, որտեղ համալսարանը ներկայացնող ուսանողներից երեքն արժանացել են երկրորդ, մեկը՝ առաջին մրցանակների: «Համալսարանական» թատրոն-ստուդիան մասնակցել է «Արտ-Ֆեստ» առաջին երիտասարդական հանրապետական բաց փառատոնին՝ ներկայացնելով «Ցուցակը» բեմադրությունը՝ ըստ Ադասի Այվազյանի (ռեժիսոր՝ Կ. Դավթյան), և ստացել հատուկ խրախուսական մրցանակ:

ԵՊՀ-ի «ԵԳՄ» ՈԻՀԱ թիմը մասնակցել է կենտրոնի Ուրախների և հնարամիտների ուսանողական լիգայի «Старый новый KBH» խորագրով խաղերին և զբաղեցրել 3-րդ հորիզոնականը:

Մշակույթի կենտրոնը սերտորեն համագործակցում է ինչպես ԵՊՀ ստորաբաժանումների, այնպես էլ ՀՀ նախարարությունների և պետական ու հասարակական

հաստատությունների հետ: Կենտրոնը Հայաստանի գրողների միության հետ համատեղ տպագրել է «Քայլեր և արձագանք», «Գրական համալսարան. ստեղծագործում են ուսանողները» շարքերը, որից հետո կազմակերպել է դրանց շնորհանդեսը:

Մշակույթի կենտրոնի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի համատեղ ջանքերով արդեն 4-րդ տարին անընդմեջ կազմակերպվել է Սբ. Վարդանանց տոնին նվիրված միջոցառում: Հայաստանի գրողների միության հետ համատեղ «Ի սկզբանե էր բանն...» գրողների միջազգային փառատոնի շրջանակում մշակույթի կենտրոնը կազմակերպել է հանդիպում համաշխարհային հռչակ վայելող պոետ Ադոնիսի հետ: Մշակույթի կենտրոնն ՈԻԽ-ի և ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնի հետ համատեղ Արցախ կատարած եռօրյա այցելության ընթացքում կազմակերպել է 2 համերգ՝ նվիրված Քարվաճառի ազատագրման 20-ամյակին: ՀՀ սփյուռքի նախարարության «Սփյուռքի ամառային դպրոց» ծրագրի շրջանակում ազգային երգի և պարի դասընթացներն արդեն 2-րդ տարին կազմակերպում է ԵՊՀ մշակույթի կենտրոնը:

Հաշվետու ուստարում կենտրոնի 3-ամյա կինոակումբի և Հայաստանի ազգային կինոկենտրոնի կողմից «Կինոաշուն» փառատոնի շրջանակում մեկ ամիս շարունակ՝ յուրաքանչյուր չորեքշաբթի, ցուցադրվել են հայկական արտադրության նոր ֆիլմեր, որոնց ցուցադրությունից հետո քննարկումներ են եղել ֆիլմարտադրողների հետ (ռեժիսորներ, դերասաններ, պրոդյուսերներ, սցենարիստներ): Փառատոնի ավարտից հետո էլ ամիսը 2 անգամ ցուցադրվել են ինչպես հայկական, այնպես էլ արտասահմանյան արդեն հայտնի ու հռչակավոր ֆիլմեր, որոնց քննարկման ժամանակ հրավիրվել են կինոգետներ: Ծրագրի ընթացքում համալսարանականները դիտել են Արմեն Ռոնովի «Փոքրիկ Իշխանը», Հովհ. Սաֆարյանի «Եթե ես չգամ, իմացի՛ր, որ չկամ», Գր. Հարությունյանի «Կայացում», Ն. Մալյանի «Որդու ծննդյան սպասող հյուսնը», Թ. Ստեփանյանի «Փետրվար 19», Մ. Վաթինյանի «Ժաննան և ձայները», Ֆ. Դովլաթյանի «Երևանյան օրերի խրոնիկա», Կ. Լելուշի «Տղամարդ և կին» և Ա. Իգիթյանի «Վանա ծովուն արշալույսը» ֆիլմերը: Մշակույթի կենտրոնի առաջարկով Ա. Երնջակյանի «Հորելյանական հաճախորդ» ֆիլմի բացառիկ ցուցադրությունը կայացել է կենտրոնի դահլիճում:

3. Շրջանավարտների և կարիերայի կենտրոն

2012/2013 ուսումնական տարվա ընթացքում Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կողմից մշակված և կյանքի կոչված ծրագրերն ու միջոցառումները նպատակաուղղված են եղել ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրում առկա մի շարք խնդիրների իրագործմանն ու աշխատաշուկայում համալսարանականների մրցունակության բարձրացմանը, ինչպես նաև համալսարան-ձեռնարկություն փոխգործակցության նոր ուղիների ձեռքբերմանը, երիտասարդ մասնագետների զբաղվածության խնդիրների լուծման աջակցմանը: Պարբերաբար կազմակերպվել են սեմինար-դասընթացներ, ուսանողների մասնագիտական աճին նպաստող հանդիպումներ, կամավորական աշխատանքներ, ինթերնշիփեր, արտաուսումնական պրակտիկաներ և այլն:

Սեմինար-դասընթացների և կարիերայի զարգացմանը նպաստող ծրագրերի շարքում հարկ է նշել «ՎիվաՄեյ-ՄՏՄ» ընկերության կողմից կազմակերպված մի շարք «Տեխնիկական դպրոցները», «Օրանժ Արմենիա» ընկերության կողմից անցկացվող «Ինչպես գրել CV և մասնակցել հարցազրույցի», «Հաճախորդների գերազանց սպասարկում», «Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության տեսական և պրակտիկ կողմերը», «2G/3G ցանցեր» խորագրերով սեմինար-դասընթացները, ՏՄտարտ-Ափ Հաուս՝ նախագծի շրջանակներում իրականացվող սկսնակ ընկերությունների ստեղծման և զարգացման ծրագիրը, «Այ Էյ Բի Սենթր» կազմակերպության կողմից իրականացվող «Ֆինանսական աուդիտի և հարկային ստուգումների տարբերությունները» թեմայով սեմինար-դասընթացների շարքը, կենտրոնի կողմից պարբերաբար իրականացվող «Ռեզյումե կազմելու սկզբունքները» խորագրով սեմինար-դասընթացների շարքը և այլն:

Ընդհանուր առմամբ, հաշվետու ուստարվա ընթացքում կազմակերպվել է 35 սեմինար-դասընթաց, որին մասնակցել է թվով 557 ուսանող և շրջանավարտ:

Կազմակերպված հանդիպումների շարքում կարևորում ենք «Կոնվերսանկ» ընկերության ներկայացուցիչների հետ հանդիպումների շարքը, որին մասնակցել է ԵՊՀ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի, ֆիզիկայի և տնտեսագիտության ֆակուլտետների 78 ուսանող:

Կենտրոնը կազմակերպել է նաև բազմաթիվ ինթերնշիփեր և պրակտիկաներ, որոնց մասնակցել են, մասնավորապես, 43 ուսանող՝ «ՎիվաՄեյ-USU» ընկերության տարբեր բաժիններում, 15 ուսանող՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում, 45 ուսանող՝ «Պրոկրե-դիտ» բանկում, 20 ուսանող՝ ԵՊՀ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչությունում, ինչպես նաև «ԿոնվերսԲանկ», «Արմենտել», ՏՕբանԺ Արմենիա՝ ընկերություններում: Կենտրոնի միջոցով ինթերնշիփերին մասնակցել է շուրջ 143 ուսանող:

Կարևոր նշանակություն ունի նաև հաշվետու ժամանակաշրջանում կենտրոնի մասնակցությունը միջազգային փորձի փոխանակման ծրագրերին: Համապատասխան «Տեմպուս» ծրագրի շրջանակներում կենտրոնը ներգրավված է շրջանավարտների էլեկտրոնային բազայի մշակման աշխատանքներում: Կենտրոնը սերտորեն համագործակցել է նաև ԵՊՀ գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի հետ:

Ձեռնարկությունների հետ արդյունավետ համագործակցության շնորհիվ 38 ուսանող աշխատանքի է ընդունվել ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ում, ՀՀ փաստաբանական դպրոց» հիմնադրամում, «Արեգակ» ունիվերսալ վարկային կազմակերպությունում, «Բաեստ» ՍՊԸ-ում, «Ամիստադ տուր» տուրիստական ընկերությունում և մի շարք այլ ձեռնարկություններում:

Կենտրոնը ներգրավված է եղել ԵՊՀ գիտական խորհրդին կից Ձեռնարկությունների հետ ԵՊՀ համագործակցության մշտական հանձնաժողովի աշխատանքներում, վարել է հանձնաժողովի քարտուղարությունը, մշակել է այս ոլորտում իրականացվող աշխատանքների ռազմավարությունը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2012/2013 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանում զգալի աշխատանքներ են իրականացվել սոցիալական քաղաքականության ուղղությամբ: ԵՊՀ վարչակազմը և արհեստակցական կազմակերպությունը, ինչպես ամեն տարի, առավել ուշադրություն են դարձրել համալսարանի աշխատակիցների հանգստի, առողջության պահպանման, սոցիալական այլևայլ խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացմանը: Մասնավորապես, արհեստակցական կազմակերպությունն իր միջոցներից, որպես օգնություն, համալսարանի 537 աշխատակիցների, առանձին դեպքերում նաև սոցիալապես խիստ անապահով և հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողների հատկացրել է քսաներկու միլիոն չորս հարյուր երեսունութ հազար դրամ:

Շարունակվել է տոնական միջոցառումների առիթով համալսարանում բարի ավանդույթ դարձած տարաբնույթ սոցիալական միջոցառումների ձեռնարկումը: Այսպես, ԵՊՀ աշխատակիցների և ուսանողների 2500 երեխաների և թոռնիկների համար կազմակերպվել և իրականացվել են ամանորյա միջոցառումներ: Նրանց հատկացվել են տոնական ներկայացման տոմսեր և նվերներ, իսկ հունիսի 1-ի՝ Երեխաների պաշտպանության օրվա առթիվ ձեռք է բերվել կրկեսային-երաժշտական ներկայացման 1000 տոմս: 1731 կին աշխատակիցների համար իրականացվել է Կանանց միջազգային օրվան՝ Մարտի 8-ին նվիրված համահամալսարանական միջոցառում: Ձեռք է բերվել և կոլեկտիվի անդամներին անվճար հատկացվել է թատերական տարբեր ներկայացումների 1728 տոմս:

Կազմակերպվել է աշխատակիցների, նրանց ընտանիքների անդամների և ուսանողների հանգիստը Ծաղկաձորի, Հանքավանի և Բյուրականի ուսումնաարտադրական բազաներում: Իրականացվել է հանգստի մեկնողների համար ուղեգրերի արժեքի մասնակի զեղչման անհատական մոտեցման համակարգ: Սոցիալապես առավել անապահով աշխատակիցների նկատմամբ կիրառվել է ուղեգրերի արժեքը 50 և 100 %-ով զեղչելու սկզբունքը: Հանքավանի ուսումնաարտադրական բազայում իրենց ամառային հանգիստն են անցկացրել (հուլիս-օգոստոս ամիսներին) համալսարանի 79 աշխատակից և ուսանող, որը կազմել է 650 մարդ-օր, Բյուրականում՝ 397

(622 մարդ-օր), իսկ Ծաղկաձորի՝ շուրջամյա գործող «Համալսարան» բազայում հանգստացել է մոտ 922 մարդ (3534 մարդ-օր): Ընդհանուր առմամբ, համալսարանի երեք ուսումնասիրտադրական բազաներում հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է համալսարանի ավելի քան 1398 աշխատակիցների, նրանց ընտանիքների անդամների և ուսանողների (4806 մարդ-օր) հանգիստը:

ԵՊՀ արհեստակցական կազմակերպության նախաձեռնությամբ և անմիջական աջակցությամբ 2012/2013 ուսումնական տարում կազմակերպել են մի շարք արշավներ դեպի Հայաստանի տարբեր տեսարժան վայրեր, որոնց մասնակցել են տարբեր ֆակուլտետների կուլեկտիվներ:

Շարունակվել է 2010 թվականի հունիսի 1-ից ԵՊՀ արհեստակցական կազմակերպության կողմից իրականացվող «Ծննդոգնություն համալսարանականներին» ծրագիրը, որի նպատակը համալսարանի աշխատակցին՝ երեխայի ծննդյան կապակցությամբ ֆինանսապես աջակցելն է: Ծնվող առաջին երեխայի համար աշխատակցին հատկացվում է 35000 ՀՀ դրամ գումար, երկրորդ երեխայի համար՝ 70000, երրորդի համար՝ 105000, այնուհետև՝ 35000 ՀՀ դրամով ավելի՝ յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար: Չույգ երեխա ծնվելու դեպքում հաշվարկը կատարվում է առաջին և երկրորդ երեխայի սկզբունքով, երկրորդ զույգ երեխայի դեպքում՝ երկրորդ և երրորդ երեխայի սկզբունքով: Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի շրջանակներում 58 աշխատակցի ընդհանուր առմամբ հատկացվել է երեք միլիոն վեց հարյուր յոթանասունհինգ հազար դրամ գումար (23-ը առաջին երեխայի համար, 24-ը՝ երկրորդի, 10-ը՝ երրորդի, 1-ը՝ չորրորդ երեխայի):

2011 թվականից ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունում գործում է անվճար իրավաբանական խորհրդատվության ծառայություն, որը հաշվետու տարում 127 ԵՊՀ աշխատակցի տրամադրել է իրավաբանական խորհրդատվություն ոչ միայն աշխատանքային, այլև քաղաքացիաիրավական, ընտանեկան, վարչական և այլ իրավական խնդիրների վերաբերյալ: ԵՊՀ աշխատակիցների դիմումների հիման վրա՝ նրանց օրինական իրավունքներն ու շահերը ներկայացվել են ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, քաղաքապետարանում, թաղապետարաններում, համատիրություններում, դատարաններում, ոստիկանությունում, բանկերում և այլ հաստատություններում:

ԵՊՀ արհեստակցական կազմակերպության և «Ինգո Արմենիա» ապահովագրական ՓԲ ընկերության միջև կնքված փոխհամաձայնության շնորհիվ 2012 թվականի նոյեմբերի վերջից սկսած ԵՊՀ աշխատակիցները և ուսանողները հնարավորություն են ստացել իրենց և ընտանիքի անդամներին պատկանող ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրությունն իրականացնել սահմանվածից 10% զեղչով: Սա և՛ ժամանակի, և՛ ֆինանսական խնայողություն է: Հաշվետու տարում նման հնարավորությունից օգտվել է 144 անձ:

Իր ակտիվ գործունեությունն է շարունակել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի արհրյուրոն: Պարբերաբար կազմակերպվել են տարբեր միջոցառումներ (Ամանոր, Մարտի 8, Մայիսի 28, շրջանավարտների դիպլոմների հանձնում), իրականացվել որոշակի նախաձեռնություններ:

2013 թ. հունվարի 1-ից ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունն իր բոլոր ֆինանսական գործարքները կատարում է անկանխիկ ձևով:

2012/2013 ուստարում ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունն ակտիվորեն համագործակցել է Հայաստանի պետական բուհերի արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության, Հայաստանի արհմիությունների հանրապետական կոնֆեդերացիայի, ինչպես նաև Եվրասիական համալսարանների արհմիութենական կազմակերպությունների ասոցիացիայի և Արհմիությունների համընդհանուր կոնֆեդերացիայի հետ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ուսումնական տարում զգալի աշխատանք է կատարվել համալսարանի նյութատեխնիկական բազայի բարելավման ուղղությամբ: Հարկ է նշել, որ հատկապես մեծ է տեղաշարժը համակարգչային տեխնիկայի ձեռքբերման ուղղությամբ: ԵՊՀ տարբեր ստորաբաժանումներին տրամադրվել է 110 համակարգիչ, 56 շարժական համակարգիչ, 15 պլանշետ, 39 բազմաֆունկցիոնալ և 7 պատճենահանող սարքեր և այլն, ընդհանուր՝ 80 մլն դրամ արժեքով: Գնվել է նաև կահույք (ուսանողական նստարաններ, սեղաններ, աթոռներ, պահարաններ, գրատախտակներ և այլն)՝ 16,5 մլն դրամի չափով, կենցաղային տեխնիկա (սառնարաններ, օդորակիչներ, փոշեկուլներ, հեռուստացույցներ, հեռախոսներ և այլն)՝ 17,5 մլն դրամի չափով, գրենական պիտույքներ՝ 13 մլն դրամի չափով: ԵՊՀ գրադարանը համալրվել է նոր գրքերով՝ 19 մլն դրամի չափով:

Մի շարք ֆակուլտետներ (ռադիոֆիզիկայի, քիմիայի, աշխարհագրության և երկրաբանության) համալրվել են արտասահմանյան նորագույն սարքերով (80 մլն դրամ):

Իրականացվել են շենքերի ու շինությունների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ: Հիմնանորոգվել է թիվ 2 մասնաշենքի ձեղնահարկը, որի արդյունքում շուրջ 700 մ² եվրանորոգված տարածք տրամադրվել է ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտին: Հիմնանորոգվել են նաև իրավագիտության ֆակուլտետի 1- 3-րդ հարկերը, թիվ 3 և թիվ 4 մասնաշենքերի մի շարք լսարաններ և լաբորատորիաներ:

Ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկայի և գիտաճանաչողական էքսկուրսիաների կազմակերպման համար ավտոպարկն իրականացրել է 93 ուղերթ, ռազմահայրենասիրական և մշակութային միջոցառումների համար՝ 96 ուղերթ, արտասահմանյան հյուրերի սպասարկման և գիտաժողովների կազմակերպման համար՝ 112 ուղերթ:

ԵՊՀ պահպանության ծառայության աշխատանքների արդյունավետության բարձրացման և տեսահսկման ցանցի ընդլայնման նպատակով տեղադրվել է 12 նոր տեսախցիկ:

Ծաղկաձորի, Հանքավանի, Բյուրականի համալսարանական ուսումնաարտադրական քաղաքները նախապատրաստվել են ուսանողների պրակտիկայի արդյունավետ անցկացման, ինչպես նաև համալսարանի աշխատակիցների և ուսանողների հանգստի լիարժեք կազմակերպման համար:

Հետևողական աշխատանքների արդյունքում սանիտարական մաքրության վիճակը ԵՊՀ մասնաշենքերում հասցվել է պատշաճ մակարդակի: Համալսարանի կանաչ տարածքներում կատարվել են ծառերի խնամքի, կանաչապատման և ծաղկազարդման ծավալուն աշխատանքներ:

ԵՊՀ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղը հաշվետու ժամանակաշրջանում իր գործունեությունն իրականացրել է ելակետ ունենալով մասնաճյուղի ռազմավարական ծրագրի (2011-2015 թթ.) դրույթները:

Առավել հետևողական քայլեր են ձեռնարկվել ուսանողակենտրոն միջավայրի ամրապնդման ուղղությամբ: Կրթական ծրագրերը ևս կազմվել են հիշյալ նպատակադրումից ելնելով, որոնք մշտադիտարկման արդյունքում վերանայվել և անհրաժեշտ փոփոխություններից ու շտկումներից հետո վերահաստատվել են:

Հաշվետու ժամանակաշրջանում ուսումնառության գործընթացում կատարվել են շեշտադրումների որոշակի փոփոխություններ. առավելապես կարևորվել է ուսանողների շրջանում գործնական գիտելիքների և հմտությունների ամրապնդումը: Այս առումով հատուկ քննարկման առարկա են դարձել տարատեսակ պրակտիկաների (ուսումնական, մանկավարժական, արտադրական, հաշվողական) կազմակերպումը և արդյունավետ անցկացումը: Այս գործում մասնաճյուղը զգալիորեն ընդլայնել է մարզում գործող հիմնարկ-ձեռնարկությունների, հանրակրթական դպրոցների և բանկային համակարգի հետ պայմանագրային բազան: Մասնագիտական ամբիոններում քննարկվել և առավել գործնական ուղղվածություն է տրվել պրակտիկաների ծրագրերին:

Մասնաճյուղը զարգացման ռազմավարական ծրագրի դրույթների համատեքստում շարունակաբար նորացրել և համալրել է կրթօջախի նյութատեխնիկական բազան, դրան զուգահեռ՝ առանձնակի կարևորվել է մասնաճյուղի դասախոսական կազմի գիտամանկավարժական արդյունավետ գործունեությունը: Անցած ուստարում մասնաճյուղի չորս դասախոսներ հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ: ԲՈՀ-ի կողմից հաստատված գիտական հանդեսներում հրատարակվել են 84 հոդված, 5 զեկուցումների թեզիս, 6 մեթոդական աշխատանք, 1 մենագրություն և 1 ուսումնական ձեռնարկ: Կիրառական արվեստի ֆակուլտետի դասախոսները հաջողությամբ մասնակցել են հանրապետական մասշտաբի զանազան ցուցահանդեսների: Մասնաճյուղի տնօրենության ուշադրության կենտրոնում է եղել ԵՊՀ տարբեր ամբիոններում և գիտական այլ հաստատություններում մասնաճյուղից

հայցորդ ձևակերպված դասախոսների կատարած գիտական գործունեությունը: Պարբերաբար լսվել է նրանց հաղորդումներն ու հաշվետվությունները:

Հաշվետու ժամանակաշրջանում ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի նախաձեռնությամբ մասնաճյուղում անց է կացվել «Բուհերի կառավարման համակարգի բարելավման ժամանակակից հիմնախնդիրները» թեմայով հանրապետական գիտագործնական կոնֆերանս:

Մասնաճյուղի ուսանողները ևս անմասն չեն մնացել գիտական գործունեությունից. նրանց հոդվածները, գիտական ընթերցումների թեզիսները պարբերաբար հրատարակվել են մասնաճյուղի «Ակունք» գիտական հանդեսի «Ուսանողական զեկուցումների շարք» հավելվածում:

Ուսումնամեթոդական վարչության և տնօրենի անմիջական հսկողությամբ, նախապես կազմված ծրագրով և ժամանակացույցով անց են կացվել պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման դասընթացներ: Մասնագիտական ամբիոնների և ուսումնամեթոդական վարչության հետ համատեղ անց են կացվել դասալսումներ: Տնօրենության ընդլայնված նիստերում դրանց արդյունքների վերաբերյալ կազմակերպվել են շահագրգիռ քննարկումներ: Քննակարգի թեստային համակարգի ներդրման փորձը ևս դարձել է մանրակրկիտ վերլուծության առարկա: Նշենք, որ դրանք կազմվում և հաստատվում են ամբիոններում մասնագիտական փորձաքննության անցնելուց հետո: Թեստերի գնահատման կարգի վերաբերյալ հաշվի են առնվել հնչած առաջարկներն ու դիտողությունները:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագրի առանցքային դրույթներից մեկն էլ երկկողմանի կապերի հաստատումն ու ակտիվ համագործակցությունն է ինչպես տարածաշրջանային, այնպես էլ միջազգային գիտակրթական հաստատությունների հետ: Մասնաճյուղը գործնական քայլեր է ձեռնարկել արտերկրի բուհերում ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի փոխանակման ծրագրերում ընդգրկվելու ուղղությամբ: Նման հաջողված փորձ կարելի է համարել Ֆրանսիայի Վալանս քաղաքի տեխնոլոգիական համալսարանի հետ համագործակցությունը, որի շրջանակներում մասնաճյուղի մեկ դասախոս և հինգ ուսանողներ Վալանսում մեկամսյա վերապատրաստման դասընթացներ են անցել՝ ստանալով համապատասխան հավաստագրեր: Շարունակվել է համագործակցությունը GREF-ի

(Թոշակառու մանկավարժներն առանց սահմանների) ֆրանսիական հասարակական-կրթական կազմակերպության հետ, որին ակտիվորեն աջակցել է նաև ՀՀ ԿԳ նախարարությունը և Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի դեսպանատունը: Ֆրանսիական կողմի մանկավարժների բազմամյա փորձը ուսանելի օրինակ է հանդիսացել մասնաճյուղում ֆրանսերեն լեզու դասավանդողների համար: Նրանց միջոցներով օտար լեզուների ամբիոնը համալրվել է արժեքավոր բուհական դասագրքերով և մեթոդական ուղեցույցներով: 2013 թ. ապրիլ-մայիս ամիսներին հիշյալ կազմակերպության կողմից մասնաճյուղում անց են կացվել վերապատրաստման դասընթացներ, որի ավարտին ֆրանսերեն լեզվի դասախոսները ստացել են հավաստագրեր: Մեթոդական օգնությունից բացի՝ «Թոշակառու մանկավարժներն առանց սահմանների» կազմակերպությունը «Ֆրանսերեն լեզու և գրականություն» բաժնի բարձր առաջադիմություն ունեցող սոցիալապես անապահով ուսանողներին ֆինանսական աջակցություն է ցույց տվել:

Մասնաճյուղում հնարավոր կոռուպցիոն դրսևորումների կանխարգելման ուղղությամբ ևս մշակվել և գործարկվել է համալիր միջոցառումների ծրագիր:

Քննությունների թեստային համակարգի ներդրումը հնարավորություն է տվել զերծ մնալ գնահատման սուբյեկտիվությունից, քանի որ քննության ավարտից հետո դասախոսը հրապարակավ ստուգում և ուսանողներին է ներկայացնում քննության արդյունքները: Նման քննակարգը հնարավորություն է տվել ուսանողների փոխաստեղումը (ռոտացիա) իրականացնել առավելագույնս օբյեկտիվ: Սրան զուգահեռ, ներդրվել է նաև քննությունների բողոքարկման կարգ: Ուսանողի բողոքը լսում է առարկայական հանձնաժողովը, որի կազմում ընդգրկված են տնօրենության, դեկանատի, ուսանողական խորհրդի, կրթության որակի ապահովման և գնահատման բաժնի անդամներ: Կոռուպցիոն դրսևորումների կանխմանը, ինչպես նաև կրթության որակի բարելավմանն ուղղված արդյունավետ մեթոդներից մեկը ուսանողության շրջանում անցկացվող անանուն հարցումն է: Հարցման ողջ գործընթացը պլանավորում և անց է կացնում ուսումնամեթոդական վարչության կազմում գործող կրթության որակի ապահովման և գնահատման բաժինը: Անանուն հարցում կատարելուց առաջ, ըստ հարցադրումների հետապնդած նպատակի, ուսանողության շրջանում կատարվում է բացատրական աշխատանք: Հարցման արդյունքները մշակվում են, ենթարկվում

մանրակրկիտ և համալիր ուսումնասիրության: Առանձնակի քննության նյութ են դառնում նկատված ընդհանրական միտումները, ուսանողության կողմից մատնանշված թերություններն ու դիտողությունները, ինչպես նաև ներկայացված առաջարկները: Հարցման արդյունքները զգալի հնարավորություն են տալիս բացահայտելու բուհի առջև ծառայած հիմնախնդիրները և նախանշում դրանց արդյունավետ լուծման ուղիները: Այդ նկատառումներից ելնելով՝ կրթության որակի ապահովման և գնահատման բաժինը ամբիոնների հետ համատեղ մշակել է գործողությունների համալիր ծրագիր, որը ներառվել է բաժնի ընթացիկ տարվա աշխատանքային պլանում: Անանուն հարցման մեկ այլ, ոչ պակաս արդյունավետ մեթոդ է «Արագ արձագանքման» արկղերի կիրառումը, որոնց շնորհիվ ուսանողները հնարավորություն են ստացել ուսումնասիրության ընթացքի վերաբերյալ շարունակական կերպով անկաշկանդ ներկայացնել իրենց առաջարկություններն ու դիտողությունները:

Կրթության որակի ապահովման և գնահատման բաժնի կողմից իրականացվել է ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի պաշտոնական կայքի կառավարումը, որի դերը ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաների համատեքստում խիստ կարևոր է: Այս առումով մասնաճյուղի պաշտոնական կայքի արդյունավետ կառավարման շնորհիվ զգալիորեն ընդլայնվել է ուսումնամեթոդական վարչության կազմում գործող մինչհամալսարանական կրթության և մասնագիտական կողմնորոշման բաժնի գործունեության աշխարհագրությունը: Կայքի ընձեռած հնարավորությունների արդյունավետ կիրառումը առավել նկատելի է եղել հեռակա ուսուցման համակարգում: Ուսումնասիրության ընթացքի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը (կիսամյակային ժամանակացույց, դասացուցակներ, հայտարարություններ և այլն) մշտապես տեղադրվել է կայքում՝ կոորդինացնելով հեռակա ուսուցման բաժնի աշխատանքները: Ժամանակակից տեղեկատվական համակարգերը շարունակական կիրառություն են գտել նաև մասնաճյուղի տարբեր ստորաբաժանումներում: Այս առումով հարկ է ընդգծել այն փաստը, որ գրադարանային ֆոնդի պարբերական համալրման ավանդական սկզբունքներին զուգահեռ հաջողությամբ կիրառվել է նաև գրականության թվայնացման գործընթաց, որի արդյունքում ֆոնդը հարստացել է մասնագիտական առաջնային պահանջարկ ունեցող շուրջ 320 անուն գրքերի թվայնացմամբ, ինչպես նաև էլեկտրոնային գրքերի ներբեռնմամբ lib.y-su.am և այլ կայքերից:

Հաշվետու ժամանակաշրջանը հնարավորություն ընձեռեց վերստին վերանայելու մասնաճյուղի գործունեությունը հատկապես ապագա ռազմավարության տեսանկյունից, ուր առաջին հերթին կարևորվել են մարզում և նրա սահմաններից դուրս տեղի ունեցող սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ բնույթի տեղաշարժերն ու փոփոխությունները: Այս իրողությունները ստիպեցին, որ մասնաճյուղը վերանայի որոշ մասնագիտությունների («Էկոլոգիական քիմիա», «Կիրառական արվեստ» մագիստրատուրա) գծով հետագա ընդունելության նպատակահարմարությունը:

Մինևույն ժամանակ, վերոհիշյալ նկատառումներից ելնելով, մանրամասն և հաշվարկված ուսումնասիրությունների հիման վրա մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշեց 2014 թ. առկա ընդունելության մասնագիտությունների ցանկում ներառել «Քարտեզագրության և կադաստրային գործ» մասնագիտությունը, կիրառական արվեստի ֆակուլտետը վերանվանել դիզայնի և կիրառական արվեստի ֆակուլտետ: Ի դեպ, փոփոխությունների արդարացված քայլ կարելի է համարել «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտության փոփոխությունը, քանի որ նոր՝ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության նկատմամբ նկատվեց աշխույժ հետաքրքրություն, որն արտահայտվեց դիմորդների աճով:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կատարված աշխատանքները նպատակ են հետապնդել համարժեք արձագանքելու արագ փոփոխվող իրողություններին և կարողանալու աշխատաշուկայում ունենալ արդիականության պահանջներին համապատասխան մրցունակ շրջանավարտներ:

* * *

Այսպիսով՝ ներկայացվեց Երևանի պետական համալսարանի 2012/2013 ուսումնական տարվա գործունեության ամփոփ պատկերը, որով փաստվեցին այն հաջողություններն ու ձեռքբերումները, ինչպես նաև բացթողումներն ու թերացումները, որ արձանագրվել են մայր բուհի կենսագրության այդ ժամանակահատվածում: Ուրախություն և գոհունակություն արտահայտելով նվաճումների և առաջընթացի համար, այնուամենայնիվ, չենք կարող մտահոգություն և դժգոհություն չհայտնել ձախողումների ու վրիպակների, գործի հանդեպ անփույթ ու անտարբեր վերաբերմունքի

կապակցությամբ: Ցանկացած հաջողություն յուրաքանչյուրիս լավ աշխատանքի արդյունքն է, ինչպես և ամեն մի բացթողում՝ յուրաքանչյուրիս թերացման, անբարեխղճության հետևանքը: Ուստի մեզանից պահանջվում է մշտական հետևողական ու բարեխիղճ աշխատանք՝ այն գիտակցմամբ, որ Երևանի պետական համալսարանը ոչ միայն պարզապես բարձրագույն ուսումնական հաստատություն է, այլև մեր երկրի ու ժողովրդի մայր բուհը, որի առաջընթացն ապահովելն ու բարի համբավը գորացնելը յուրաքանչյուրիս ու բոլորիս խնդիրն է:

**ԵՊՀ 2010-2014 ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ
2012/2013 ՈՒՍՏԱՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ**

ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանի համաձայն՝ նախատեսված էր 2012/2013 ուստարում իրագործել ՌԾ-ով սահմանված առանձին նպատակների մի շարք խնդիրներ: Դրանք մասնավորապես նպատակաուղղված են ԵՊՀ-ում բարձրորակ կրթության ապահովմանը, կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխմանը, կրեդիտային համակարգի ընդլայնված կիրառության ապահովմանը, հանրային ներգրավման և ծառայությունների զարգացմանը, որակյալ կադրային ներուժի կատարելագործմանը, որակյալ ծառայությունների տրամադրմանը, ընդունելության բազմազանեցված մուտքի ընդլայնմանը և այլն:

Ստորև ներկայացվում է այդ խնդիրների իրականացման առաջընթացը՝ համապատասխան գործողությունների և միջոցառումների կատարողականով:

Ռազմավարական նպատակ I-ի (Բարձրորակ կրթություն) Խնդիր I. ա)-ն սահմանում է. «Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ արդի միջազգային ծրագրային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջմունքներին համահունչ»:

Այս խնդրի 4-րդ կետով նախատեսված գործողությունը՝ «Վերակառուցել, արդիականացնել և ունիֆիկացնել ընդհանուր կրթության կառուցամասը բակալավրի կրթական ծրագրերում՝ դրանք ուղղելով ուսանողների հաղորդակցման, քննադատական մտածողության, քանակական փաստարկման, միջանձնային և կառավարման կարողությունների զարգացմանը և մասնագիտական էթիկայի ձևավորմանը», ըստ ՌԾ իրականացման ժամանակացույց-պլանի՝ պետք է իրականացվեր անցած ուստարվա երկրորդ կիսամյակում: Այս ուղղությամբ որոշակի աշխատանք կատարվել է,

սակայն գործողությունն ամբողջապես կիրականացվի ընթացիկ ուստարվա երկրորդ կիսամյակում:

Խնդիր I. գ)-ով նախատեսված է «Ապահովել կրեդիտային համակարգի ընդլայնված կիրառությունը Համալսարանի բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում»: Այս խնդրի 10 գործողություններից 6-ը նախատեսված էր իրականացնել հաշվետու ուստարում: Ըստ այդմ՝

- Իրականացվել է անցումը ամբողջությամբ մոդուլացված, կրեդիտային հենքով ճկուն ուսումնական ծրագրերի բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններում՝ մեծացնելով ընտրովի դասընթացների հաշվեկշիռը:
- Ձեռնարկվել և ընթացքի մեջ են աշխատանքները՝ միտված ուսանողի ինքնուրույն աշխատանքի դերակատարության էական բարձրացմանը ուսումնառության գործընթացում՝ ծրագրային վերակառուցման ընթացքում ուսանողի լսարանային և ինքնուրույն աշխատածավալների միջև սահմանելով օպտիմալ հարաբերակցություն :
- Ստեղծվել են համապատասխան պայմաններ և մեխանիզմներ՝ ուսանողների ուսումնառությունը անհատական ծրագրերով կազմակերպելու նպատակով: Առայժմ դա արվել է միայն հետազոտողի կրթական ծրագրի համար:
- Նախատեսված ժամկետից շուտ ստեղծվել և կիրարկվում է դասընթացներին ուսանողների գրանցման, ուսման առաջադիմության տվյալների ավտոմատացված մուտքագրման ու մշակման, ակադեմիական տեղեկագրի ու դիպլոմի հավելվածի պատրաստման միասնական Վեբ հենքով էլեկտրոնային համակարգ՝ «SuperVision» ծրագրով:
- Լրացուցիչ կրթության ծրագրերում նույնպես ներդրվել է կրեդիտային համակարգը: Արդեն այդպիսին է դասախոսների որակավորման բարձրացման գործող ծրագիրը: Կրեդիտային համակարգով վերամշակվում է նաև Դոկտորանություն՝ մասնագիտական վերապատրաստման կրթական ծրագիրը:
- Ձեռնարկվել, սակայն դեռևս չի իրականացվել Խնդիր I. գ)-ի 3-րդ կետով նախատեսված գործողությունը, ըստ որի՝ պետք էր սահմանել ուսանողների

կողմից դասընթացների ընտրության և դրանցում ընդգրկվելու համար գրանցման կարգ և համապատասխան ընթացակարգեր:

Խնդիր I. դ)-ով սահմանված է «Ստեղծել նպաստավոր պայմաններ և խթանող մեխանիզմներ՝ ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացների էական բարելավման համար»:

- Այս խնդրի 1-ին կետով նախատեսված էր ստեղծել դասավանդման և ուսումնառության (դասավանդման աջակցման) համահամալսարանական կենտրոն՝ դասավանդման և ուսումնառության առավել արդյունավետ մեթոդների վերաբերյալ մշտական գործող դասընթացների և աշխատաժողովների կից շարքով՝ համալսարանի դասախոսական կազմի դասավանդման որակի էական բարելավման նպատակով: Նման կենտրոն դեռ չի ստեղծվել, սակայն նախատեսվում է 2013/2014 ուստարում մշակել և ներկայացնել «Տեմպուս» ծրագրով համապատասխան նախագիծ:
- Ընթացքի մեջ են աշխատանքները վերոնշյալ խնդրի 2-րդ կետի գործողության ուղղությամբ, որով նախատեսված է զարգացնել առաջավոր մանկավարժական փորձի խրախուսման և տարածման ներհամալսարանական մեխանիզմները, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը, խթանել այս ուղղությամբ կրթափորձի նոր նախաձեռնությունները (հիմնել ներհամալսարանական դրամաշնորհային ծրագրեր՝ դասավանդման և ուսումնառության առաջավոր մեթոդների մշակման և տարածման համար, սահմանել ամենամյա մրցանակներ դասավանդման նորարարական մեթոդները հաջողությամբ կիրառող դասախոսների խրախուսման համար և այլն):
- Համաձայն նշված խնդրի 4-րդ կետի՝ մշակվել է ուսանողների չափանիշահենք գնահատման մեթոդաբանություն: 2013/2014 ուստարվա 1-ին կիսամյակում նախատեսվում է դասախոսների վերապատրաստման կազմակերպում՝ այդ մեթոդաբանության իրականացման նպատակով:

Խնդիր I. ե)-ով նախատեսված է «Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը Համալսարանի ուսումնական գործըն-

թացնեքում»: Ըստ ՌԾ իրականացման ժամանակացույց-պլանի՝ անցած ուստարում պետք է իրականացվեին այս խնդրի 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված գործողությունները, որոնք, սակայն, չեն իրականացվել:

Ռազմավարական նպատակ III-ի (Հանրային ներգրավում և ծառայություններ) Խնդիր III. ա)-ով սահմանված է «Ապահովել հասարակության հետ կապերի հետազարգացումը և հանրային ծրագրերում Համալսարանի առավելագույնս ներգրավումը»: Այս խնդրի իրականացման ուղղությամբ կատարվել են նախատեսված մի շարք գործողություններ, մասնավորապես՝

- ԵՊՀ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչությունը մշտապես սերտորեն համագործակցել է հայաստանյան տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների հետ: Աշխատանքներ են ծավալվել հասարակության հետ կապերի ամրապնդման, ԵՊՀ վարկանիշի և հեղինակության բարձրացման, կրթօջախի խորհրդանշանների ու քարոզչական այլ նյութերի տարածման ուղղություններով, հանրային ծրագրերում ապահովվել է ԵՊՀ-ի առավելագույնս ներգրավվածությունը:
- Հիմնովին նորացվել է ԵՊՀ պաշտոնական ինտերնետային կայքը՝ www.y-su.am հասցեով, որը վերափոխվել է պորտալի՝ նոր դիզայնով և ծրագրային լուծումներով, ի մի են բերել 47 կայքեր ու բաժիններ: Այսքանով հանդերձ՝ պահպանվել է ԵՊՀ նախկին՝ 2006 թվականին գործարկված կայքի ամբողջ ինֆորմացիան՝ ներառյալ լուրերի ամբողջ արխիվը: Աշխատանքներ են իրականացվել ԵՊՀ ինտերնետային ռեսուրսների զարգացման, բովանդակության հազեցման և առավել մատչելի դարձնելու ուղղությամբ, ապահովվել են դրանց օպերատիվ թարմացումները, կայքի և սոցիալական ցանցերում էջերի այցելուների և էլեկտրոնային փոստով նամակագիրների հետ առցանց հետադարձ կապը նոր մակարդակի է բարձրացվել: 2013 թվականի օգոստոսին Վեբոմետրիքսը (Webometrics Ranking of World Unisvesuties) հրապարակել է բուհական համաշխարհային վարկանիշային աղյուսակը: ԵՊՀ-ի վարկանիշը կազմում է 3152, ըստ որի՝ ԵՊՀ-ն գլխավորում է ՀՀ բուհերի ցանկը:

- Անցկացվել են ԵՊՀ արտաքին իմիջի վերաբերյալ Երևանի բնակչության պատկերացումների բացահայտմանն ուղղված և հեռախոսային հարցման մեթոդով իրականացված մշտական հետազոտության հերթական փուլերը: Ներհամալսարանական ընթացակարգերի, աշխատատճի, ներքին էթիկայի, վարվելակերպի և այլ խնդիրների վերաբերյալ մեթոդական ուղեցույցների մշակման ու ներդրման և այլ նախաձեռնությունների միջոցով աշխատանքներ են կատարվել ԵՊՀ-ի մասին հասարակական կարծիքի ու դրական վարկանիշի ձևավորման ուղղությամբ: ԶԼՄ-ների, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների կողմից ԵՊՀ-ին հասցեագրված հարցումներին օրենքով սահմանված ժամկետներում տրվել են սպառիչ պատասխաններ:
- Մեծ ուշադրություն է դարձվել ԵՊՀ PR հայեցակարգի առաջադրած խնդիրներին, բուհի կրթագիտական արդյունքների առևտրայնացման, դիմորդների հետ աշխատանքի, ինչպես նաև ձեռնարկությունների հետ համագործակցությանը: Համապատասխան ֆինանսական միջոցների բացակայության պատճառով հնարավոր չի եղել այդ աշխատանքները կազմակերպել մեկ միասնական մասնագիտացված մարքեթինգային ծառայությունում, սակայն դրանք կազմակերպվել են համապատասխան ստորաբաժանումներում՝ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչությունում, մինչհամալսարանական կրթության վարչությունում, շրջանավարտների և կարիերայի կենտրոնում:

Աջակցող նպատակ IV-ի (Ռրակյալ կադրային ներուժ) ռազմավարական Խնդիր IV. ա)-ով նախատեսված է *«Համայրել և բարելավել դասախոսական կազմը՝ որակի հավաստման միջազգային չափանիշներին համապատասխան»*: Իրականացվել է այս խնդրի 3-րդ կետի գործողությունը: Մասնավորապես՝

- Հաստատվել և 2012 թ. սեպտեմբերի 1-ից ուժի մեջ է Երևանի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգը, որով սահմանվում է պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության, պաշտոնների տեղակալման կարգն ու պայմանները, ինչպես նաև պրոֆեսորա-

դասախոսական համակարգի պաշտոնների նկարագրությունը:

- Դեռևս 2010 թ. մշակվել և 2011-ից գործողության մեջ է դրվել ԵՊՀ պրոֆեսորադասախոսական հիմնական կազմի որակավորման բարձրացման նոր ծրագիրը: Ծրագրի կառուցվածքը նախատեսում է ապահովել դասախոսի ոչ միայն մասնագիտական, այլև մանկավարժական կոմպետենցիաները՝ որակի հավաստման միջազգային չափանիշներին համապատասխան: Գիտխորհրդի որոշմամբ կատարումը պարտադիր է հիմնական դասախոսական կազմի համար: Յուրաքանչյուր տարի ծրագրին մասնակցում է 500-ից ավելի դասախոս:

Աջակցող նպատակ V-ի (Որակյալ ենթակառուցվածքներ) ռազմավարական Խնդիր V. ա)-ով նախատեսված է *«Բարելավել ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանները, զարգացնել և արդիականացնել Համալսարանի ուսումնական և գիտական լաբորատոր բազան՝ կրթական և հետազոտական ծրագրերի կարիքներին համապատասխան»*: Խնդրի իրականացմանը միտված գործողություններից մեկը (5-րդ կետ) ՌԾ իրականացման ժամանակացույց-պլանի համաձայն պետք է կատարվեր 2012/2013 ուստարվա 2-րդ կիսամյակում: Այն նախատեսում էր ստեղծել լեզվի ուսուցման մասնագիտացված լսարան լաբորատորիաներ՝ օտար լեզուների ուսուցման որակը արդի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով: Սակայն այս գործողությունը դեռևս չի կատարվել:

Խնդիր V. բ)-ով սահմանված է *«Ստեղծել Համալսարանի միասնական կենտրոնական տեղեկատվական համակարգ և ապահովել վերջինիս մատչելիությունը Համալսարանի ուսանողների և աշխատակիցների համար»*: Այս խնդրի 2-րդ և 3-րդ կետերը համապատասխանաբար նախատեսում են՝ ձևավորել Համալսարանի կառավարման միասնական տեղեկատվական համակարգ՝ նրա գործունեության առանձին բնագավառների տվյալների տեղեկատվական բազաների ստեղծման և դրանց ինտեգրման հիման վրա, ինչպես նաև ստեղծել և ներդնել տեղեկատվության ավտոմատացված մշակման և կառավարման ծրագրային փաթեթ: Այս առումով պետք է նշել, որ՝

- Աշխատանքներ են իրականացվել ԵՊՀ կենտրոնական սերվերի համապատասխան հզորությունների զարգացման ուղղությամբ: Ստեղծվել է միասնական տվյալների կառավարման համակարգ, որը ապահովում է ուսումնամեթոդական վարչության և հաշվապահության փոխգործակցությունը, իրականացվել է համակարգի նախնական փորձարկում: Աշխատանքներ են տարվում շրջանավարտների տվյալների հենք ստեղծելու ուղղությամբ:
- Համապատասխան ֆինանսավորման բացակայության պատճառով (նախատեսվում է աշխատանքներ իրականացնել դրամաշնորհային ծրագրի շրջանակներում) կառավարման միասնական տեղեկատվական համակարգի ներդրման աշխատանքները չեն իրականացվել ողջ ծավալով:

Ընթացիկ գերակայություն VII-ի (Ընդունելության բազմազանեցված մուտք և համապատասխանություն) ռազմավարական Խնդիր VII. գ)-ով նախատեսված է «Մեծացնել օտարերկրյա ուսանողների համակազմը Համալսարանի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում՝ ներդնելով հավաքագրման և ուսուցման կազմակերպման համալիր միջոցառումներ»: Այս խնդրի իրագործմանն նպատակով՝

- Իրականացվել է ընդհանուր անգլերենի ուսուցում՝ ITEP միջազգային հավաստագրումով: 459 դասախոս քննություն է հանձնել անգլերենից. բարձր մակարդակի (B1 - C2) իմացություն է դրսևորել 144-ը: Առավել բարձր են արևելագիտության (15), տնտեսագիտության (12), իրավագիտության (10), փիլիսոփայության և հոգեբանության (8), սոցիոլոգիայի (7), ինչպես նաև ռոմանագերմանական բանասիրության (62) ֆակուլտետների արդյունքները:
- Պրոֆեսորադասախոսական կազմի՝ օտար լեզվի (անգլերենի) իմացության ապահովման և կատարելագործման նպատակով կազմակերպվել և ընթանում են համապատասխան դասընթացներ:
- Օտարերկրյա քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետում կատարվել է կառուցվածքային փոփոխություն՝ այդ ստորաբաժանումը վերակազմակերպվել է ԵՊՀ միջազգային կրթական կենտրոնի՝ նպատակ ունենալով կատարելագործելու օտարերկրյա դիմորդների՝ հայերենի ուսուցման գործընթացը, ինչպես նաև ստեղծելու նպաստավոր պայմաններ և

կազմակերպելու նախապատրաստական դասընթացներ նրանց ընդհանուր կրթական գիտելիքների մակարդակը ծրագրային պահանջներին համապատասխանեցնելու համար:

- Սփյուռքահայ ուսանողների համար իրականացվել է ՏՈւսումնական մեկ կիսամյակ հայրենիքում՝ կրթական ծրագիրը, որի շրջանակներում ԵՊՀ-ում կարճատև ուսումնական ծրագրով ուսումնառություն է ստացել վեց հոգի՝ մեկական ուսանող ԱՄՆ-ի Միչիգանի և Կալիֆոռնիայի համալսարաններից, Հարվարդի քոլեջից, ՌԴ Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանից, Ֆրանսիայի Մոնպելիե-3 և Հոլանդիայի Ջուլիի համալսարաններից: Նրանք կատարել են հայագիտական հետազոտություններ և ուսումնասիրել հայոց լեզու, գրաբար, հայոց պատմություն, պարսից լեզու և այլն:

Ընթացիկ գերակայություն VIII-ի (Ֆինանսական կայունություն, արդյունավետ կառավարում) ռազմավարական Խնդիր VIII. բ)-ով նախատեսված է «Մեծացնել շրջանավարտների, նվիրատու կազմակերպությունների և անհատների ներդրումների ծավալը Համալսարանի զարգացման ծրագրերում», որի իրագործման նպատակով՝

- Միջազգային համագործակցության վարչության կազմում գործող գրանտների բաժինը ակտիվացրել է աշխատանքները Համալսարանի և նրա առանձին ուսումնական ստորաբաժանումների զարգացման կարիքներից բխող դրամաշնորհային հայտերի փաթեթների մշակման և պոտենցիալ նվիրատու կազմակերպությունների, շնորհատուների ու անհատների հավաքագրման ուղղությամբ:

ՌԾ իրականացման ժամանակացույց-պլանով նաև նախատեսված է **Ռազմավարական նպատակների առանձին խնդիրների** մի շարք գործողությունների մշտապես իրականացում, ինչը ուշադրության կենտրոնում է եղել նաև 2012/2013 ուսումնական տարում:

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ
ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱԼԻՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԾՐԱԳՐԻ՝ 2013 Թ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ**

Հակակոռուպցիոն միջոցառումները ԵՊՀ տարեկան գործունեության հաշվետվություններում, որպես առանձին աշխատանքային ուղղություն, ներկայացվում են 2010/2011 ուսումնական տարվանից: 2011 թ. մարտի 31-ին ԵՊՀ գիտական խորհուրդը հաստատեց 2011-2012 թթ. «ԵՊՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագիրը», իսկ 2013 թ. մայիսի 30-ին՝ «ԵՊՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2013-2014 թթ. համալիր միջոցառումների ծրագիրը»: Ծրագրի մշակման և համապատասխան միջոցառումների իրականացման աշխատանքները համակարգվում է ԵՊՀ ռեկտորի 22.02.2013 թ. հրամանով ստեղծված ԵՊՀ հակակոռուպցիոն միջոցառումները համակարգող հանձնաժողովի կողմից: Նշված ծրագիրն ապահովում է 2011 թ. մարտի 31-ին ԵՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատված հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրով նախանշված աշխատանքների շարունակական բնույթը և հիմնված է այդ ծրագրի իրականացման ընթացքում ԵՊՀ-ի կողմից ձեռք բերված դրական փորձի վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ ծրագրի արդյունավետությունը կախված է համալսարանականների ակտիվ մասնակցությունից, համալսարանի կուլեկտիվի անդամների կողմից խնդրի կարևորության գիտակցումից և համագործակցությունից:

Հակակոռուպցիոն միջոցառումները հանդիսանում են Երևանի պետական համալսարանի գործունեության կարևոր ռազմավարական ուղղություն: 2009 թ. դեկտեմբերի 25-ին ԵՊՀ խորհրդի կողմից հաստատված «ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի (2010-2014 թթ.)» ընթացիկ գերակայությունների շարքում նախատեսված է հատուկ առանձին խնդիր՝ նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը, նպաստել համալսարանում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի հետագա զարգացմանը: Ռազմավարության բազմաթիվ դրույթները, որոնք մասնավորապես վերաբերում են կրթության որակի բարձրացմանը, հանրային կապերի զարգացմանը, կադրային քաղաքականությանը, տեղեկատվական ռեսուրսների զարգացմանը, կառավարման արդյունավե-

տության բարձրացմանը, ուսանողական ինքնավարության ընդլայնմանը և մի շարք այլ հարցերի, միաժամանակ ունեն հակակոռուպցիոն կարևոր ազդեցություն:

ԵՊՀ՝ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2013-2014 թթ. համալիր միջոցառումների ծրագիրը, ըստ էության, ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի հետ համատեղ Երևանի պետական համալսարանում կոռուպցիոն երևույթների դեմ արդյունավետ պայքարի հիմնական ուղենիշն է, քանի որ դրանում արտացոլված են համալսարանական միջավայրում գոյություն ունեցող կոռուպցիոն դրսևորումների դեմ նպատակային պայքարի հիմնական միջոցառումները, դրանց իրականացման արդյունքում ակնկալվող ուղղակի արդյունքները, սահմանված են պատասխանատու ստորաբաժանումները, պաշտոնատար անձինք և գործողությունների իրականացման ժամկետները: Ծրագիրը պահանջում է հակակոռուպցիոն գործիքակազմի ճշգրիտ ընտրություն, արդյունավետ ու համապարփակ միջոցառումների համալիր իրականացում՝ հնարավորինս ապահովելով հստակ, գնահատելի և իրատեսական արդյունքներ:

Հարկ է նշել, որ բուհական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարն իր բնույթով բավականին բարդ գործընթաց է, ներառում է ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ հիմնախնդիրներ՝ միաժամանակ փոխկապակցված լինելով մի շարք այլ՝ բարձրագույն կրթության հետ չառնչվող հիմնահարցերի հետ:

ԵՊՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2013-2014 թթ. համալիր միջոցառումների ծրագրով սահմանված է, որ ԵՊՀ հակակոռուպցիոն միջոցառումների շրջանակը ներառում է ուղղակի միջոցառումները (հակակոռուպցիոն խնդիրներին ուղղակիորեն առնչվող) և անուղղակի միջոցառումները (աշխատանքներ, որոնք իրականացվում են այլ հիմնախնդիրների լուծման նպատակով, սակայն միաժամանակ կարող են զգալի հակակոռուպցիոն ազդեցություն ունենալ): Վերոնշյալ ծրագրով սահմանված են նաև ԵՊՀ-ում առկա այն կոռուպցիոն ռիսկերը (գիտելիքի գնահատում, մուտք դեպի կրթական համակարգ, ուսանողի շարժունակություն, անձնակազմի կառավարում և համալսարանի ֆինանսական կառավարում), որոնց ուղղությամբ իրականացվել են համապատասխան միջոցառումները:

Ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի համար ՀՀ կրթության և գիտության նախարարության և ԵՊՀ ներքին իրավական ակտերի հիման վրա կազմվել է

ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցը՝ ուսումնական գործընթացը հստակ կանոնակարգելու համար:

Վերջին տարիներին ֆակուլտետներում ներդրված է ուսումնական խորհրդատուների (կուրատորների) համակարգ, որի նպատակն է աջակցել ուսանողներին (առավելապես ցածր կուրսերի)՝ լուծելու համալսարանում ուսումնառության ընթացքում ծագող տարբեր խնդիրներ:

Քննաշրջաններին նախորդող ժամանակահատվածում ուսանողների և դասախոսների շրջանում բացատրական-մեկնաբանման աշխատանքներ են տարվել քննությունների անցկացման ընթացակարգերի, ուսանողների պարտականությունների և իրավունքների վերաբերյալ: Ընթացիկ քննությունների համար նախատեսված տեսքերի կազմի վրա ամրագրվել են ուսանողներին և դասախոսներին ներկայացվող պահանջները:

Քննական բոլոր տոմսերը պարտադիր ստորագրվել են ամբիոնների վարիչների կողմից՝ ապահովելով դասընթացի ծրագիր-քննական հարցաշար-քննական տոմս կապը:

Յուրաքանչյուր քննաշրջանից հետո ֆակուլտետներում ստուգվել են քննական տեղեկագրերում ամրագրված գնահատականների համապատասխանությունը գրավոր աշխատանքների տեսքերի գնահատականներին, ինչպես նաև ուսանողների՝ դասերին մասնակցության միավորի համապատասխանությունը տեղեկագրի միավորին: Իրականացվել է քննական արդյունքների ավտոմատ մուտքագրումը (քննական տեղեկագրերի սքանավորում) ուսանողների առաջադիմության տվյալների շտեմարան, ինչը անհնար է դարձնում գնահատականների կամայական փոփոխությունները:

ԵՊՀ բոլոր քննությունների, այդ թվում՝ առարկայական տարբերությունների վերահանձնումները, կատարվել են հրամանագրված հանձնաժողովներով («ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման» կարգի համաձայն): Բուհի ամփոփիչ ատեստավորման քննություններն իրականացվել են ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարության «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ

ատեստավորման անցկացման» կարգի՝ տեսաձայնագրմամբ, և բողոքարկումներն անցկացվել են տեսանյութի քննարկման հիման վրա:

Հնարավոր կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով կազմակերպվել են ստուգումներ ԵՊՀ-ում իրականացվող ուսումնական գործընթացին առնչվող գործառույթների շրջանակում: 2013 թվականի ընթացքում շարունակվել է ընդունելության գործընթացի նկատմամբ վերահսկողության գործուն մեխանիզմների կիրառումը: Հեռակա ուսուցման ընդունելության քննությունների պատասխանների 30 ձևաթղթեր օրական երկու անգամ օպերատիվ կերպով տեղադրվել են կայքում:

Կրթական ծրագրերի և դասընթացների բովանդակությունը ներկայացվել էր կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց-գրքերով, այդ տեղեկատվությունը տեղադրված է նաև ԵՊՀ կայքում: Հարկ է նշել, որ կայքում տեղադրված է կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա համակարգով սովորող ուսանողների համար:

ԵՊՀ-ում տեղափոխություններն իրականացվում են ըստ «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության» գործող կարգի, հեռացումները՝ ըստ «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման» կարգի: Հեռացումները, տեղափոխությունները, ուսանողների փոխանակումների մրցույթները պարտադիր իրականացվել են հանձնաժողովների միջոցով: Այդ գործընթացները ևս իրագործվել են՝ խստորեն հետևելով համապատասխան ընթացակարգերին:

Քննաշրջանից հետո քննությունների արդյունքները փակցվել են ֆակուլտետներում, իսկ փոխատեղման արդյունքները հրապարակել են՝ գործող կարգի համաձայն: Ամփոփոխ քննությունների արդյունքները քննություններից հետո առավելագույնը մեկ շաբաթվա ընթացքում հրապարակվել են ֆակուլտետների կայքերում:

Աշխատանքներ են տարվել ԵՊՀ դասախոսական կազմի համար «Ուսանողների չափանիշահեն գնահատման մեթոդական ձեռնարկի», ինչպես նաև «Ուսանողների գնահատման արդյունքների բողոքարկման կարգի» մշակման ուղղությամբ:

Ապահովվել է կրթական գործընթացը կանոնակարգող իրավական ակտերի ընդունման, դրանում փոփոխությունների և լրացումների կատարման գործընթացը:

Շարունակաբար իրականացվել է համալսարանի ներքին իրավական ակտերի կիրառման գործընթացի մոնիթորինգ և նախաձեռնվել են բացահայտված թերությունների, այլաբանություն, երկիմաստ և անհստակ կանոնակարգումներ պարունակող դրույթների փոփոխություններ, այդ ուղղությամբ ակտիվ համագործակցություն է իրականացվել ֆակուլտետների գիտական խորհուրդների և դեկանատների հետ:

Որպես առաջնահերթություն՝ պլանավորվել է ամբողջությամբ վերանայել ԵՊՀ ներքին կարգապահական կանոնները և այն համապատասխանեցնել արդի պահանջներին:

Համալսարանական համակազմի իրավագիտակցության և իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով ակտիվորեն օգտագործվել են համալսարանի ինտերնետային ռեսուրսների հնարավորությունները՝ ընդունվող ներքին իրավական ակտերը էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվել են բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներին, ինչպես նաև տեղադրվել են իրավական ակտերի և փաստաթղթերի պահպանման և դյուրին ներկայացման նպատակով հատուկ ստեղծված ԵՊՀ փաստաթղթերի կայքում (<http://doc.ySU.am>):

Հակակոռուպցիոն աշխատանքներում մեծ նշանակություն ունի երկկողմ պատշաճ շփումների մշակույթի արմատավորումը: Այս նպատակով արդիականացվել են ԵՊՀ էլեկտրոնային փոստի սերվերային համակարգերը, բոլոր դասախոսներին տրամադրվել է համալսարանական էլեկտրոնային փոստի հասցե, աշխատանքներ են իրականացվել ուսանողներին էլեկտրոնային փոստի հասցե տրամադրելու ուղղությամբ (կատարվել է էլեկտրոնային փոստի հասցեների պիլոտային փորձարկում):

Կազմակերպվել է «Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների բացասական ազդեցությունը և հետևանքները» և «Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի մեխանիզմներ» թեմաներով սեմինար-քննարկումներ: ԵՊՀ ուսխորհրդի «Ուսանողական ռեկտորատ» ծրագրի ընթացքում քննարկվել են կոռուպցիոն երևույթների դեմ պայքարին վերաբերող խնդիրներ:

Համալսարանականները հանդես են գալիս որպես մեկ միասնական կոլեկտիվ, որից էլ բխում է բուհի ներսում բազմաթիվ հարցերի և խնդիրների լուծումը: Այս առումով հակակոռուպցիոն միջոցառումների պլանում կարևորվել է ընդհանուր դրական մթնոլորտի ձևավորումը, որին միտված են եղել իրականացված մի շարք քայլեր:

Աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու հարցերով ուսանողական կազմակերպություններին մեթոդական աջակցություն է ցուցաբերվել: Քայլերն են ձեռնարկվել միջազգային համագործակցության ասպարեզում ուսանողական կառույցների կարողությունների զարգացման ուղղությամբ:

Ուսանողական կազմակերպությունների կողմից իրականացված մի քանի տասնյակ միջոցառումներին մասնակցել են պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ: Համահամալսարանական գրեթե բոլոր մեծ հանդիսություններին (ԵՊՀ մեծարման և առաջին կուրսեցու երդման արարողություն, Ուսանողների միջազգային օր, «Լավագույն ուսանող» մրցանակաբաշխություն) մասնակցում են ռեկտորը, պրոռեկտորները, դեկանները: Ֆակուլտետներում կազմակերպվել են դասախոս-ուսանող երկխոսությանն ուղղված տարբեր հանդիպումներ, խորհրդակցություններ, բարոյահոգեբանական և բարոյագիտական թեմաներով տեղեկատվության տարածում, արտագնա էքսկուրսիաներ և այլն, որոնք միտված են եղել ուսանողների և դասախոսների միջսերնդային երկխոսությանը:

Համալսարանականների շրջանում կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողական մթնոլորտ ձևավորելու նպատակով իրականացվել են մի շարք միջոցառումներ, որոնք միտված են եղել վերացնելու առկա մի շարք խնդիրների հանդեպ անտարբերությունը և խթանելու ուսանողների ու դասախոսների ակտիվությունը հակակոռուպցիոն պայքարում: Ուսանողների մասնակցությունը հակակոռուպցիոն գործընթացին էական նշանակություն ունի վերջինիս արդյունավետության համար. այդ իսկ պատճառով մշտապես միջոցառումներ են ձեռնարկվում ուսանողների ակտիվությունը բարձրացնելու նպատակով:

Ռեկտորի, պրոռեկտորների և դեկանների՝ ուսանողների հետ հանդիպումների, գիտական խորհրդի և ռեկտորատի նիստերի և մի շարք այլ միջոցառումների ժամանակ առանձին ուշադրություն է դարձվել կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողականության ձևավորմանը:

Երևանի պետական համալսարանի ներկայացուցիչները հաշվետու ժամանակահատվածում պարբերաբար մասնակցել են հայաստանյան և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից կազմակերպված հակակոռուպցիոն սեմինար-քննարկումներին, ներկայացրել են «ԵՊՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի

համալիր միջոցառումների ծրագրի (2012-2013թթ.)» դրույթները, կատարված աշխատանքները:

ՀՀ կրթության և գիտության նախարարության ու ԵԱՀԿ երևանյան գրասենյակի համատեղ կազմակերպած «Հայաստանում բարձրագույն կրթության կարիքներն ու մարտահրավերները» խորագրով միջազգային համաժողովում ներկայացվել է Երևանի պետական համալսարանի հակակոռուպցիոն փորձը:

Յուրաքանչյուր կիսամյակ իրականացվել են ԵՊՀ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներ (ուսուցման հետ առնչվող տարբեր ասպեկտներից բավարարվածության գնահատում), ինչպես նաև յուրաքանչյուր տարի՝ ԵՊՀ-ում ուսումնառության վերաբերյալ շրջանավարտների հարցումներ: Տեղի են ունեցել ուսանողների և շրջանավարտների հարցումների արդյունքների քննարկումներ ԵՊՀ գիտական խորհրդում և ֆակուլտետներում:

Նշված հարցումներում ներառված են նաև կոռուպցիոն երևույթների վերաբերյալ համապատասխան հարցեր (թիվ 1 և թիվ 2 ներդիրներում ներկայացված են համապատասխան հարցումների արդյունքները): Ուսանողների և շրջանավարտների շրջանում իրականացվող հարցումների ժամանակ հարցվողներին առաջարկվել է պատասխանել տվյալ քննաշրջանում դրամի դիմաց գնահատական կամ ստուգարք ստանալու, ինչպես նաև մասնավոր պարապմունքների համար հարկադրված վճարելու վերաբերյալ հարցերին:

Առկա ուսուցման համակարգում հարցված ուսանողների 2 %-ը դրական է պատասխանել դրամի դիմաց գնահատական կամ ստուգարք ստանալու հարցին, իսկ մասնավոր պարապմունքների համար հարկադրված վճարելու հարցին՝ դրական է պատասխանել հարցվածների 2.3 %-ը: Հարկ է նշել, որ մագիստրատուրայի ուսանողների և շրջանավարտների կողմից նշված հարցերին դրական են պատասխանել 0.5 %-ից փոքր թվով ուսանողներ: Շրջանավարտների հարցումը, որը ընդգրկում է ողջ ուսումնառության ընթացքը, արտացոլում է գրեթե նույն պատկերը: Տվյալ հարցումների պրակտիկան շարունակվելու է, և առավել հետաքրքիր է դիտարկել համապատասխան տվյալների դինամիկան: Այսպես՝ նախկին երկու տարիների համեմատությամբ՝ առկա ուսուցման համակարգում հարցված ուսանողների 2.5-3 %-ն էր դրական պատասխանել դրամի դիմաց գնահատական կամ ստուգարք ստանալու

հարցին, իսկ մագիստրատուրայում՝ 0.5-1 %-ը: Այսպիսով՝ վերջին 2 տարիների ընթացքում, ըստ իրականացված ուսանողական հարցումների արդյունքների, նկատվում է կոռուպցիոն երևույթների դրսևորման նվազում:

Վերափոխվել են ֆակուլտետների կայքերը, հնարավորություն է ընձեռվել ընդլայնելու կայքի օգտագործումը ուսումնական գործընթացում: Նախատեսված է դասընթացների ծրագրերը և հարցաշարերը տեղադրել ֆակուլտետի ինտերնետային կայքում: Աշխատանքներ են տարվել «Դասընթացների և կրթական ծրագրերի որակի առցանց կառավարման համակարգի և ռեսուրս շտեմարանի» ստեղծման ուղղությամբ:

Հետևողական աշխատանքներ են տարվել հանրային կապերի, ԵՊՀ-ին վերաբերող տեղեկատվության մատչելիության և թափանցիկության ապահովման ուղղությամբ: «Երևանի համալսարան» ամսաթերթի համարներում պարբերաբար տպագրվել են կոռուպցիոն խնդիրների կանխարգելմանը վերաբերող նյութեր:

Հիմնովին նորացվել է ԵՊՀ պաշտոնական ինտերնետային կայքը՝ www.y-su.am հասցեով, որը վերափոխվել է պորտալի՝ նոր դիզայնով և ծրագրային լուծումներով: Պորտալում առկա են 47 կայքեր ու ենթակայքեր: ԵՊՀ կայքի միջոցով իրականացվում է տեղեկատվության տրամադրման՝ առցանց հետադարձ կապի աշխատանք: Բոլոր անձինք ունեն առցանց հարց տալու հնարավորություն (կայքում գործում է «Հարց-պատասխան» բաժինը, որի միջոցով 2012 թ. դեկտեմբերի դրությամբ ստացված է շուրջ 1250 նամակ, որոնց ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների օգնությամբ հնարավորինս սեղմ ժամկետներում տրվել են սպառիչ պատասխաններ):

Իրականացվել են պաշտոնների տեղակալման կանոնակարգերով համապատասխան մրցույթների անցկացման, դրանցում սուբյեկտիվ գործոնների ազդեցության նվազեցման և մրցակցային գործընթացի խրախուսման աշխատանքներ. ԵՊՀ-ում թափուր աշխատատեղերի մրցույթի հայտարարությունները տարածվել են հնարավորինս լայն շրջանակներում՝ ԵՊՀ ինտերնետային պորտալում, հանրապետական մամուլում (անկախ կանոնակարգի պահանջից):

Աշխատանքներ են իրականացվել ԵՊՀ վարչական և օժանդակ պաշտոնների համակարգի սահմանման և դասակարգման կարգի մշակման, ինչպես նաև վերո-

հիշյալ պաշտոններ զբաղեցնող անձանց ատեստացիայի կարգի մշակման ուղղությամբ:

Հստակեցվել են օրենսդրությամբ սահմանված գնումների գործընթացին առնչվող նորմերի, համալսարանում գնումների իրականացման ընթացակարգի ու այդ համատեքստում ստորաբաժանումների կողմից պարտականությունների ճիշտ և ժամանակին կատարման պահանջները:

Աշխատանքներ են իրականացվել ներհամալսարանական կառավարման ընթացակարգերի կատարելագործմանն ու էլեկտրոնային կառավարման և փաստաթղթաշրջանառության համակարգերի զարգացման ուղղությամբ:

Համալսարանի ֆինանսական կառավարման հաշվետվողականությունն ու հրապարակայնությունը բարձրացնելու նպատակով ամենամյա եկամուտների ու ծախսերի նախահաշիվն ու նախորդ տարիների կատարողականը ներկայացվել է համալսարանի գիտխորհրդի քննարկմանը:

Հավելված 2-ի ներդիր 1.

**Երևանի պետական համալսարան
Ուսանողական հարցման «Տեղեկատվական հատված»-ի արդյունքներ**

2012/2013 ուստարի 1-ին կիսամյակ

Առկա ուսուցում

Հարցմանը մասնակցել է 8510 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	168	8151	8319
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	197	8117	8314

Բակալավրիատ

Հարցմանը մասնակցել է 6646 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	162	6334	6496
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	180	6311	6491

Մագիստրատուրա

Հարցմանը մասնակցել է 1864 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	6	1817	1823
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	17	1806	1823

Բակալավրիատ

1-ին կուրս

Հարցմանը մասնակցել է 2491 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	27	2400	2427
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	44	2386	2430

2-րդ կուրս

Հարցմանը մասնակցել է 563 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	13	531	544
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	18	527	545

3-րդ կուրս

Հարցմանը մասնակցել է 1883 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	67	1786	1853
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	75	1774	1849

4-րդ կուրս

Հարցմանը մասնակցել է 1709 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	55	1617	1672
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	43	1624	1667

Մագիստրատուրա

1-ին կուրս

Հարցմանը մասնակցել է 992 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել էք գնահատական (ստուգարք)	3	965	968
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	9	959	968

2-րդ կուրս

Հարցմանը մասնակցել է 872 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել էք գնահատական (ստուգարք)	3	852	855
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	8	847	855

2012/2013 ուստարի 2-րդ կիսամյակ

Հարցմանը մասնակցել է 6849 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել էք գնահատական (ստուգարք)	192	6550	6742
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	206	6535	6741

Բակալավրիատ

Հարցմանը մասնակցել է 5930 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել էք գնահատական (ստուգարք)	178	5651	5829
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	186	5646	5832

Մագիստրատուրա

Հարցմանը մասնակցել է 919 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	14	899	913
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	20	889	909

Բակալավրիատ

1-ին կուրս

Հարցմանը մասնակցել է 2267 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	54	2158	2212
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	56	2171	2227

2-րդ կուրս

Հարցմանը մասնակցել է 560 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	25	523	548
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	21	528	549

3-րդ կուրս

Հարցմանը մասնակցել է 1706 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	42	1648	1690
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	54	1631	1685

4-րդ կուրս

Հարցմանը մասնակցել է 1397 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	57	1322	1379
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	55	1316	1371

Մագիստրատուրա

1-ին կուրս

Հարցմանը մասնակցել է 919 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	14	899	913
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	20	889	909

Հավելված 2-ի ներդիր 2.

**Երևանի պետական համալսարան
Կոռուպցիայի դրսևորումների վերաբերյալ
շրջանավարտների հարցման արդյունքներ**

2013 թ.

Բակալավրիատ

Հարցմանը մասնակցել է 1859 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք ուսումնառության ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	45	1760	1805
Արդյո՞ք ուսումնառության ընթացքում բարեխոսությամբ (հովանավորչությամբ) ստացել եք գնահատական (ստուգարք)	74	1726	1800
Արդյո՞ք ուսումնառության ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	66	1735	1801

Մագիստրատուրա

Հարցմանը մասնակցել է 909 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք ուսումնառության ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	11	859	870
Արդյո՞ք ուսումնառության ընթացքում բարեխոսությամբ (հովանավորչությամբ) ստացել եք գնահատական (ստուգարք)	12	854	866
Արդյո՞ք ուսումնառության ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	16	845	861